

**Գլխավոր խմբագիր՝
ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Լրատվական գործունեությունը իրականացնող՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Հասցեն՝
0025, Երևան,
Նալբանդյան փողոց 128,
Կենտրոնական մասնաշենք,
2-րդ հարկ:
Հեռախոս՝ 593-460, 4-60

Վկայական N 03U054452:
Տրված է՝ 05.06.2002 թ.:

Հրատարակիչ՝ ՀՊՏՀ
«Տնտեսագետ» ամսագիրը լույս է ընծայվում ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից:

Մարտ-ապրիլ
2020 / N2 (708)
Տպաքանակը՝ 300
Տարածվում է անվճար:

Խմբագրակազմ

Խմբագիր՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Լրագրող՝
ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լուսանկարիչ՝
ՈԱԶՄԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խմբագրությանը տրամադրված հեղինակների նյութերում տեղ գտած փաստական անճշտությունների համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Ամսագրի նյութերն օգտագործելիս հղումը պարտադիր է:

Պատվեր՝ 534:
Ծավալը՝ 6 տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝
02.07.2020 թ.:

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչությունում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Հարցազրույց ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանի հետ.....4

«Ճգնաժամը հնարավորության վերածելով». հետբուհական առցանց կրթության արդյունքների մասին.....7

ՀՊՏՀ – 45

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ.....8

COVID-19-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Հարցազրույց բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասիստենտ, «Ամբերդի» փորձագետ Հայկ Բեջանյանի հետ.....12

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ.....14

ՀՊՏՀ – 45

ՋԵՆՅԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.....17

ՀՊՏՀ ընդունելության այս տարվա գործընթացը նշանավորվեց նոր մագիստրոսական ծրագրերի ներդրմամբ..18

ՀՊՏՀ – 45

*ՀԱՅԿ ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԱՐԵՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԺՈՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ*

Իմ ՀՊՏՀ.....20

*ԼԵՆԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐՓԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ*

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ23

ՋՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻՆ՝ ՀՈՒՍԱԼԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ.....26

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԻ ՄԱՍԻՆ

ՆԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

COVID-19 համավարկ. հաղթահարման ճանապարհին.....28

ԼՐԱՅՈՍ.....30

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ

Փորձության ու արարումի գարուն.....36

ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ.....38

ՎԱՐՔՈՒՔԱՐՔ.....39

«ԵՐԱԶՍՈՒՄ+».....40

«ԱՄԲԵՐԴ».....41

ԿԱՏԱԿԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ.....42

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ԻՇԽԱՆՈՒԴԻՆ.....43



COVID 19

**ո՛չ ՀՊՏՀ-ին, ո՛չ էլ ՀՊՏՀ-ականներին
չի կարողացել որևէ կերպ խոչընդոտել՝
լիարժեք իրականացնելու իրենց
առաքելությունը**



Արմեն Գրիգորյան



Մարտի 16-ից սկսած, երբ, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, ՀՀ Կառավարության որոշմամբ, երկրում հաստատվեց արտակարգ դրություն, ՀՊՏՀ-ն անցում կատարեց առցանց կրթության և աշխատանքի: Թե այս շրջանում ուսումնական գործընթացի վերակազմակերպման ինչ ծավալուն ու բարդ խնդիրներ են լուծվել, մեզ հետ զրույցում ներկայացնում է **ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը:**

– Պարո՞ն Գրիգորյան, արտակարգ դրության պայմաններում մեր համալսարանը արագորեն անցավ առցանց կրթության: Ինչպե՞ս կազմակերպվեց գործընթացը, ինչպիսի՞ դժվարություններ ծառայեցին և ինչպե՞ս հաղթահարվեցին:

– Թեպետ կրթական հաստատությունների գործունեության դադարեցումը սկզբնական փուլում ընդամենը 1 շաբաթով էր, սակայն արդեն մարտի սկզբին ակնհայտ էր, որ ուսումնական գործընթացը առցանց եղանակով կազմակերպելու անհրաժեշտություն է առաջանալու: Առաջին կարևոր խնդիրը փորձառության բացակայությունն էր: Իրավիճակը պարտադրում էր մի կողմից արագորեն յուրացնել և փոխանցել առցանց կրթության մատուցման տեխնոլոգիան, մյուս կողմից՝ մանրակրկիտ պլանավորել բոլոր գործողությունները, քանի որ ցանկացած սխալ կարող էր որոշիչ լինել հետագա ընթացքի համար: Առաջնային խնդիրներից էր ուսանողների համար բոլոր դասընթացների բոլոր թեմաներից ուսումնառության նյութերի հասանելիության ապահովումը, որի նպատակով գործարկվեց moodle.asue.am հարթակը և վերացվեց ՀՊՏՀ էլեկտրոնային գրադարանի աշխարհագրական հասանելիության սահմանափակումը: Ձուգահեռաբար սկսեցինք ակտիվորեն դիտարկել նաև առցանց դասընթացների վարման հնարավոր հարթակները և կազմակերպել համալսարանի պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմին մեթոդական երաշխավորու-

թյունների տրամադրումը: Առցանց կապ հաստատելու և փորձի փոխանակման նպատակով ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծեցինք ՀՊՏՀ դասախոսների փակ խումբ և տեղադրեցինք առաջին վիդեո ու տպագիր նյութերը, որոնք ներկայացնում էին տարբեր սոցիալական հարթակներում խմբեր բացելու և LIVE ձևաչափով դասախոսություններ վարելու գործիքակազմը, ինչպես նաև moodle.asue.am հարթակում ուսումնառության նյութերի վերբեռնման տեխնոլոգիան: Այս ընթացքում, ընդհանուր առմամբ, պատրաստել և մեր գործընկերներին ենք տրամադրել 20-ից ավելի նմանատիպ երաշխավորություններ՝ առցանց դասավանդման, գնահատման ու վարչարարության իրականացման տարբեր ասպեկտների վերաբերյալ: Հաջորդ կարևոր խնդիրը համակարգի շահառուների նույնականացումն էր, որն առաջնային պայման էր հատկապես moodle.asue.am հարթակում գիտելիքի ստուգման գործիքակազմի կիրառման, ինչպես նաև ums.asue.am հարթակում վարչարարության իրականացման համար: Այդ ընթացքում համալսարանի ծրագրային ապահովման բաժնի թիմը ավելի քան 5200 ուսանողի և 450 դասախոսի նույնականացման մուտքանուններ և ծածկանուններ է ձևավորել և առաքել: Ընդգծենք, որ այս աշխատանքների լիարժեք իրականացումը համալսարանին հնարավորություն ընձեռեց նաև առցանց կազմակերպել 2020-2021 ուստարվա բոլոր կրթաձևերի ընտրովի դասընթացների ընտրության, ինչպես նաև ուսանողների գիտելիքի թեստային ստուգման գործընթացները: Մյուս կարևոր խնդիրը բոլորիս հախումն գործողությունների կանոնակարգումը, ներքին շահառուների միջև առցանց կապի և համալսարանի առցանց կոլեգիալ կառավարման համակարգի ձևավորումն էր: Այս խնդիրն ամենաարագը կարգավորվեց, և արդեն առաջին շաբաթվա վերջում ունեինք դեկանների, ամբիոնների վարիչների մասնակցությամբ առցանց շփման փակ հարթակներ, որտեղ էլ ամենօրյա ռեժիմով տեղի է ունենում համալսարանի կոլեգիալ կառավարումը, կրթական գործընթացի առանցքային հարցերի քննար-

կումն ու որոշումների ընդունումը: Այս առնչությամբ պետք է արժանին մատուցել մեր բոլոր գործընկերներին՝ համալսարանի կառավարման գործում իրենց մեծագույն նպաստը բերելու և առկա ու առաջացող տարաբնույթ խնդիրներն օպերատիվորեն կարգավորելու համար: Մյուս կարևոր խնդիրը ուսանողներին առնչվող առանցքային հարցերի քննարկումներին նրանց որևէ ձևաչափով մասնակից դարձնելն էր: Պետք է նշել, որ այս ուղղությամբ համալսարանի ուսանողական խորհուրդը մեծածավալ աշխատանք կատարեց՝ կազմակերպելով տարաբնույթ քննարկումներ, տարբեր հարցերի քվեարկություններ, որոնց արդյունքներն էլ գիտական խորհրդի կողմից մշակված և ընդունված ժամանակավոր կարգավորումների հիմքում են եղել:

– Գործընթացի կազմակերպման համար ո՞ր հիմնական հարթակներն օգտագործվեցին և ինչպիսի՞ արդյունավետություն ապահովվեց:

– Առաջին օրերին գործարկեցինք ՀՊՏՀ moodle հարթակը, որում ձևավորեցինք զարմանային կիսամյակի առկա կրթածի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր 444 դասընթացների մոդուլները: Հետագայում ձևավորեցինք նաև հեռակա կրթածի 206 դասընթացների մոդուլները: Ընդհանուր առմամբ, asue.moodle.am-ը կարևոր դերակատարում ունեցավ ՀՊՏՀ առցանց կրթության գործընթացում: Ավելորդ չէ փաստել, որ մարտի 16-ից մինչ օրս հարթակի 5700 օգտատերերն ավելի քան 957.000 մուտք են ունեցել moodle.asue.am, որից 850.000-ը՝ ուսանողները: Մարտի 16-ից արդեն որոշակիորեն պատրաստ էինք որևէ ձևաչափով առցանց դասախոսություն-քննարկումներ կազմակերպելուն: Առաջին 4 օրերին LIVE ձևաչափով կարողացանք կազմակերպել ընդամենը 188 դասախոսություն: Նախնական պատկերն այնքան էլ հուսադրող չէր: Համեմատության համար՝ ապրիլի կեսից մինչ մայիսի վերջ շաբաթական միջինում 1000 առցանց դաս ենք ունեցել: Սակայն ակնհայտ էր դեկանատների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շահագրգռվածությունը առցանց կրթությանն ակտիվ մասնակցություն ունենալու գործում: Այդ ամբողջ ընթացքում մեր տասնյակ գործընկերներ ոչ միայն պարբերաբար իրենց օգնությունն էին առաջարկում մեզ, այլև ներկայացնում էին տարբեր հարթակներում քննարկումների կազմակերպման իրենց փորձն ու գիտելիքները: Տեխնոլոգիական շատ լուծումների հիմքում նաև մեր գործընկերների փոխանցած փորձառությունն է: Առաջին շաբաթվա վերջին որոշեցինք, որ ցանկացած եղանակով պետք է կարողանանք անցում կատարել դասացուցակային գրաֆիկի: Այդ փուլում դեկանատները և կուրսերի ավագները մեծածավալ աշխատանք կատարեցին՝ ցույց տալով համագործակցության հրաշալի օրինակ: Մարտի վերջին շաբաթն արդեն դասերը փորձեցինք կազմակերպել ըստ դասացուցակային գրաֆիկի, թեպետ դասաձախողումների տեսակարար կշիռը բավականին մեծ էր: Հաջորդող շաբաթվա 595 առցանց դասա-

խոսության կազմակերպումն արդեն վստահություններ չնշեց բոլորիս՝ հուշելով, որ թե՛ մենք, թե՛ կուլեկտիվը ճիշտ ճանապարհի վրա է, թեպետ պլանավորված դասերի 15%-ը, այսպես, թե այնպես, չկայացավ: Նույն ընթացքում սկսեցինք քանակական ասպեկտից անցում կատարել նաև կրթության բովանդակությանը, քանի որ բովանդակության և հատկապես LIVE դասախոսությունների մատուցման տեխնոլոգիայի առումով ռիսկեր էինք տեսնում: Պետք է նշեն, որ մեր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը արագորեն կարողացավ յուրացնել նաև moodle հարթակում նյութերի վերբեռնման, թեստերի և այլ խնդիրների պատրաստման, գիտելիքի ստուգման ու LIVE դասընթացների վարման տեխնոլոգիաները: Սակայն նախնական խորհրդատվությունները կարող էին որոշիչ լինել նաև բացասական իմաստով: Խնդիրն այն է, որ, մեր նախնական խորհրդատվությունները հիմք ընդունելով, դասախոսների մի զգալի մասն արդեն սկսել էր LIVE ձևաչափով դասախոսություններ վարել իրենց կուրսերի համար ֆեյսբուք սոցիալական ցանցում բացված փակ խմբերում: Մի մասն էլ LIVE դասախոսության էֆեկտը ստանում էր՝ Youtube LIVE Stream կազմակերպելով և ձայնագրությունները կա՛մ ֆեյսբուքի փակ խմբերում, կա՛մ Moodle հարթակի իրենց մոդուլներում զետեղելով: Քիչ չէին նաև այն դասախոսները, որոնք դասախոսություններ կամ ուսանողների հետ առցանց քննարկումներ էին փորձում կազմակերպել BigBlue Button, Google Hangouts, Google Classroom, Microsoft Teams և zoom.us հարթակներով, ինչպես նաև տարաբնույթ messenger-ներով՝ Viber, WhatsApp: Ընդհանուր առմամբ, LIVE դասախոսությունների 30-35%-ը կազմակերպվում էր առցանց կրթության ասինխրոն տեխնոլոգիայով, ինչը կրթության որակի տեսանկյունից մտահոգիչ էր: Բացի դրանից, դասախոսների ընթացքում էլ ակնհայտ էր, որ ասինխրոն տեխնոլոգիայով դասընթացների մատուցումն այնքան էլ արդյունավետ չէ՝ հիմնականում ուսանող-դասախոս ինտերակտիվ շփման բացակայության պատճառով: Խնդիրը կարգավորելու համար ապրիլի 1-ին Zoom հարթակում հանդիպում ունեցանք մեր դասախոսական կազմի հետ՝ խնդրելով ամեն դեպքում դասախոսությունները կազմակերպել այս ձևաչափով: Պետք է արժանին մատուցել նաև մեր գործընկերներին, որոնք ընդառաջ զնացին մեր խնդրանքին և փոխօգնությամբ կարողացան լուծել այս խնդիրը: Արդեն հաջորդող շաբաթվա վերջից սկսած՝ Zoom-ով վարվում էին դասախոսությունների 95-98%-ը: Սա հնարավորություն ընձեռեց ապրիլի 20-ից ամբողջ ծավալով վերականգնելու նաև սեմինար պարապմունքների անցկացման գործընթացը:

Կցանկանայի հատուկ նշել, որ այս ընթացքում համալսարանը կարողացել է կազմակերպել նաև առցանց ոչ ֆորմալ կրթություն: Այդ նպատակով #Asue-talks խորագրով հանդիպումների ընթացքում հրավիրվել են ՀՀ և արտերկրի բանախոսներ, կազմակերպվել է ոչ ֆորմալ կրթություն թվային մարքեթինգի բնագավառում, Asue Change Lab-ի թիմը

ևս ոչ ֆորմալ կրթություն է կազմակերպել ինչպես իր առաքելությանը որդեգրված ձևաչափում, այնպես էլ տարբեր բանախոսների հրավիրելու և նրանց մատուցմամբ վարպետության դասերը համալսարանի ուսանողներին հասանելի դարձնելու միջոցով:

– Առցանց կազմակերպվեցին կրթության բոլոր ձևերը, ո՞ր կրթածևում ինչպիսի՞ արդյունքներ եղան և առհասարակ այս ամիսների գործընթացն ինչպիսի՞ արդյունքներով էք ամփոփել:

– Պետք է նշել, որ այս պահի դրությամբ բաց թողնված դասերի շուրջ 95%-ը վերականգնվել է առկա կրթածևում, իսկ հեռակա կրթածևում դասընթացները վերականգնվել են 100%-ով: Մեր գործընկերները հավելյալ պարապմունքներով հիմնականում լրացրել են առաջին շաբաթների բացը: Մինչդեռ, պետք է նշել, որ նախկինում ուսումնական գործընթացում ձախողված դասերի վերականգնման պրակտիկա առհասարակ չի եղել: Սա հստակորեն կարող ենք ձեռքբերում դիտարկել: Մարտի 16-ից մինչ օրս բոլոր կրթածևերում կազմակերպվել են ավելի քան 8800 առցանց դասախոսություն և սեմինար պարապմունք: Ուրախալի է, որ ուսանողների ակտիվությունն ու սեմինար պարապմունքներին պատասխաններն էլ օֆլայն ռեժիմից պակաս չեն եղել, ինչը ներկայումս արձանագրում ենք տարբեր դասընթացների ամփոփիչ տեղեկագրերի մշտադիտարկման և moodle հարթակում ուսանողների թեստային քննությունների արդյունքների ամփոփման հիման վրա: Սա մեր պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ամենանշանակալի ձեռքբերումն է, ինչը փաստում է, որ երկուստեք արժևորվել է գիտելիքը:

– Ուսումնական տարեվերջ է, և քննական գործընթացները նույնպես առցանց են: Ինչպե՞ս են ընթանում կիսամյակային քննությունները:

– Քննությունները դեռ չեն մեկնարկել, բայց այս պահին արդեն ընթացքի մեջ են ստուգարքները, որոնք ընթանում են բնականոն հունով: Բոլոր ամբիոնները, որոնք գիտելիքի ստուգումն իրականացրել են թեստավորմամբ, moodle համակարգում ձևավորել են գիտելիքի թեստային ստուգման բազաներ, բանավոր հարցումն իրականացվում է Zoom-ի տեսակոնֆերանսներով: Համալսարանը մշակել և ընդունել է գիտելիքի ստուգման գործընթացի և վարչարարության ժամանակավոր կարգավորումներ, ums.asue.am հարթակում ձևավորվել են բանավոր քննությունների քննական տոմսերը, ուսանողների գնահատման ամփոփաթեթերը: Հատուկ ուզում են շեշտել, որ դեկաններն ու դեկանատները, e-Buh-ի թիմը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինն ու էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնի թիմը արել են հնարավորն ու անհնարինը սեղմ ժամկետներում համակարգը մշակելու, փորձարկելու և լիարժեք գործարկելու ուղղությամբ, ինչի պայմաններում

համակարգի անգործության միակ պատճառ կարող է լինել լայնաշերտ ինտերնետի հասանելիության խափանումը, ինչի ակամատեսը եղանք մայիսի 27-ին:

– Թեև ամփոփիչ ատեստավորման գործընթացը դեռ չի ավարտվել, ամեն դեպքում, այս պահի դրությամբ ինչպե՞ս կգնահատեք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության փուլը:

– Նախքան ամփոփիչ ատեստավորման արդյունքներին անդրադառնալը՝ նշենք, որ համալսարանը կազմակերպել է նաև շուրջ 1410 ուսանողների փորձառությունների առցանց պաշտպանությունը: Նրանցից 775-ը՝ առկա բակալավրիատի, 360-ը՝ հեռակա բակալավրիատի, իսկ 275-ը՝ առկա մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողներ են: Պաշտպանության ամբողջ փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվել է ամբիոնների համար բացված gmail հասցեներով, որոնց google disk-երի հիշողություններում էլ պահպանվում են բոլոր առցանց պաշտպանությունների տեսաձայնագրությունները: Առհասարակ, ինչպես փորձառությունների պաշտպանության, այնպես էլ ավարտական աշխատանքների ներկայացման ու հրապարակային պաշտպանության գործընթացները լիարժեք փաստաթղթավորվել են և արտացոլված են ինչպես ամբիոնների mail հասցեների միջև փոխադարձ գրառություններում, այնպես էլ ums.asue.am հարթակում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամները հարթակում տեսնում են ուսանողների վերբեռնված աշխատանքները, դրանց գրախոսությունները և Zoom տեսակոնֆերանսով պաշտպանությունների ավարտից հետո իրականացնում են գնահատումը, որի ամփոփիչ տեղեկագրերը նույնպես պահպանվում են հարթակում: Մինչ այս պահը, արդեն իսկ կազմակերպվել են առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի 102 առցանց պաշտպանություններ: Առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 1050 ուսանողներից շուրջ 900-ը արդեն ՀՊՏՀ շրջանավարտներ են: Առկա կրթածևի պաշտպանությունները կավարտվեն հունիսի 5-ին: Պետք է նշել, որ այստեղ էլ, ինչպես գործընթացը, այնպես էլ արդյունքները առավելագույնս մոտ են իրական համալսարանական կրթության օրակարգին, ինչը փաստում է որ և՛ նախապատրաստական մեծածավալ աշխատանքը, և՛ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքը բավականաչափ արդյունավետ են եղել, իսկ COVID 19 ո՛չ ՀՊՏՀ-ին, ո՛չ էլ ՀՊՏՀ-ականներին (մեր գործընկերներին և ուսանողներին) չի կարողացել որևէ կերպ խոչընդոտել լիարժեք իրականացնելու իրենց առաքելությունը:

– Շնորհակալություն կարևոր պարզաբանումների համար:

Զրույցեց ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ



Արտակարգ դրության պայմաններում ՀԳՏՀ-ում անխափան է իրականացվել նաև հետբուհական կրթությունը: «Տնտեսագետի» հետ գրույցում ասպիրանտուրայի բաժնի պետ Եվգենյա Բազինյանը նշեց, որ կրթության ոլորտն առավել խոցելիներից է, որը ցանկացած ոչ բնականոն գործընթացի արձագանքում է արագորեն և դրա ազդեցությունը կրում առավել խորը և տևական: *«Կրթության շարունակականությունը պետք է ապահովվի՝ անկախ իրավիճակային պայմաններից, նպաստող կամ խոչընդոտող գործոններից: Հետբուհական ողջ դասապրոցեսը ՀԳՏՀ-ում, կարելի է ասել, ընթացել և բնութագրվում է մեկ՝ «ճգնաժամը հնարավորության վերածելով» կարգախոսով»*, - ասաց նա:

«Ճգնաժամը հնարավորության վերածելով». հետբուհական առցանց կրթության արդյունքների մասին

Անդրադառնալով հետբուհական կրթության կազմակերպմանը՝ Եվգենյա Բազինյանն ասաց. *«Սկսնակ հետազոտողների համար ստեղծված իրավիճակը կամային հատկանիշների դրսևորման պարտադրված, սակայն, հիանալի հնարավորություն է. արդարացումներ և մեղավորներ փնտրելու վրա ժամանակ չվատնելու փոխարեն հետազոտական ունակությունների զարգացման, իրենց ընտրած մասնագիտացումներում կատարելագործվելու, հետազատման լիքների մասին մտորելու ժամանակ է: Ի պատիվ մեր ասպիրանտների և հայցորդների՝ փաստեն, որ հարկադրված փոփոխություններին արագ ու անխոչընդոտ արձագանքն ու առավելագույնս ներգրավվածությունը խոսում են նրանց ոչ կադապարված լինելու և սահմանված ստանդարտներից դուրս տրամաբանելու ունակության մասին, ինչը չափազանց կարևոր է գիտական նորույթի որոնման դժվարին ճանապարհին»:*

Ասպիրանտուրայի բաժինը հետբուհական կրթության առցանց կազմակերպման մասին անցնող շրջանում գրուցել է ՀԳՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Հախվերդյանի և կառավարման ամբիոնի ղոցենտ, տ.գ.թ. Սարգիս Ասատրյանցի հետ: Դավիթ Հախվերդյանը առցանց գործընթացին ասպիրանտների ներգրավվածությունը և մոտիվացիան գնահատել է գերազանց՝ միաժամանակ նշելով. *«Որպես միջանկյալ գնահատում՝ կարելի է հավաստել, որ,*

որպես ստեղծված իրավիճակին այլընտրանք, իհարկե արդյունավետ է: Ավելին, կարծում եմ, համավարակային ճգնաժամի վերացումից հետո նույնպես այս գործիքակազմը պարբերաբար կօգտագործվի ամենատարբեր խորհրդատվություններ, կենդանի շփման անհնարինության դեպքում որոշակի հարցեր քննարկելու համար: Այդուհանդերձ, այն որպես կենդանի դասախոսությանն այլընտրանք դիտարկելը, իհարկե, ճիշտ չէ՝ ասպիրանտի և ուսանողի սոցիալականացման տեսանկյունից (որը պակաս կարևոր չէ) հեռավար կրթությունը արդյունավետությամբ էապես զիջում է կենդանի դասախոսությանը: Պատկերավոր ասած, հետազայում այն ոչ թե պետք է փոխարինի, այլ լրացնի կենդանի դասախոսությունները»:



Սարգիս Ասատրյանցը կարծիք է հայտնել, որ համալսարանական լսարանային կրթածն առցանց տիրույթ փոխադրելն առավել անցնցում կարող է իրականացվել հենց ասպիրանտական կրթաստիճանում, քանի որ այդտեղ համեմատաբար փոքրաթիվ սովորողներ են, որոնք տիրապետում են տեխնոլոգիական նոր գործիքներին և իրենց դասընթացների ընտրության հարցում ունեն բավական բարձր գիտակցություն: *«Կարծում եմ՝ առցանց ուսուցման գործիքակազմը ասպիրանտական կրթաստիճանում կարելի կլինի կիրառել նաև արտակարգ դրության ավարտից հետո: Ինչպես արդեն նշեցի, սովորողների փոքրաթիվ լինելն այս կրթածնին առցանց ուսուցման ձևաչափով մեծ ճկունություն և մատչելիություն է հաղորդում»*, - նշել է նա:

Եվգենյա Բազինյանը, մեզ հետ գրույցում ամփոփելով ասպիրանտական կրթության իրականացման այս փուլը, հայտնեց, որ մայիսի վերջին հայտարարվել է առկա ասպիրանտուրայի ընդունելություն, իսկ հունիսի վերջին կկայանան քննությունները: Բաժնի պետը հավատացած է, որ գործընթացի արդյունքում ՀԳՏՀ ասպիրանտուրան կհամալրվի ազատամիտ և նորի առջև մշտապես բաց գիտնականներով:

Հավելենք նաև, որ բաժնին իր շահառուների հետ ավելի սերտ աշխատելու համար էջ է բացել ֆեյսբուքում:

ԳՈՅԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

1983 ՁՎԱԿԱՆ

Դեկտեմբերի 7-10 Տաշքենդում տեղի է ունենում «Ուսանողը և գիտատեխնիկական առաջընթացը» համամիութենական օլիմպիադայի 2-րդ փուլը՝ էկոնոմիկայի և արդյունաբերության կազմակերպման բաժանմունքի գծով: Մեր ուսանողներն արժանանում են պատվավոր 3-րդ և 4-րդ կարգի մրցանակների:

Լենինգրադի Ն. Վոզնեսենսկու անվան ֆինանսատնտեսագիտական ինստիտուտի «Սովետսկի էկոնոմիստ» բազմատպաքանակը էջ է հատկացնում «Տնտեսագետին», որը կրում է «Մեր բարեկամների մոտ» խորագիրը: Ձեռնդրել է ինստիտուտի ռեկտոր Շավարշ Մարգարյանի հոդվածը:

ԽՄՄՍ ԺՏՆՑ գլխավոր կոմիտեի որոշմամբ՝ աշխատանքի էկոնոմիկայի և գիտական կազմակերպման ամբիոնի վարիչ Հրանտ Պողոսյանը պարգևատրվում է արծաթե, իսկ նույն ամբիոնի դոցենտ Բորիս Բաբայանը՝ բրոնզե մեդալով:

Ինստիտուտը ստեղծագործական համագործակցության պայմանագրեր է կնքում Կ. Ցետկինի անվան թիվ 1 կարի արտադրական միավորման գլխամասային ֆաբրիկայի, Երևանի մետաքսի կոմբինատի, հանրապետական «Էրեբունի» նորաձևության տան հետ:

Տեղի է ունենում անվանի արձակագիր Մուշեղ Գալշոյանի հիշատակին նվիրված գրական-երաժշտական երեկո:

Ամփոփվում են նոյեմբեր-դեկտեմբերին անցկացված ինստիտուտի ուսանողական սպարտակիադայի արդյունքները (5 մարզաձևի գծով), որին մասնակցել են բոլոր ֆակուլտետների մարզիկ-մարզուհիները:



«Փարվանա» ինտերնացիոնալ բարեկամության ակումբը ստեղծագործական, մշակութային, աշխատանքային բարեկամության սերտ կապեր էր հաստատել այլ երկրների բուհերի երիտասարդական կազմակերպությունների հետ: Մեր բուհի 15 ուսման առաջավորներ հյուրընկալվել են Լենինգրադի Ն. Վոզնեսենսկու անվան ֆինանսատնտեսագիտական ինստիտուտում:

Ապրիլի 1-ին բուհի ղեկավարությունը, ղեկաններն ու ամբիոնի վարիչները, դասախոսները, մասնագիտական կողմնորոշման նպատակով, հանդիպում են ունեցել մայրաքաղաքի 20 միջնակարգ դպրոցների (մաթեմատիկական թեքումով) ավարտական դասարանների աշակերտների ուսուցչական կոլեկտիվների հետ:

Մարտի 25-ից ապրիլի 25-ը հայտարարված էր կանաչապատման և հարդարման միամսյակ: Ուսանողների և աշխատակիցների ջոկատը մեկնում է Դիլիջան՝ մարզաառողջարարական ճամբար: Տնկում են 100-ից ավելի պտղատու և դեկորատիվ ծառեր, մաքրում են լողավազանը, վազքուղիներն ու մարզահրապարակը:

Անցկացվում է «Ուսանողական գարուն – 83» փառատոնը:

Շահագործման է հանձնվում Քանաբեռ-Ձեյթուն վարչական շրջանի մասնաշենքի մարզադահլիճը՝ հագեցած մարզասարքերով ու գույքով:

Ապրիլի 23-ին ընդհանուր տեխնիկական առարկաների ամբիոնը հանդիպում էր կազմակերպել Լենինգրադի Թեթև և տեքստիլ արդյունաբերության ինստիտուտի դոցենտ Մարկ Գոլուբևի հետ:

Մայիսին ավարտվում է ֆինանսահաշվային ֆակուլտետի ուսանողական անդրամիկ սպարտակիադան, ամփոփվում են արդյունքները:

ՀԱՄԽ նախագահության որոշմամբ՝ արհիսմբերում «Ակտիվ աշխատանքի համար» կրծքանշանով են պարգևատրվում տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

Դասախոսական ակտիվի հյուրերն է Մոսկվայի պետական համալսարանի արդյունաբերական էկոնոմիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գևորգ Եղիազարյանը:

Կարմիր խաչի ընկերության Մյանհիկյանի շրջանային կազմակերպության հերթական բուժքույրական մրցումներում, որին մասնակցում էին 16 կազմակերպությունների թիմեր, մեր ուսանողուհիները զրավում են առաջին տեղը:


Ֆինանսահաշվային ֆակուլտետի կազմակերպած երեկոյի հյուրերն են անվանի ֆուտբոլիստներ Խ. Գովհաննիսյանը, Ն. Պետրոսյանը, ստորջրյա լողի աշխարհի ռեկորդակիր Շ. Կարապետյանը, գեղասահորդ Ս. Մխիթարյանը:

Հյուր են Վառնայի Դ. Բլագոևի անվան ժողտնտեսության բարձրագույն ինստիտուտի նյութատեխնիկական մատակարարման էկոնոմիկայի և կազմակերպման ամբիոնի որակավորման բարձրացման մասնագետները:

Հյուր է կոմիտասյան երգերի անզուգական կատարող Խորեն Պալյանը:

Հյուր է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հաշվապահական հաշվառման և տնտեսական գործունեության վերլուծության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Շերեմետը:

«Քաղաքական երգ – 82» հանրապետական փառատոնի լավագույն կոլեկտիվ է ճանաչվում ինստիտուտի «Ավանգարդ» վոկալ-գործիքային համույթը և արժանանում է դափնեկրի դիպլոմի:



ՀԽՄԶ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիան, լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեն, «Բուրեվեստնիկ» ԿՍԸ կենտրոնական խորհուրդը «Տնտեսագետ» ճամբարին շնորհում են 1-ին մրցանակ:

ՀԽՄԶ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիան ռեկտորների խորհրդի աշխատանքներում ակտիվորեն համագործակցելու համար շնորհակալություն է հայտնում ռեկտոր Շ. Սարգսյանին և պրոֆեսոր Ա. Ավանեսյանին:


Գեկտեմբերի 7-10 Տաշքենդի ժողտնտեսության ինստիտուտում «Ուսանողը և գիտատեխնիկական առաջընթացը» օլիմպիադայի համամիութենական փուլին մասնակցում է հանրապետական փուլում մրցանակային տեղ չափած մեր բուհի 4 ուսանող:

Նոյեմբերի 29-ին, մեծ հանդիսասարահում, բուհի հասարակական-քաղաքական պրակտիկայի խորհրդի նախաձեռնությամբ, տեղի է ունենում ցերեկույթ՝ նվիրված ռուսական դասական պոեզիային և երաժշտությանը: Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի ստեղծագործությունների ընթերցմամբ է հանդես է գալիս Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի դերասանուհի Վալենտինա Դավթյանը:

Նոյեմբերի 29-ին մի խումբ ուսանողներ և դասախոսներ այցելում են Էջմիածին Բաֆֆու Խենթի գերեզմանին և հյուրընկալվում քաղաքային մշակույթի տանը:

Տեխնիկական առարկաների ամբիոնի հյուրերն է Լենինգրադի Կիրովի անվան թեթև և տեքստիլ արդյունաբերության ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Ստոցկին, դասախոսում է պրոֆեսորադասախոսական կազմի, 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար:

Ուսանողներն ունկնդրում են ճանաչված ակնարկագիրներ Մարգո Դուկասյանին և Գրիգոր Ջանիկյանին:



1984 ԹՎԱԿԱՆ

ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիայի և լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահության որոշմամբ՝ մեր բուհին շնորհվում է 1-ին կարգի դիպլոմ:

Արհկոմիտեի ուղեգրերով 31 ուսանող «Բարեկամության գնացքով» ճամփորդում են ԽՍՀՄ 8 քաղաքներում:

Ըստ համամիութենական օլիմպիադայի արդյունքների՝ 6 ուսանողի աշխատանք ներկայացվում է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և ՀԼԿԵՄ կենտկոմի մեդալների, իսկ 14 ուսանողի աշխատանք՝ դիպլոմների:

Կոլեկտիվը 3-րդ անգամ անընդմեջ արժանանում է ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության կենտրոնական կոմիտեի դիպլոմի:

Մարտի 24-ին ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետում հիմնադրվում է «Առևտրի մասնագետների ակումբը»՝ նպաստելու համար ուսումնական գործընթացին, ուսումնական և արտադրական փորձառության անցկացմանը:

Քաղաքատնտեսության ամբիոնի հյուրն է միութենական «էկոնոմիկա» հրատարակչության գլխավոր խմբագիր Գ. Մազինը, հրավիրվել է մասնակցելու նստաշրջանի:

Հյուր է աշխարհահռչակ ծանրամարտիկ Յուրի Վարդանյանը:

Հյուր է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետի քաղտնտեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վ. Ռադանը:

«Պատերազմի և խաղաղության հիմնախնդիրները» թեմայով զեկուցում է կարդում հեռուստատեսության և ռադիոյի քաղաքական հաղորդումների մեկնաբան, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը:

Հուլիսի 24-ին տեղի է ունենում ինստիտուտի խորհրդի ընդլայնված նիստ, ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լ. Ղարիբջանյանը ներկայացնում է պրոֆեսոր Լևոն Վարդանյանին՝ որպես ինստիտուտի նորանշանակ ռեկտորի:

Նոյեմբերի 11-ին Նորքի 6-րդ զանգվածում դրվում է ինստիտուտի ընդարձակ համալիրի հիմքը:

Տաշքենդում անցկացված «Ուսանողը և գիտատեխնիկական առաջադիմությունը» համամիութենական օլիմպիադային մասնակցում է մեր բուհի 2 ուսանող:

1985 ԹՎԱԿԱՆ

Հյուր է մեծանուն քնարերգու Զովհաննես Շիրազը: Երեկոյի մասնակիցներն են բանաստեղծի տարիների բարեկամ Սամվել Մուրադյանը, ասմունքող Վլադիմիր Աբաջյանը, Ալեքսանդր Ադամյանը, բանաստեղծի զավակները:

Ինստիտուտում հանրահավաք է նվիրված Գիտելիքի օրվան, միաժամանակ նշվում է ինստիտուտի հիմնադրման 10-ամյակը:

«Տնտեսագետ» թերթի խմբագրության հյուրերն են Սյասնիկյանի շրջանի բուհական թերթերի խմբագիրներն ու պատասխանատու քարտուղարները:

Մայիսի 19-ին մեծ հանդիսասարահուն տեղի ունեցավ գիտագործնական ընդլայնված խորհրդակցություն՝ նվիրված բուհ-արտադրություն կապերի զարգացմանը:

Ծաղկածորում հանրապետության բուհերի դահուկային մարզածների սիրահարները մասնակցում են «Բուրեվեստնիկ» կամավոր մարզական ընկերության կազմակերպած մրցումներին: Ինստիտուտի 16 հոգանոց թիմը լեռնադահուկային և դահուկավազքի մրցումներին մասնակցել է Լ. Սամվելյանի ղեկավարությամբ:

1986 ԹՎԱԿԱՆ

Մարտի 21-ին մեկնարկում է Ժողովրդական տաղանդների ստուգատես-փառատոնը:


Հյուր են մեծանուն բանաստեղծ Համո Սահյանը, նրա պոեզիայի երկրպագուներ՝ գրականագետ Ֆելիքս Մելոյանը, երգչուհի Մելանյա Աբովյանը, ասմունքող Սվետլանա Խանումյանը:

Գիտահետազոտական աշխատանքով զբաղվող ուսանողների թիվը հասել է 244-ի, նույնքան ուսանող ընդգրկված է տնտայամնագրային աշխատանքներում:

Հյուր է վաստակաշատ ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը: Ներկաները ֆիլմի ցուցադրությամբ, լուսապատկերների և հետաքրքրական զրույցի միջոցով ծանոթանում են Արևմտյան Հայաստանի պատմաճարտարապետական կոթողներին:

1987 ԹՎԱԿԱՆ

Հյուր են աշխարհահռչակ մարզիկներ, ծանրամարտիկ Յուրի Վարդանյանը և ստորջրյա լողորդ Շավարշ Կարապետյանը:



Տեղի է ունենում հանդիպում ԽՍՀՄ առևտրի նախարարության աշխատակազմի վարչության պետ Ե. Դանիլինի հետ:

ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիան, լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահությունը, ամփոփելով նախարարության համակարգի բուհերի միջև 1986 թ. սոցմրցության արդյունքները, ի թիվս այլոց, հաղթող է ճանաչում նաև մեր ինստիտուտի կոլեկտիվին և պարգևատրում 3-րդ կարգի դիպլոմով:

Հանրապետական ուսանողական խաղերում ինստիտուտի մարզիկները զբաղեցնում են պատվավոր 4-րդ տեղը:

Հյուր են մարզական աշխարհի մեծերը՝ Յուրի Վարդանյանը և Ռոբերտ Էմմիյանը:

Հայկական հեռուստատեսության «Երևանը և երևանցիները» ծրագրի հյուրն է ինստիտուտի «Մասունք» ազգագրական համույթը:

Հյուր են Մոսկվայի ֆինանսների ինստիտուտի դեկան Վ. Ջայցևը և Պլեխանովի անվան Ժողովրդական ինստիտուտի դեկան Վ. Սամարինը:

Աշխատանքի էկոնոմիկայի և գիտական կազմակերպման ամբիոնը բարձրորակ մասնագետներ պատրաստելու, ինչպես նաև փորձառությունների պատշաճ կազմակերպման համար արժանացել է Վոլգյան ավտոգործարանի մետալուրգիական արտադրության աշխատանքի և աշխատավարձի Ա. Կրասնոկուտով-սկու ստորագրությամբ պատվոգրի:

Աշխատանքի էկոնոմիկայի և գիտական կազմակերպման ամբիոնի և «Լույս» արտադրական միավորման ջանքերով ստեղծվում է առաջին ուսումնագիտաարտադրական համալիրը:

Արտադրական փորձառության հետագա զարգացման և դրա դերի բարձրացման նպատակով հրավիրվում է անդրկովկասյան հանրապետությունների տնտեսագիտական բուհերի և ֆակուլտետների դեկանների, առաջատար գիտնականների գիտագործնական նստաշրջան:

Պատրաստեց Արմինե ՎԱՐԴԱՆՅԱՆԸ
Շարունակելի



ՃԳՆԱԺԱՄԵՐ

ԵՊԵՂ ԵՆ, ԿԱՆ ԵՒ ԿՎԻՆԵՆ, ԻՍԿ ՎԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԴՐԱՆՉ ԴԻՄԱԳՐՈՎԵՂ



Հայկ Բեքսյան



COVID-19 համավարակը մոլեգնում է՝ պատերազմի մեջ ներքաշելով մարդկանց, պետությունները: Այն ներխուժել է մեր առօրյա՝ «ձեռնոց նետելով» մեր ներկայիս ու ապագային, համընդհանրական մարտահրավեր դառնալով աշխարհաքաղաքական ու տնտեսական զարգացումներում: Ճգնաժամային այս օրերը հանգիստ չեն տալիս մեր մտքերին, հարցերի տարափում պատասխաններ ենք փնտրում, պատասխաններ, որոնք կօգնեն մեզ իրավիճակը հասկանալ և ընդունել, հարմարվել, խնդիրներ լուծել՝ պահպանելով պայքարելու մեր կամքն ու լավատեսությունը:

Կարծում ենք՝ բոլորիս և հատկապես՝ տնտեսագետներին հուզող բազմաթիվ հարցերում տնտեսագիտական ուղղվածությունը մեծ տեսակարար կշիռ ունի, ուստի «Տնտեսագետը» գրույցի է հրավիրել տնտեսագիտության թեկնածու, բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասիստենտ, «Ամբեր» հետազոտական կենտրոնի փորձագետ **Հայկ Բեքսյանին**:

– Պարո՛ն Բեքսյան, մայիս ամսվա դրությամբ ինչպե՛ս կբնութագրեք Հայաստանի տնտեսական իրավիճակը:

– Արդեն շուրջ 3 ամիս է, ինչ ՀՀ տնտեսությունն իր վրա զգում է COVID-19 համավարակի բացասական ազդեցությունները, և եթե փորձենք այս պահի դրությամբ ամբողջացնել պատկերը, ապա ունենք բավականին մտահոգիչ իրավիճակ, մասնավորապես՝ մարտ և ապրիլ ամիսների համար արդեն իսկ արձանագրված է զգալի տնտեսական անկում: Տնտեսական ակտիվության ցուցանիշը մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է շուրջ 5%-ով, իսկ ապրիլին՝ 17,1%-ով: Սրան կգումարվի նաև մայիս ամսվա կանխատեսվող անկումը, որը ևս բավական «ցավոտ» կլինի, և, ըստ էության, արդեն կիսամյակի արդյունքներով, էապես խնդրահարույց իրավիճակ կունենանք: Կախված այն հանգամանքից, թե որքան շուտ կհաղթահարենք առողջապահական ճգնաժամը, այնքան շատ ժամանակ կունենանք այս ամիսներին կորցրած հնարավորությունները վերականգնելու: Սակայն սա չի նշանակում, որ պետք է հուսալքվել և ձեռքերը ծալած նստել: Տնտեսությունը դիմամիկ գործընթաց է, և բարեհաջող տնտեսական զարգացումների, ճիշտ պետական քաղաքականության և մեծ ջանքերի ներդրման շնորհիվ հնարավոր է հասնել այնպիսի արդյունքի, որ այս ճգնաժամի հետևանքները մեր տնտեսության և հատկապես հասարակության համար հնարավորինս մեղմվեն:

– Ըստ Ձեզ՝ որո՞նք են առկա և սպասվող հիմնական տնտեսական դժվարությունները, ո՞ր ոլորտները, տնտեսական գործունեության ո՞ր ձևերն են առանձնապես վտանգված:

– Տնտեսական զարգացումների տեսանկյունից, առավել վտանգված են այն ոլորտները, որոնք ամփոփում են կապ ունեն սպառողների հետ, դրանք են ծառայությունները, այդ թվում՝ զբոսաշրջություն, հյուրանոցային և հանրային սննդի ծառայություններ, առևտուր և այլն: Սակայն այս ամիսների տնտեսական սահմանափակումները զգալիորեն «խցել են» նաև մյուս ոլորտների զարգացումը, և ապրիլի արդյունքներով տնտեսության մեջ բոլոր ուղղություններով արձանագրել ենք նշանակալի անկում: Սակայն եթե մի շարք ոլորտներում տնտեսական սահմանափակումների վե-

րացմամբ հնարավոր է վերականգնել կորսված հնարավորությունները և արագ անցում կատարել բնականոն ռեժիմի, ապա, օրինակ, զբոսաշրջության ոլորտը դեռ երկար կզգա համավարակի բացասական ազդեցությունը:

– Հետագա ի՞նչ միտումներ են կանխատեսվում, կա՞րողոք ճգնաժամի խորացման վտանգ:

– Որքան էլ ցավալի է խոստովանել, տնտեսական ճգնաժամը դեռ մոր է թափ հավաքում, և բացասական զարգացումները դեռևս առջևում են: Իհարկե, պետք է հուսալ, որ խոր անկումը, որը համաշխարհային տնտեսության մեջ զնահատվում է ավելի խորը, քան 2008 թվականի ճգնաժամի դեպքում էր, արագ կվերականգնվի, սակայն չպետք է մոռանալ նաև, որ փոքր և զարգացող երկրները, այդ թվում՝ Հայաստանը, իրենց վրա կզգան նաև երկրորդային ալիքի էֆեկտը: Ինչ վերաբերում է կանխատեսումներին, ապա աշխարհի առաջատար վերլուծական կենտրոնները մշտապես թարմացնում են իրենց կանխատեսումները՝ կապված համավարակի ազդեցության և դրանից բխող տնտեսական ազդակների հետ: Դրանցից առավել թարմ և ամբողջական է ԱՄՆ-ի հրապարակած «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ» զեկույցը, որը ևս հաստատեց, որ համաշխարհային տնտեսության անկումը 2020 թ. ավելի խորն է լինելու, քան 2009-ին՝ 3%՝ 1.7%-ի դիմաց: Ըստ զեկույցի՝ զարգացած երկրներում անկումը կկազմի 6.1%, եվրոպական զարգացող երկրներում, ինչպես նաև Լատինական Ամերիկայի և Կարիբյան ծոցի երկրներում՝ 5.2-ական %, ասիական զարգացող երկրներում աճը կդանդաղի մինչև 1%: Եվ սա այն դեպքում, եթե աշխարհը արդեն տարվա երկրորդ կիսամյակ մտնի՝ համավարակը հաղթահարած, իսկ երկրների կառավարություններն իրականացնեն պլանավորված հակազդող ֆինսկալ միջոցառումներ:

Եթե անդրադառնանք Հայաստանի վերաբերյալ գնահատականներին, ապա, թերևս, ուշադրության է արժանի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու նախագծի հիմքում դրված ՀՀ Կառավարության գնահատականը, որը 2020 թ. համար կանխատեսում է ՀՆԱ-ի 2 տոկոսանոց անկում, ինչը կհանգեցնի նաև այս տարվա համար իրականացված մնացած գնահատականների վերահաշվարկին: Նկա-

տեմ, որ այս թեման դուրս չէ նաև մեր համալսարանի հետազոտությունների շրջանակներից: Մասնավորապես, ապրիլ ամսին հրապարակված «Ամբերդ» տեղեկագրի հեթոթական համարն ամբողջապես նվիրված էր համավարակի տնտեսական ազդեցությանը: Տեղեկագրում բազմաթիվ հեղինակներ, այդ թվում՝ ես, ուսումնասիրություններ էին ներկայացրել, և իմ կողմից իրականացրած գնահատումների համաձայն՝ տնտեսական անկումը 2020 թ., նախորդ տարվա համեմատ, կկազմի շուրջ 5%, եթե, իհարկե, հաջողվի հունիսից վերադառնալ բնականոն ռեժիմի: Միաժամանակ պետք է նշեմ, որ այս բոլոր կանխատեսումները բավականին մեծ անորոշություններ են պարունակում, և դրանք հնարավոր կլինի վերջնականապես ճշգրտել միայն առողջապահական ճգնաժամի հաղթահարումից և դրա տրնտեսական ազդեցության հստակ գնահատումից հետո:

– Բավարար ՞ են արդյոք այսօր ձեռնարկվող միջոցառումները, տնտեսական քաղաքականության մեջ ի նչ հավելյալ քայլերի անհրաժեշտություն եք տեսնում:

– Հակաճգնաժամային միջոցառումներն իրենց բովանդակությամբ երկու հիմնական ուղղվածություն ունեն՝ սոցիալական և տնտեսական աջակցություն: Խոսելով սոցիալական աջակցության փաթեթի մասին պետք է հաշվի առնենք, որ մենք ապրում ենք զարգացող երկրում, որտեղ կա շուրջ 17 տոկոսանոց գործազրկության և շուրջ 30 տոկոսանոց աղքատության մակարդակ, հազարավոր արտագնա աշխատողներ, որտեղ նվազագույն կենսաթոշակը 50%-ով ցածր է նվազագույն սպառողական զամբյուղից: Սա նշանակում է, որ անգամ մինչև ճգնաժամային ժամանակահատվածը, մեր երկիրն առանց այն էլ ուներ բավականաչափ սոցիալական խնդիրներ և անելիքներ, հետևաբար ասել, որ հնարավոր է սոցիալական այս կամ այլ ծրագիր, որն ամբողջապես կարող է լուծել այս ուղղվածության խնդիրները, խելամիտ չէմ համարում: Սոցիալական աջակցության փաթեթները լավագույն դեպքում մեղմող ազդեցություն կարող են ունենալ, և սահմանափակվում են այն ֆինանսական ռեսուրսներով, որոնք պետությունն ի զորու է այս պայմաններում ներգրավել:

Ինչ վերաբերում է աջակցության ծրագրերին, որոնք պետք է նպատակ հետապնդեն տնտեսությունը «շնչահեղձությունից» փրկելու, ապա միայն վերջիններիս քանակը, բազմազանությունը և ընթացքում կատարված փոփոխություններն արդեն հուշում են դրանց հապճեպ և ոչ լիարժեքորեն մտածված լինելու մասին: Ավելին, իրականացվող ծրագրերի գերակշիռ մասն իրենց բովանդակությամբ ներդրումային աջակցության ծրագրեր են՝ արտոնյալ պայմաններով բիզնեսի վարկավորման տեսքով, որոնք առավել արդյունավետ են հետճգնաժամային իրավիճակներում: Պատմական զարգացումները և տարբեր երկրների վարած քաղաքականությունների փորձը ցույց է տալիս, որ տնտեսությունը «շնչահեղձությունից» փրկելու համար ավելի նպատակահարմար են այն միջոցառումները, որոնք միտված են տնտեսության մեջ իրացվելիության բարձրացմանը: Դա հնարավորություն կտա «շնչահեղձությունից» փրկել տնտեսության մեջ դեռևս «կենսունակ ձկներից», որից հետո նրանց կարելի էր «կերակրել» վարկային միջոցներով և այդպիսով հիմքեր ստեղծել տնտեսության արագ վերականգնման համար:

– Կարելի ՞ է ասել, որ համավարակը տնտեսության մեջ որոշակի դրական վերափոխումներ պարտադրեց, օրինակ՝ առցանց առևտրի աշխուժացումը: Կա՞ն արդյոք դրական այլ

շրջադարձներ և:

– Ես հաճախ եմ ուսանողներիս ասում՝ անճարությունն է ծնունդ հնարամտություն: Համավարակը շատերին դրեց անելանելի դրության մեջ, և այդ ստեղծված «անճար» իրավիճակում շատ տնտեսավարող սուբյեկտներ կարողացան դրսևորել առանձնահատուկ հնարամտություն: Դա հիմնականում դրսևորվեց ՏՏ ոլորտի հետ համակցման ձևաչափով, և սկսեց զարգանալ բիզնեսի թվայնացումը: Եթե համեմատական անցկացնեմ զարգացած երկրների հետ, ապա պետք է մատնանշեմ որ սա ոչ թե առաջանցիկ զարգացում էր, այլ նախկինում չարած աշխատանքի կատարում: Օրինակ, նախքան այս համավարակը շատ բիզնես-սուբյեկտներ, որոնք հատկապես բավարար շրջանառության ծավալներ ունեին, հրաժարվում էին բիզնեսի թվայնացումից՝ դա համարելով լրացուցիչ ծախս, սակայն համավարակը ստիպեց բոլորին հասկանալ, որ թվային օրակարգը մեր օրերում առաջնային տեղ պետք է զբաղեցնի: Ինչ վերաբերում այլ դրական շրջադարձներին, ապա պետք է նշեմ, որ թեև առանձին ճյուղեր, կազմակերպություններ կամ անհատներ խորացող ճգնաժամի պայմաններում կարող են ունենալ դրական արդյունքներ, սակայն, ընդհանուր առմամբ, ամբողջ տնտեսության համար համավարակը և դրանից առաջացած տնտեսական ճգնաժամը վերջնարդյունքում լինելու է բացասական, որի հետևանքները մենք կզգանք ավելի երկարաժամկետ հեռանկարում:

– Առջևում ամառային հանգստի ու շրջագայությունների լավագույն ժամանակաշրջանն է, որոշ երկրներ հայտարարել են հունիսից զբոսաշրջային սեզոնի բացման մասին: Ի՞նչ է ուրվագծվում. Հայաստանը կընդունի՞ զբոսաշրջիկների:

– Այլ բան է պաշտոնական հայտարարությունը, և բոլորովին այլ է այն վարքագիծը, որը կդրսևորեն մարդիկ, տվյալ դեպքում՝ զբոսաշրջիկները՝ հաշվի առնելով համավարակի ազդեցությունը: Առավել մասնագիտորեն եթե մեկնաբանենք, տնտեսական իրավիճակի փոփոխության արդյունքում փոխվում է նաև տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը, ու եթե մի մասը որդեգրում է պասիվ վարքագիծ, ապա գերակշիռ մասը որդեգրում է սպասողական վարքագիծ: Ձեր հարցի պատասխանը, թե երբ Հայաստանը կամ որևէ այլ երկիր կընդունի զբոսաշրջիկների, ուղիղ վերադավ կոռեյացված է այս հարցի պատասխանի հետ: Ջրոսաշրջիկները կվերսկսեն ճամփորդել՝ երբ կզգան, որ համավարակի ռիսկը նվազել է այն աստիճան, որ իրենք կարող են պասիվ կամ սպասողական վարքագծից անցում կատարել ակտիվ վարքագծի: Այդ փոփոխության համար մարդիկ պետք է վստահություն ունենան առնվազն տվյալ տարածաշրջանում հավարակի նվազման առումով, որից, ցավոք սրտի, այս պահի դրությամբ մեր երկիրը դեռևս բավականին հեռու է թվում: Սակայն պետք է ևս մեկ անգամ նշեմ, որ սա չի նշանակում, թե պետք է հուսալքվենք և ձեռքերը ծալած նստենք: Ճգնաժամեր եղել են, կան և կլինեն, իսկ մենք պարտավոր ենք դրանց դիմագրավել: Այսօրվա ճգնաժամի հաղթահարման համար մենք բոլորս՝ կառավարությունից մինչև վերջին քաղաքացին, պետք «ձգենք գոտիները», քանի որ այս ճգնաժամի հաղթահարման համար մեզանից յուրաքանչյուրը տնային աշխատանք ունի անելու:

– Շնորհակալություն՝ հետաքրքիր ու սպառիչ վերլուծության համար:

Զրույցեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ



ՈՎՔԵՐ ԵՆ «ՑՈՒԼԵՐՆ» ՈՒ «ԱՐՋԵՐՆ» ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Ժամանակակից տնտեսագիտության մեջ «ցուլերն» ու «արջերը» դիտարկվում են որպես արժեթղթերի շուկայի խաղացողներ կամ, այսպես կոչված, «սպեկուլյանտներ»: Սպեկուլյանտն այն անձն է, որը ձգտում է շահույթ ստանալ արժեթղթերի և այլ ֆինանսական ակտիվների կուրսերի (շուկայական գների) տարբերությունների հաշվին, որոնք կարող են առաջանալ ժամանակի ընթացքում: Սպեկուլյանտն ակտիվները վաճառում կամ գնում է՝ նպատակ ունենալով դրանք ապագայում գնել կամ վաճառել առավել բարենպաստ գնով կամ կուրսով:

Այս ընդհանուր բնութագրումներից հետո պարզենք, թե ովքեր են «ցուլերն» ու «արջերը» որպես արժեթղթերի շուկայի սպեկուլյանտ-խաղացողներ:

«Ցուլերն» այն սպեկուլյանտներն են, որոնք, կանխատեսելով ապագայում արժեթղթերի կուրսի կամ գնի բարձրացում, այդ ակտիվները գնում են տվյալ պահին, որպեսզի ապագայում վաճառեն առավել բարձր կուրսով կամ շուկայական գնով, այսինքն՝ խաղում են արժեթղթերի կուրսի բարձրացման վրա այնպես, ինչպես ցուլերը պոզահարում են՝ վերև նետելով, վեր բարձրացնելով: Ահա թե ինչու է առաջացել այս փոխաբերական անվանումը՝ «ցուլեր»:

«Արջերն» այն սպեկուլյանտներն են, որոնք խաղում կամ գործում են արժեթղթերի կուրսի նվազման, իջեց-

ման վրա: Այսինքն, եթե «արջ-սպեկուլյանտը» կանխատեսում կամ սպասում է ակտիվների կուրսի կամ գնի անկում, նվազում, ապա նա ձգտում է իր արժեթղթերը վաճառել տվյալ պահին, որպեսզի հետագայում դրանք գնի առավել ցածր կուրսով կամ շուկայական գնով: Հետևաբար, «արջերը» խաղում են արժեթղթերի կուրսի իջնելու վրա: Այս դեպքում անվան հիմքում այն երևույթն է, որ արջն իր գոհին թաթերով խփում է և ճնշում է ներքև, ի տարբերություն ցուլերի, որոնք պոզահարելով վերև են նետում:

Հավելենք, որ սպեկուլյանտը ոչ թե խարդախն ու խաբեբան է, ինչպես նախկինում էր բնութագրվում, այլ արժեթղթերի շուկայի խաղացող է, որը կռահում, կանխատեսում է ակտիվների կուրսերը և դրանց տարբերությունից շահույթ ստանալու նպատակ է հետապնդում: Նաև նշենք, որ «ցուլերն» ու «արջերն» արժեթղթերի շուկայի պասիվ խաղացողներ չեն. իրենց գործունեությանը և սպեկուլյատիվ մղումներից ելնելով՝ «ցուլերն» արժեթղթերի շուկայում «տեղեկություն» են տարածում, թե արժեթղթերի կուրսն ուր որ է բարձրանալու է, իսկ «արջերի» դերում գտնվողներն էլ՝ թե ուր որ է ընկնելու է: Այլ կերպ ասած, կարծում ենք, մեր ընթերցողին արդեն իսկ հասկանալի են նշված գործունեության դրդապատճառները:

ԻՆՉՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ

Տնտեսական աճը բարդ և բազմակողմանի սոցիալ-տնտեսական գործընթաց է, և պատահական չէ, որ տնտեսագիտական մտքի ականավոր տեսաբան, անգլիացի տնտեսագետ *Բ. Սելիգմենը* նշել է, որ տնտեսական աճի հիմնախնդրի վերաբերյալ միասնական տեսության ձևավորումը գրեթե անհնարին խնդիր է: Դա այն պատճառով, որ տնտեսական աճը, որը գնահատվում է իրական ՉՆԱ-ի տարեկան աճի տեմպերով, ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, քաղաքական, հոգեբանական, էկոլոգիական և այլ գործոններով է պայմանավորված: Հիտորանալով նշված հիմնախնդրի մեջ՝ նշենք, որ 2019 թ. Հայաստանում տնտեսական աճը կազմել է 7,6%, որն առաջնակարգ ցուցանիշ է ամբողջ աշխարհում:

Սակայն, տնտեսական աճի այս բարձր տեմպերը կխաթարվեն ներկայիս համավարակի պայմաններում: ՀՀ Կառավարությունը կանխատեսում է, որ 2020 թ. տեղի կունենա 2% տնտեսական անկում: Նկատի ունենալով, որ տնտեսական աճը նախատեսվել էր 4,9%, ապա կարող ենք ենթադրել, որ մեր երկրի ՉՆԱ-ի անկումը 2020-ին սպասվում է շուրջ 7%-ի չափով: Չմոռանա՞նք, որ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով մեր երկրի ՉՆԱ-ն նվազել է 14,1%-ով:

Այս կանխատեսումների համատեքստում կցանկանայի ընթերցողների համար մեկնաբանել, թե ինչով են կարևորվում տնտեսական աճի կամ ՉՆԱ-ի տեմպերը:

Այս առումով, կարևորը ոչ այնքան տնտեսական աճի քանակական, որքան որակական կողմն է, մասնավորապես այն, թե տնտեսական աճը որքանով է արտահայտվում երկրի տնտեսական զարգացման մեջ և որքանով է հանգեցնում բնակչության բարեկեցության բարձրացմանն ու աղքատության մակարդակի կրճատմանը, տնտեսության որ ոլորտների շնորհիվ և ինչքան ծախսումներով է ապահովվել տնտեսական աճը:

Ըստ ժամանակակից տնտեսագիտության տեսության դրույթների՝ տնտեսական աճի նվազագույն տեմպը զարգացող երկրներում մոտավորապես 2,7%-ից ցածր չպետք է լինի: Դա ունի իր հիմնավորումները, որոնք հակիրճ ներկայացնում ենք ձեզ.

ա) որպեսզի գործազրկության մակարդակը չբարձրանա և ինչ-որ չափով կրճատվի (ըստ ամերիկացի տնտեսագետ Վ. Օլբենի բացահայտած օրենքի):

բ) քանի որ դրանից ցածր տնտեսական աճի տեմպը էականորեն չի ազդում բնակչության բարեկեցության բարձրացման վրա:

Այս հիմնախնդիրները հատկապես կարևորվում են զարգացող երկրներում, իսկ զարգացած երկրներում նույնիսկ «գոյական տնտեսական աճի» պարագայում է հնարավոր ապահովել տնտեսական զարգացում և բնակչության բարեկեցության բարելավում: Այնպես որ, սիրելի՛ ընթերցող, սպասենք նոր սոցիալ-տնտեսական զարգացումների և իրավիճակային փոփոխությունների:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ՈՒ ՄԵՆԵԶՄԵՆԹԻ ԶՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի այսպիսի տնտեսագիտական զվարճապատում կա, որը բնութագրական է ճապոնական բիզնեսի ու մենեջմենթի հոգեբանական յուրահատկությունների համար և որը բոլորիս մտորելու առիթ կարող է տալ: Գործարարների միջազգային խորհրդակցության ժամանակ հանդիպում են նույնատեսակ և նույն ծավալի ապրանքատեսակ արտադրող ռուսական և ճապոնական ֆիրմաների տնօրենները:

Զրույցի ընթացքում ռուսական ֆիրմայի տնօրենը ճապոնացուն հարցնում է.

- Քանի՞ մարդ է աշխատում Ձեր ֆիրմայում:
- Ինչ մարդ,- պատասխանում է ճապոնացին:
- Իսկ Ձե՞զ մոտ:

Ռուս գործարարի ֆիրմայում թեև իրականում 100 մարդ էր աշխատում, բայց նա ամոթահար ստում է՝ ասելով՝ 10:

Հաջորդ օրը խորհրդակցության սրահում ճապոնացին գտնում է ռուս գործընկերոջը և ասում.

- Հարգելի՛ գործընկեր, գիտե՞ք, որ Ձեր պատասխանից մինչև այժմ ես ապշած եմ և ամբողջ գիշեր չեմ քնել: Անընդհատ մտածում էի, թե Ձեզ մոտ ինչով է զբաղվում այդ 10-րդ մարդը:

Այս մտորումներով է, որ ձեզ են ներկայացնում իմ դատողությունները տնտեսական առաջընթացի հոգեբանական գործոնների և նախադրյալների վերաբերյալ:

Տնտեսական առաջընթացի հոգեբանական գործոնը կարևոր դերակատարություն ունի Հարավարևելյան Ասիայի երկրներում, մասնավորապես՝ ճապոնիայում: Այս իմաստով, հետաքրքրական է անդրադառնալ ճապոնացիների հոգևոր կյանքի բնագավառին, նրանց ազգային հոգեբանական առանձնահատկություններին, ինչպիսիք են արիությունը, համբերատարությունը, ինքնատիրապետումը, ինչպես նաև երկյուղածության զգացումը:

Ճապոնացիների ազգային հոգեբանության առանձնահատկությունները, ըստ հետազոտողների եզրահանգման, բացատրվում են նախ բնակլիմայական անբարենպաստ պայմաններով՝ հրաբուխների ժայթքումներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, ցունամիներ, լեռնային փլուզումներ ու փոթորիկներ, որոնք ճապոնացիների կյանքի ուղեկիցներն են եղել ի սկզբանե: Այսինքն, ճապոնական կղզիների բնապայմանները նկատելի ազդեցություն են թողել այդ ժողովրդի ազգային հոգեբանության ձևավորման վրա: Սակայն ճապոնացիների վարքագծի վրա հարյուրամյակների ընթացքում ազդել են ոչ միայն կենսապայմանները, այլև սոցիալական գործոնները, որոնք արմատավորվել են ճապոնական ազգային բնավորության մեջ (Վ. Ա. Պրոնցիկով, Ի. Դ. Լադանով, «Ճապոնացիները. ազգահոգեբանական ակնարկներ», Եր., 1989, էջ 4-5):

Այնուհանդերձ, վճռորոշ գործոնը եղել է հասարակական արտադրության եղանակը: Հետևաբար այն, թե ինչ են իրենցից ներկայացնում անհատները, կախված է արտադրության նյութական պայմաններից՝ թե ինչ են արտադրում և ինչպես (Վ. Մարքս, Ֆ. Էնգելս, «Գերմանական գաղափարախոսություն», երկեր, հ. 3, 1987, էջ 20):

Մեկ այլ առիթով Վ. Մարքսը նշել է, որ տնտեսական դարաշրջանները միմյանցից տարբերվում են ոչ թե նրանով, թե ինչ է արտադրվում տվյալ ժամանակաշրջանում, այլ նրանով, թե ինչպես և ինչ տեխնիկայով



ու տեխնոլոգիայով էր արտադրվում:

Ճապոնացիների աշխատանքային հմտությունները, սովորույթները, վարքի համակարգը սերտորեն կապված են եղել ճապոնիայի շատ բարդ սոցիալ-տնտեսական պայմանների հետ. ինքնագործ բնակչության մեծ մասը դարեր շարունակ բրնձի դաշտեր է մշակել, որը աշխատանքային մեծ ջանքեր ու հմտություններ է պահանջել, երկիրն ունեցել է սակավ հանքահումքային սեփական ռեսուրսներ. ներմուծել է ալյումինի 100%-ը, նավթի 99,8%-ը, երկաթահանքի 98,4%-ը, փայտի և անտառանյութի 66,4%-ը, սակայն այսօր ճապոնիայի տնտեսությունն աշխարհում ամենամրցունակներից է և ՀՆԱ-ի ծավալի ցուցանիշով 3-րդն է աշխարհում ԱՄՆ-ից և Չինաստանից հետո:

Նշված կենսապայմաններն են, որ ճապոնացիների մեջ ձևավորել են այնպիսի հոգեբանական գծեր, ինչպիսիք են աշխատասիրությունը, կարգապահությունը, ճշտապահությունը, աշխատանքային խմբում համաձայնեցված գործողությունների ձգտումը, ընկերության կամ ֆիրմայի հեղինակության բարձրացման նախանձախնդրությունը, ղեկավարի ցուցումները հստակորեն կատարելու պատրաստակամությունը և այլն:

Այսպիսով, կարելի է առանձնացնել երկու խումբ գործոններ, որոնք էական ազդեցություն ունեն տարբեր հանրությունների պատկանող մարդկանց հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման վրա: Դրանք են բնական միջավայրի և սոցիալական միջավայրի գործոնները, որոնց ազդեցությամբ ձևավորվում են յուրաքանչյուր ժողովրդի ազգային հոգեբանության հատկանիշները:

Կարծում ենք՝ հետագայում առիթ կունենանք ավելի մանրամասնորեն անդրադառնալու տնտեսական առաջընթացի հոգեբանական գործոնների հիմնախնդրին:

ՓՈՂԻ «ԱՌԵՂԾՎԱԾԸ»՝ ԸՍՏ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ «ԿԱՊԻՏԱԼԻ»

Փողը շուկայական տնտեսության ամենամասսայական հասկացությունն է և ամենաառօրեական գործիքը, որին առնչվում ենք բոլորս և առանց որի դժվար է պատկերացնել մեր բնականոն և արժանապատիվ գործունեությունը: Փողի նկատմամբ մարդկության պաշտամունքն ու երկրպագությունը կապված են նրա՝ որպես «առեղծվածային» և ամենագոր միջոց լինելու հետ:

Պատահական չէ, որ Ադամ Սմիթը փողը համարել է ապրանքաշրջանառության և ընդհանրապես մարդկության «մեծ անիվը»:

Փողի «առեղծվածային» ուժին ու նշանակությանն անդրադարձել են շատ տնտեսագետներ, սակայն Կարլ Մարքսին է հաջողվել իր հանրահայտ «Կապիտալ» աշխատությունում բացահայտել «փողային ֆետիշիզմի», փողի երկրպագության և նրա «առեղծվածի» արմատները, որին կանդորադառնանք այս փոքրիկ հոդվածում:

4. Մարքսը «Կապիտալի» 1-ին հատորում նշում է. «Ապրանքաշրջանառության ընդլայնման հետ աճում է ոչ միայն փողի նկատմամբ մարդկային ծարավը, այլև փողի զորությունը» («Կապիտալ», հ. 1, էջ 98):

Դրա հետ կապված՝ Մարքսը ներկայացնում է ոսկու ամենագոր ուժի բնորոշումը ըստ Քր. Կոլումբոսի, որը 1503 թ. նա արտահայտել է ճամայկայից* ուղարկված նամակում. «**Ոսկին մի զարմանալի իր է: Ով ոսկի ունի, նա տեր է ամեն բանի, ինչ որ ցանկանում է: Ոսկով կարելի է մինչև անգամ հոգիները դրախտ հասցնել» («Կապիտալ», հ. 1, էջ 98):**

Կատարելով այս մեջբերումը՝ Կ. Մարքսը նույն տեղում եզրակացնում է. «... **ամեն ինչ փող է դառնում, ... ապրանքաշրջանառությունը վեր է ածվում մի մեծ հասարակական փորձանոթի, որի մեջ նետվում է ամեն ինչ՝ կրկին իբրև դրամաբյուրեղ նրա միջից դուրս գալու համար: Այս ալքիմիային դիմադրել չեն կարող անգամ սրբերի մասունքները»:**

Շարունակելով փողի առեղծվածային ուժի մասին դատողությունները՝ Կ. Մարքսը հետաքրքիր մեջբերումներ է կատարում նաև Շեքսպիրից և Սոֆոկլեսից, որոնց համառոտագրված տարբերակները ներկայացնում են ընթերցողներին՝ մեկնաբանություններն ու մտորումները թողնելով նրանց:

Ո՛վ ոսկի, դեղին, շողշողուն մետաղ,
Թանկագին ոսկի: Քո մի բուռը միշտ,
Ամենուր սևը դարձնում է ճերմակ,
Սխալը՝ ուղիղ, ստորը՝ ազնիվ,
Ծերունուն՝ ջահել, վախկոտին՝ հերոս,
Բորոտությունը՝ դարձնում պաշտելի,
Գողին տալիս տիտղոս, նեցուկ, խրախույս,
Հնաթառան այրուն դարձնում է դալար:
Դե որ այդպես է, հողն էլ նվաճիր,
Մարդկության պոռնիկ դու սովորական:
Ինչո՞ւ է այսպես, աստվածներ հզոր:

(Կ. Մարքս, «Կապիտալ», հ. 1, եր., 1933, էջ 99, Ըստ Վ.Շեքսպիրի «Թիմոն Աթենացու»)

Դրանը մեծ չարիք է մարդկության համար.
Քաղաքներ են կորչում նրա պատճառով,
Պանդուխտներ լքում տունը հայրենի,
Եվ սրտերն անարատ՝ ապականելով
Նա դրդում է մարդկանց դաժան քայլերի,
Շնչում անազնիվ մտքեր ու արարք:

(Կ. Մարքս, «Կապիտալ», հ. 1, եր., 1933, էջ 99-100, Ըստ Սոֆոկլեսի «Անտիգոնի»)

*ճամայկան (Ջամայկա) պետություն է Վեստ Ինդիայում՝ Կարիբյան ծովի համանուն և հարակից կղզիների վրա, որը 1494 թ. հայտնաբերել է Քր. Կոլումբոսը:

ԻՆՉ Է ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԹԻՎ

Համախառն ազգային երջանկության համաթիվը (ինդեքսը) առաջին անգամ սահմանվել է Բուքանի թագավորությունում, 1972 թ.: Այն հաշվարկվում է ոչ միայն տնտեսական բարեկեցության, այլև սոցիալական, հոգևոր, էկոլոգիական ցուցանիշներով: Այս երկրի առաջարկով՝ ՄԱԿ-ը 2012 թ. մարտի 20-ը սահմանել է որպես Երջանկության միջազգային օր: Ուստի, անհրաժեշտ է մի փոքր ծանոթանալ Բուքանի թագավորությանը: Այն պետություն է Հարավային Ասիայում՝ Հիմալայներում՝ Չինաստանի և Հնդկաստանի միջև: Տարածությունը 38,144 հազ. կմ² է, բնակչությունը՝ 754,4 հազ. մարդ: Բուքանի ազգային անվանումը «Դրուկ-Ցուկ» է, որը նշանակում է «Վիշապի երկիր», իսկ ներկայիս անվանումը նշանակում է «Տիբեթի ծայրամաս»:

Բուքանը գյուղատնտեսական երկիր է. աճեցնում են բրինձ, հացահատիկ, բամբակ, մրգեր: Երկիրը բնութագրվում է հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշներով.
ՀՆԱ-ն 2018 թ.՝ 2,58 մլրդ դոլար
ՀՆԱ-ի տեմպը՝ 4,6 %
ՀՆԱ-ն (PPP)՝ 8,20 մլրդ դոլար
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով՝ 3160 դոլար
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (PPP)՝ 9876 դոլար
Սպառ. գների ինդեքսը՝ 3,5%
Գործազրկ. մակ.՝ 3,2%
Համախառն պետ. պարտք՝ 102,4%
Աղքատության մակ.՝ 1,5%:

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ



ԶԵՆՖԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՀԴՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.



*Ուրախ եմ,
որ փարփներ անց
վերադարձա...*

ՀԴՏՀ 45-ամյակն ինձ համար սիրելի բուհի գործունեությունը նշանավորող բոլորաշրջան չէ սուսկ, այլ ամձնական ու հարազատ մի իրադարձություն, որն այսօր՝ տարիների բարձունքից, հնարավորություն է տալիս վերհիշելու սեփական կենսագրության կարևորագույն դրվագները և հատկապես այն պահերը, որոնք անքակտելիորեն միախլուսված են բուհի պատմությանը:

Յետադարձ հայացք ձգելով՝ հիշում եմ իմ մուտքը Երևանի պետական համալսարան, մասնագիտական ընտրության բռնիքածն անցումը գերմանական բանասիրությունից մինչև տնտեսագիտություն: Հորեղբայրս քաղաքատնտեսության մասնագետ էր, բժշկական համալսարանում էր դասավանդում և հաճախ էր ինձ հետ գրուցում տնտեսագիտական հարցերի շուրջ, ինչը և կանխորոշեց վճռական որոշումս:

1971-1975 թթ. Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող էի և վայելում էի ուսանողական կյանքի և ուսումնառության ողջ բերկրանքը: Եվ ահա ժողովրդական տնտեսության պլանավորում մասնագիտությունը ավարտական կուրսում՝ 1975-ի սեպտեմբերին, փոխարինվեց աշխատանքի էկոնոմիկա մասնագիտությամբ, քանի որ դարձա նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Շյուրային էկոնոմիկաների ֆակուլտետի շրջանավարտ: Իհարկե, մայր համալսարանի շրջանավարտը չլինելու ափսոսանք կար, փոքր-ինչ դժկամություն, սակայն առջևում ոչ լիարժեք ուսումնական տարի էր՝ փորձառություն և դիպլոմային աշխատանքի նախապատրաստություն, հետևաբար շատ չվշտացա: Հատկապես, որ երեք ամսով փորձառության էի մեկնում Մոսկվայի Սերգո Օրջոնիկիձեի անվան կառավարման ինստիտուտ: Այդ ժամանակաշրջանում ես չէի կարող կանխատեսել, որ, մայր բուհից պարտադրաբար հեռանալով և հայտնվելով նորաստեղծ Տնտեսագիտականում, տարիներ անց վերջինիս հետ կապվելու եմ բազում թելերով:

ԵրժՏԻ-ն ավարտելուց հետո կյանքն իր ընթացքը թելադրեց. 1976 թվականից աշխատեցի Հայաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում՝ սկզբում որպես տնտեսագետ, ապա կրտսեր գիտաշխատող, 1977-1978 թթ. Մոսկվայի կառավարման ինստիտուտում այս անգամ վերապատրաստվեցի գիտական հետազոտությունների կառավարում մասնագիտությամբ և արժանացա դիպլոմի: 1979-ին ամուսնացա երիտասարդ գիտնական Գագիկ Ասլանյանի հետ, ով նոր էր վերադարձել Նովոսիբիրսկից, որտեղ պետական համալսարանում դիպլոմային աշխատանք էր պաշտպանել (այժմ ՀԴՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ է): Կարճ ժամանակ անց միասին մեկնեցինք Մոսկվա, 1981 թ. ընդունվեցի ԽՍՀՄ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: Ես մեծ սիրով եմ հիշում այդ տարիները, որոնք մասնագիտական կրթության խստապահանջությունից, անդադրում աշխատանքից բացի, նաև հոգևոր-մշակութային կրթության ժամանակաշրջան էր. Մոսկվան Խորհրդային Միության մշակութային մայրաքաղաքն էր: Մի քանի տարի անց պաշտպանեցի թեկնածուական ատենախոսություն «Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները (մեքենաշինական ձեռնարկությունների օրինակով)» թեմայով: 1985-ին ըն-

տանիքով վերադարձանք Հայաստան, և այդ տարիներին ինձ առավելապես նվիրեցի զավակներիս կրթությանն ու դաստիարակությանը:

Տնտեսագիտական համալսարանի հետ կապը վերըստին հաստատվեց 2002 թվականին, երբ աշխատանքի անցա միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնում, որտեղ և աշխատում եմ մինչ օրս: Կարծում եմ, որ մասնագիտական կրթության ու զարգացման ոչ դյուրին ճանապարհս անցնում էի հենց մեր բուհում դասավանդելու և մեր երկրի համար տնտեսագետ կադրեր պատաստելու գործին մասնակից դառնալու համար: Ուրախ եմ, որ տարիներ անց վերադարձա մասնագիտական կրթության մի հաստատություն, որտեղ դասավանդում եմ բանիմաց ու պատրաստված մասնագետներ, և ուսանողը ստանում է համակողմանի և խոր գիտելիք: Այս մասին պատիվ ունեմ փաստելու նաև որպես ծնող, որի երկու դուստրերը և որդին ավարտել են մեր համալսարանը: Մեկ դուստրս և որդիս զբաղվել են գիտահետազոտական աշխատանքով, պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, իսկ հետագայում դուստրերս, հենց մեր համալսարանում ստացած հարուստ գիտելիքով զինված, հաջողությամբ աշխատանքի են անցել մեկը՝ Սինգապուրում, մյուսը՝ Միլանում:

Թեև անցած չորսուկես տասնամյակի ընթացքում իմ մտերմությունը բուհի հետ ընդհատումներ է ունեցել, սակայն վերջին շուրջ երկու տասնամյակը եղել է բեղմնավոր ու անընդհատական թե՛ իմ և ամուսնուս աշխատանքային գործունեության, թե՛ զավակներիս ուսման ու հաջողությունների կերտման ճանապարհին:

Այո՛, մեր սիրելի համալսարանը թանկ ու հարազատ է մեզ համար նաև ընտանեկան ձեռքբերումների առումով, ուստի այս գեղեցիկ տոնի առիթով ցանկանում եմ ընտանիքիս բոլոր անդամների անունից մաղթել նրան երկար ու արգասաբեր ճանապարհ, զարգացման լայնահուն հեռանկար և որ միշտ այն դրական կերպով բախտորոշ լինի շատ-շատերի ճակատագրում:



ՀԳՏՀ ընդունելության այս տարվա գործընթացը նշանավորվեց նոր մագիստրոսական ծրագրերի ներդրմամբ

Թվով 11 նոր մագիստրոսական ծրագրեր 2020-2021 ուսումնական տարում հասանելի կլինեն ՀԳՏՀ դիմորդներին: 2020 թ. մայիսի 25-ին մեր համալսարանում մեկնարկել է ընդունելության գործընթացը, սակայն այս հրապարակումը նվիրված է համալսարանում ներդրված նոր մագիստրոսական կրթական ծրագրերին, որոնք կիրականացվեն ՀՀ աշխատաշուկայի խոշոր գործատուների հետ համատեղ և որոնց շուրջ համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր կնքվել են՝ անցած տարվանից սկսած:

«Տնտեսագետի» հետ զրույցում ՀԳՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը նշում է, որ մագիստրոսական նոր կրթական ծրագրերի ամենաորոշիչ առանձնահատկությունը on job training (ուսուցում աշխատավայրում) սկզբունքի ինտեգրումն է կրթական գործընթացում: «Գաղտնիք չէ, որ մեր նոր կրթական ծրագրերից շատերն իրականացնում ենք տվյալ ոլորտների առաջատար կազմակերպությունների հետ համատեղ, որոնք լիարժեք մասնակցություն են ունեցել կրթական ծրագրերի մշակման աշխատանքներին և լիարժեք մասնակցություն են հանձնառել կրթական ծրագրերի մատուցման աշխատանքներում: Մեր ուսանողները հնարավորություն են ունենալու ունկնդրելու ոչ միայն մեր դասախոսներին, այլև տվյալ կազմակերպությունների առաջատար մասնագետներին, իսկ տեսական կուրսի անմիջապես ավարտին՝ գործնական գիտելիքները խորացնել հենց գործընկեր կազմակերպություններում: Այս ծրագրերը նաև առավելագույնս կիրառական և հետազոտական բաղադրիչ են պարունակում: Բացի դրանից, մի մասը նաև միջգիտակարգային են և մասնավորապես զուգակցում են բարձր տեխնոլոգիաների, տնտեսագիտության և մենեջմենթի, առողջապահության, տնտեսագիտության և մենեջմենթի, էներգետիկայի, տնտեսագիտության և մենեջմենթի, ինովացիաների և տնտեսագիտության բնագավառները: Անշուշտ, այս փուլում հաջողելու պարագայում մնանատիպ մոտեցման ընդլայնումը կդառնա ՀԳՏՀ կրթական ծրագրերի որոշիչ մրցակցային առավելություններից մեկը կրթական ծառայությունների շուկայում: Բացի դրանից, կրթական գործընթացը

առավելագույնս հարմարեցված է աշխատող ուսանողների կարիքներին և կազմակերպվելու է երեկոյան ուսուցման սկզբունքով: Բարձրագույն կրթության և գիտության օրենսդրության ընդունումից հետո կմտածենք նաև առցանց եղանակով կրթական ծառայության մատուցման ուղղությամբ», – նոր ծրագրերի առավելություններն այսպես մեկնաբանեց պրոռեկտորը:

«Մենք փոխում ենք մագիստրոսական կրթական ծրագրերի փիլիսոփայությունը՝ մեր գործընկերներին մասնակիցը դարձնելով այդ ծրագրերի մշակմանը և իրականացմանը», – հայտարարել էր ՀԳՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը՝ 2019 թ. դեկտեմբերի 4-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հետ հուշագրի ստորագրմանը: Այս փաստաթուղթը կյանքի է կոչվել, արդյունքում ներդրվել է «**Բանկային գործունեության կազմակերպում**» մագիստրոսական ծրագիրը, որն այս տարվանից կիրականացվի ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հետ:

«**Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում**» ծրագրի հիմքը դրվել է 2019 թ. նոյեմբերի 11-ին, եռակողմ համագործակցության հուշագրի ստորագրմամբ՝ ՀԳՏՀ-ի, ՀՀ տեխնոլոգիական ոլորտի առաջատարներից «Արփիմետ» ընկերության և ՀՀ ՏՏ և հեռահաղորդակցության ոլորտը ներկայացնող Հայաստանի օպերատորների միության միջև: Այս կրթական ծրագիրը նպատակ ունի արդյունավետ համագործակցություն ապահովելու ՏՏ ոլորտի ընկերությունների հետ ինչպես կրթական գործընթացի կազմակերպման, այնպես էլ ծրագրի շրջանավարտների հետ հետագա համագործակցության առումով: Կիրառելով ՀԳՏՀ փորձը, առկա ռեսուրսները և մագիստրոսական կրթության կազմակերպման ՀԳՏՀ-ում ձևավորված նոր մոտեցումները՝ ՏՏ ընկերությունները, բջջային օպերատորները ծրագրի շրջանակում կմասնակցեն նորագույն պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման գործընթացին:

Հաջորդ ծրագիրն ուղղված է ապահովագրական ոլորտի մասնագետների պատրաստմանը և կոչվում է «**Ապահովագրական գործ**»: Այն կիրականացվի «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության

հետ, հիմքը 2019 թ. ղեկտեմբերի 3-ին ստորագրված համագործակցության պայմանագիրն է:

«Առողջապահության կառավարում և վարչարարություն» (Health management and administration) MBA-ի նոր մագիստրոսական կրթական ծրագրի հիմքը դրվել է 2020 թ. հունվարի 16-ին՝ ՀՊՏՀ-ի և «Ազգային բժշկական պալատ» ՀԿ-ի միջև համագործակցության հուշագրի ստորագրմամբ: Հետագայում գործընթացն ընդլայնվել է, և ուսանողների փորձառությունները կազմակերպելու, դասավանդման գործընթացում արհեստավարժ մասնագետներ ներգրավելու, ինչպես նաև ժամանակակից բժշկական տեխնոլոգիաներին և բժշկական գրադարանային ռեսուրսներին հասանելիությունն ապահովելու նպատակով մեր համալսարանը «Ազգային բժշկական պալատ» ՀԿ-ի միջոցով համագործակցության հուշագրեր է ստորագրել «Իզմիրյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի և «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ:

Նոր ծրագրերից է նաև **«Մարդկային ռեսուրսների կառավարումը»**, որի իրականացման նպատակով համագործակցության հուշագիր է ստորագրվել ՀՊՏՀ-ի և «Յուլբոն» ընկերության միջև:

Շարքը շարունակում է **«Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն»** (Applied Statistics and Data Science) ծրագիրը: Այն մշակվել է տվյալագիտության, կիրառական վիճակագրության, բիզնես-վերլուծությունների ոլորտներում մեծ հեղինակություն վայելող ԱՄՆ-ի և Եվրոպայի մի քանի տասնյակ առաջավոր համալսարանների հաջողված փորձի մանրակրկիտ վերլուծության, մեր պայմաններում դրա տեղայնացման, նաև հավանական գործատու կազմակերպությունների պահանջարկի խորքային ուսումնասիրության արդյունքում:

Հաջորդը՝ **«Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում»** ծրագիրը, ՀՊՏՀ-ն կիրականացնի երկու խոշոր կառույցների՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) և Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) հետ: Այս ծրագիրը կյանքի է կոչվում եռակողմ փոխընթացման հուշագրի հիման վրա, որը ստորագրվել է 2019 թ. ղեկտեմբերի 23-ին ՀՊՏՀ-ում: Այն նպատակ ունի արդյունավետ համագործակցությունն ապահովելու հանրային ծառայությունների ոլորտի (գազամատակարարում, էլեկտրաէներգետիկա, ջրային տնտեսություն, հեռահաղորդակցություն) ընկերությունների, ձեռնարկատիրական այլ ոլորտների ընկերությունների և ծրագրի շրջանավարտների հետ: Կրթական ծրագիրը ղեկավարելու է տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Մելքունյանը:

Առողջապահության ոլորտում ներդրվել է ևս մեկ ծրագիր՝ **«Բուժհաստատությունների կառավարում»** (Dental practice management) նոր MBA, որի հիմքը դրվել է 2020 թ. հունվարի 16-ին՝ ՀՊՏՀ-ի և «Ազգային բժշկական պալատ» ՀԿ-ի միջև համագործակցության հուշագրի ստորագրմամբ: Այնուհետև գործընթացն ընդլայնվել է, և դասընթացներում ուսանողների փորձառությունը կազմակերպելու,

դասավանդման գործընթացում արհեստավարժ մասնագետներ ներգրավելու, ինչպես նաև ստոմատոլոգիայի բնագավառում ժամանակակից բժշկական տեխնոլոգիաներին և գրադարանային ռեսուրսներին հասանելիությունն ապահովելու նպատակով ՀՊՏՀ-ն «Ազգային բժշկական պալատ» ՀԿ-ի միջոցով համագործակցություն է հաստատել ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող առաջատար կազմակերպությունների և «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ:


Համաձայն կնքված հուշագրերի՝ նեղ մասնագիտացմամբ այս կրթական ծրագիրը նպատակ ունի արդյունավետ համագործակցությունն ապահովելու ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների և առողջապահության ոլորտի առաջատար հասարակական կազմակերպություններից մեկի հետ ինչպես կրթական գործընթացի կազմակերպման, այնպես էլ ծրագրի շրջանավարտների հետ հետագա համագործակցության առումով:

«Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի հիմքը դրվել է «Արմենիան Տիտանիում Փրոդաքշն» ընկերության հետ 2019 թ. ղեկտեմբերի 26-ին ստորագրված փոխընթացման հուշագրով: Ծրագիրը նպատակ ունի արդյունավետ համագործակցությունն ապահովելու արդյունաբերական ոլորտի ընկերությունների, ձեռնարկատիրական այլ ոլորտների ընկերությունների և ծրագրի շրջանավարտների հետ: Կրթական ծրագիրը ղեկավարելու է տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Մելքունյանը:

10-րդ՝ **«Նորարարությունների տնտեսագիտություն»** ծրագրի նպատակը նորարարական և ստեղծագործական մտածողությամբ, ինչպես նաև կիրառական մասնագիտական կարողություններով օժտված մրցունակ մասնագետների պատրաստումն է, որոնք բարդ ու լարված շուկայական մրցակցության պայմաններում կկարողանան լուծել բիզնեսի զարգացման ու տեխնոլոգիական արդիականացման, ինչպես նաև նոր, մրցունակ պրոդուկտների ստեղծման ու շուկայական առաջնորդման հետ կապված կառավարման բարդ խնդիրներ: Ծրագրի պատասխանատու կառույցը ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիան է (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ատոմ Մարգարյան):

11-րդ՝ **«Մաքսային վարչարարություն»** ծրագրի նպատակն է պատրաստել անհրաժեշտ վերջնարդյունքներով օժտված բարձրակարգ մասնագետներ՝ ունակ իրականացնելու ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության մշակում, առաջարկվող միջոցառումների և փոփոխությունների ազդեցության գնահատում, մաքսային քաղաքականության շուրջ ՀՀ տնտեսության շահերից բխող բանակցությունների վարում՝ կիրառելով միջազգային առաջավոր փորձը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ՝ 2019 թ. նոյեմբերի 14-ին ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում:

ՍԵՐ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ Ուղղված հարազատ համալսարանին



«Իմ ՀՊՏՀ» խորագրով էսսեների մրցույթը, որը նվիրված էր ՀՊՏՀ 45-ամյակին և անցկացվեց տոնական միջոցառումների շրջանակում, ամփոփվեց: Արտակարգ դրության և մեկուսացման պայմաններում մեր շնորհաշատ ուսանողների ստեղծագործությունները ֆեյսբուքյան էջից ջերմություն ու սեր հաղորդեցին մեզ, մեկուսի, բայց և ի լուր աշխարհի բացահայտեցին նրանց սերը, հիացումը, հպարտությունը սիրելի համալսարանի հանդեպ: Իսկ համալսարանին հոգի ու շունչ, ուժ ու ոգեղենություն են հաղորդում մարդիկ, նրա կամարների ներքո աշխատող, դասավանդող, սովորող, հետազոտող, ստեղծագործող մարդիկ: Եվ այս խոստովանություններում ամփոփված ուղղված է նրանց բոլորին, ովքեր հասակ են տալիս մեր կրթօջախին ու կերտում նրա ապագան:

Մրցութային ժամանակահատվածում կազմակերպվեց ստացավ առաջադրված պահանջներին համապատասխանող 6 աշխատանք: Ինչպես և ներկայացված էր մրցույթի հայտարարությունում, էսսեներն ընթերցեց մրցատյանը, որի կազմում էին ՀՊՏՀ ռեկտորի խորհրդական, մարքեթինգի ամբիոնի դոցենտ Լիլիթ Դադայանը, լեզուների ամբիոնի վարիչ Լուսինե Հարությունյանը, նույն ամբիոնի դասախոս Լիլիթ Հակոբյանը, արծակագիր, ՀՊՏՀ շրջանավարտ Նորայր Սարգսյանը, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, «Տնտեսագետ» ամսագրի գլխավոր խմբագիր Գոհար Գևորգյանը, խմբագիր Արմինե Վարդանյանը, լրագրող Նանե Ավանեսյանը:

Էսսեները գնահատելիս մրցատյանն առաջնորդվեց մի քանի չափանիշով՝ գրագետ գրավոր խոսք, շարադրանքի ինքնատիպություն ու պատկերավորություն, բովանդակության համապատասխանություն առաջադրված թեմային: Ինչպես և խոստացել էր կազմակերպիչը, դիտարկվեցին նաև ֆեյսբուքյան հավանությունները: Եվ քանի որ պատկերը երկփեղկվեց և, ըստ էության, մրցատյանի նախապատվության արժանացան ֆեյսբուքում ամենաբարձր հավանություն ստացած էսսեները, ապա որոշվեց մրցույթի արդյունքներն ամփոփել 2 եռյակով՝ ըստ մրցատյանի և ըստ ֆեյսբուքյան հավանությունների:

Ըստ այդմ՝ մրցատյանի առավելագույն ծայեր ստացավ Հայկ Քալանթարյանի (հաշվապահական հաշվառում և աուդիտ, 3-րդ կուրս) էսսեն, այնուհետև Արև Մանուկյանի (մարքեթինգ և բիզնեսի կազմակերպում, 3-րդ կուրս) և Ժորա Ստեփանյանի (ֆինանսական, 4-րդ կուրս) էսսեները:

Ֆեյսբուքյան ամենաշատ հավանությունների արժանացավ Անուշիկ Մանուկյանի (տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ, 3-րդ կուրս) էսսեն, այնուհետև Գրետա Գուրուրյանի (տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ, 1-ին կուրս) և Ալլա Հարությունյանի (ֆինանսական, 1-ին կուրս) էսսեները:

Հաղթած էսսեների հեղինակները կարժանանան մրցանակների, որոնք նրանց կհանձնվեն ՀՊՏՀ 45-ամյակին նվիրված տոնական միջոցառման ընթացքում, և քանի որ ունենք 2 լավագույն եռյակ, ապա ամսագրում հաջորդաբար տեղ կգտնեն բոլոր էսսեները:

«Տնտեսագետ» իր շնորհավորանքն է հղում բոլոր հեղինակներին, մաղթում ուսումնական և ստեղծագործական հաջողություններ, սիրո ու հիացումի նոր կուտակումներ և նորանոր «գեղարվեստական պոռթկումներ»:

Ա. Վարդանյան

2017-ի սեպտեմբերի 1-ին դարձել էի մի մասնիկը Ժողի՝ Էնթան շփոթված ու հուզված, որ եղ օրվա համար 10 օր շարունակ Ֆլորենցիայի նկարներով բոլոր տետրերը սրբել-տարել էի գրախանութներից, որ գերմոտիվացված կերպով սկսեի ուսումնական տարիս: Այո՛, ես ընդամենը մասնիկն էի՝ չնչին, աննկատ, հազարավոր ուսանողների մեջ՝ իր էությունից մի կերպ չպոկվող:

Ժողը եղ մասնիկից կերտեց մեկին, որը սկսեց հենց իրեն՝ Ժողին, մաս առ մաս կերտել:

Ես Ժողի ուսանող եմ...

Չեմ ցանկանում պաթոսախեղդ անել ու գրչին շռայլել բառեր, որոնք զուտ խաբկանքի մեջ կզգեն ընթերցողին: Ես երբևէ չեմ ասի, որ ամենահպարտ ուսանողն եմ, որովհետև սովորում եմ լավագույն բուհում: Գիտեք չէ՞, երբեմն մտածում եմ, որ լավագույն բուհում սովորելը թույլ չի տալիս, որ իր մաս առ մաս կերտողը լինես, որովհետև էնտեղ ամեն ինչ կա, դու պետք է ընդամենը սովորես (ըհը, այսինքն՝ ուղղակի լինես մասնիկը): Մինչդեռ էստեղ՝ Նալբանդյան 128-ում, ես մի ամբողջ կյանք եմ տեսել էն ճանապարհիս, երբ փորձում էի ու փորձում եմ ժողը իմ ուզածը, իմ երազածը դարձնել, որովհետև ամեն ինչից զատ, մարդ պետք է պատասխանատու լինի

ու հարզի իր որոշումները, իսկ իմ որոշման անունն է Ժող, որը ես պարտավոր եմ հարգել (հա, ի դեպ, գեթ մեկ անգամ չօգտագործեցի ՀՊՏՀ բառը, կարծում եմ՝ սա արդյունք է էն բանի, որ մանկության տարիներս անցկացրել եմ մի ընտանիքում, որի 4 անդամները ավարտել են Ժողը, իսկ տողերիս հեղինակը ընդամենը մեկ տարուց կրողը կդառնա ընտանեկան ավանդույթի):

Երբ սովորում էի Գերմանիայում, ամեն անգամ համալսարան մտնելիս մի վախ կար. անընդհատ հանդիպել մարդկանց, որոնց երևի միայն կբարևես կամ որոնք գլուխները կթեթեն կուրսեցիներին տեսնելիս: Անընդհատ մտքիս Ժողի բակն էր, երբ պահակատի աշխատողը, ընկերական «Բարիլույսը» լեզվի ծայրին՝ պարտաճանաչ քարտ ունեցող ուսանողին (նվաստիս) Ժողում անցկացվելիք օրվա լավ սկիզբ էր փոխանցում, իսկ դարպասներից մինչև Ժողի անհայտ մասում տեղակայված հաշվապահության ֆակուլտետ տանող ճամփին «Ճամփաբաժան» էին դառնում էն հավես ժողեցիները, որոնց գրկելն ու որոնց հետ մի քանի րոպե «դեսից-դենից» խոսելը ստիպում էին, որ դասից ուշանաս: Ու ի վերջո, հենց Ժողն էր, որ ինձ ուղարկել էր Գերմանիա, հենց Ժողն էր, որը ես էնտեղ ներկայացնում էի. երևի թե դարձել

Իմ ՉՊՏՅ



ՀԱՅԿ ՔԱԼՆՆԹԱՐՅԱՆ

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 3-րդ կուրս

Էր արդեն էն սիմվոլներից մեկը, որը օտարության մեջ գտնվող 19-ամյա շփոթված ջահելին անընդհատ հիշեցնում էր հայաստանյան իրականությունը...

Հիմա իմ Ֆլորենցիայի ֆոնով տետրերը փոխարինվել են «1 տետր՝ 7 առարկա» սկզբունքով, բայց էս էլ արդյունքն է մեծանալու, երիտասարդական հավես տարիները վայելելու, ու հենց ժողն է մեղավոր էս սկզբունքը որդեգրելու համար, որովհետև էս էդ մեծանալու ու երիտասարդություն անելու գործընթացը հիմնականում կապել են ժողի հետ: Ի վերջո, մինչև 17:30 ժողում են լինում, մեկ-մեկ ականջս գրադարանի աշխատողների զրույցներն է լսում, մեկ-մեկ ուղղակի գնում ու նստում են բակում, որ տեսնեմ ինչ է կատարվում ժողում, մեկ-մեկ բարձրանում են ֆինանսների շենք, որ ընկերներիս դասից հանեն ու ստիպեն, որ նստենք ու մի քիչ ժողի անցուդարձից «զյալաջի անենք», բայց թույլտվություն անց ամբիոնի վարիչը պարապներիս «վռնդում է» մասնաշենքից, ու էս էլի գնում են գրադարան: Դե, հա, էս էն տեղն է, որտեղ տեսնում են բոլոր ծանոթներիս, սկսում են վերոնշյալ «զյալաջին» ու մեկ էլ ստիպված վռնդվում ենք գրադարանից, ու միակ տեղը, որտեղ հնարավոր է հանգիստ շարունակել էլ պրոցեսը, էն կարմիր բազկաթռն էր՝ դրված գրադարանի 2-րդ հարկում, որը, առանց դրա «սեփականատերերից» թույլատրության, տեղափոխել են չգիտեմ էլ՝ որտեղ:

Հետո վազում են էն բարձրահարկ շենքը, որի 4-րդ հարկի վերելակի կոճակը չի աշխատում, ու էս էդ անձայրածիր 4 հարկը ստիպված բարձրանում են ոտքով ու, ամբիոնի դռնից ներս սողոսկելով, գտնում են ընկեր Գասպարյանին, ում հետ մի քանի թույլ ուսանող-դասախոս հոգեբանական զրույցից հետո անցնում ենք ամենակարևորին՝ սկսում ենք գիտական գործունեությունը, սկսում ենք հորինել ու քննարկել տնտեսագիտության մեջ նույնիսկ գոյություն չունեցող ու երևակայությունից դուրս երևույթները, որպեսզի հաջողենք գիտության մեջ «բզբզա-

լու» գործերում: Հա, ի դեպ, ժողում էնքան դասախոսներ կան, որոնք ստիպում են ինձ նման ծուլիկին շուտ զարթնել ու վազել համալսարան, հետապնդել նույնիսկ իրենց շողքին ու հարցախեղդ անել: Երևի թե, ամենաարժեքավոր բաներից մեկը ժողում հենց դասախոս-ընկերներն են, որոնք հետ երբեմն նստում ու քննարկում էս նույնիսկ մասնագիտությանդ հետ կապ չունեցող հարցեր, որոնք, գիշերվա 4-ն էլ լինի, քեզ կգրեն, եթե իմանան, որ հաջորդ օրը շատ կարևոր է քեզ համար:

Ես ժողի ուսանող եմ ...

Երբ ստանում էի «ՉՊՏՅ ակտիվ հասարակական գործունեություն ծավալող լավագույն ուսանող» մրցանակը (էս երկար «տիտղոսը» մտաբերելուց էլ ավելի դժվար է արտաբերելը), ինձ հաճախ հարցնում էի՝ արդյո՞ք էս կերտել են ժողը մաս առ մաս էն աստիճանի, որին էս են ձգտում: Մինչ օրս էլ մտածում եմ, ոովհետև լավ ուսանողի չափորոշիչներ գտնելն իսկապես դժվար գործ է, իսկ լավ ուսանող լինելը՝ ավելի դժվար... Միգուցե՝ այո, միգուցե՝ ոչ, բայց մինչ էս մտորումներս ավարտվեն, էս գիտեմ մի պարզ փիլիսոփայություն. էս ՉՊՏՅ ուսանող եմ:

Իմ ՉՊՏՅ



ԱՐԵՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, 3-րդ կուրս

Բարե՛ւ, էս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն են, անձնագրով՝ ՉՊՏՅ, մտերիմների համար՝ ժող: Լավ, խոստովանեմ երբ ապրում էի ծնողներիս հետ, ինձ կոչում էին «Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ», հետո, երբ տեղափոխվեցի առանձին ապրելու, անուս հիմնովին փոխեցի, հետագայում ևս մեկ անգամ էլ մասնակի շտկումներ կատարեցի:

Համեստությունը, իհարկե, զարդարում է յուրաքանչյուրին, սակայն երբեմն ցանկանում են ինքս ինձ զովաբանել ու գնահատել և արդյունքում խոստովանել՝ էս պարզապես հիասքանչ եմ:

Ինձ բնութագրող զույնը կարմիրն է՝ հաղթանակի խորհրդանիշը, այն նաև շատ է սազում ինձ: Դե ինքներդ դատեք. ՀՀ-ում տնտեսագետներ պատրաս-

տող միակ մասնագիտական բուհ, հաջողությունների հասած շրջանավարտներ, լավագույն ուսանողական խորհուրդ, ուսումնաստենչ ուսանողություն, առաջադեմ ու արհեստավարժ դասախոսներ: Սրտիս զարկերն ապահովում են ուսանողները. սնունդ են այն թթվածնով, մատակարարում արյուն ու լիաբուռն կյանք պարգևում: Ու եթե անգամ կան թերություններ, եթե անգամ երբեմն արագանում կամ դանդաղում են սրտիս զարկերը, հոգ չէ, իմ շուրջն աջակիցներ են՝ ինձ սիրող ու հոգ տանող նվիրյալների մի հսկա բանակ:

Ես ամեն օր նայում եմ հայելու մեջ ու ասում.

- Ժող, Ժող ջան, դու կարող ես, դու հիասքանչ ես: Դու ամեն ինչում կհաջողես...

Ես ոչ միայն սիրում, այլև ապրում եմ ՀՊՏՀ-ով, իմ ՀՊՏՀ-ով:

Այո՛, չեն վախենա ասել՝ «Իմ ՀՊՏՀ», քանզի այն վաղուց դարձել է իմ կյանքի անբաժանելի մասը, իմ ամենակարևոր ձեռքբերումներից մեկը:

Գիտե՞ք, երբ դպրոցն ավարտելիս ուսուցիչները բարի ճանապարհի էին մաղթում դեպի «նոր կյանք», թերահավատորեն էի վերաբերվում, իսկ ՀՊՏՀ ընդունվելով՝ համոզվեցի. այո՛, ՀՊՏՀ-ն այն նոր կյանքի սկիզբն էր, որին ես սպասում էի ու ձգտում: Անգամ զինվորական ծառայությունն չկարողացավ կտրել իմ կապը ՀՊՏՀ-ի հետ, իսկ վերադառնալուց հետո այն իմ առջև բազում դռներ բացեց. նշանակվեցի ֆինանսական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, ճանաչվեցի «ՀՊՏՀ ակտիվ հասարակական գործունեություն ծավալող լավագույն ուսանող – 2019»: Մի՞թե սա բավարար չէ ասելու համար՝ «Իմ ՀՊՏՀ»:

Իսկ ժամանակի ընթացքում տեսնելով, թե ինչպես է փոխվում, դառնում էլ ավելի լավն ու ժամանակակիցը, ուղղակի հպարտանում եմ:

Իմ սիրելի՛ համալսարան, արդեն ավարտական կուրսում եմ և չեմ ուզում անգամ պատկերացնել, որ կարող է մի օր հրաժեշտ տան քեզ, քանի որ դու դարձել ես իմ օրվա մի մասնիկը: Ինչպես Հարրի Փոթերն ամանորյա տոներին չի լքում Հոգվարթսը, այնպես էլ ես, անգամ հիմա՝ փորձառությանն ընթացքում, ամեն օր մի պահ եմ գտնում և գալիս եմ քեզ այցի:

Հնարավոր է՝ շատերի համար տարօրինակ լինի իմ կապը քեզ հետ, սակայն, համոզված եմ, շատերն էլ կհասկանան ինձ:

Դու անհամար հնարավորություններ ես տալիս քո ուսանողներին, հպարտանում նրանցով: Խոստանում եմ՝ ես նույնպես ամեն ինչ կանեմ՝ լավագույնների շարքերը համալրելու և քեզ հպարտություն ընծայելու համար:

Իմ ՀՊՏՀ, գիտեմ, դու կարդում ես գրածս, և ես ուզում եմ կրկին ու կրկին հավաստիացնել՝ դու դարձել ես իմ մասնիկը, քո ամեն մի ձեռքբերումը ես համարում եմ իմը, և ուզում եմ, որ դու ծաղկես ու զարգանաս, իսկ ես էլ ավելի մեծ հպարտությամբ ու բերկրանքով ասեմ՝ «Ես ՀՊՏՀ-ական եմ»:

Իմ ՀՊՏՀ



ԺՈՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ֆինանսական ֆակուլտետ, 4-րդ կուրս



ՈՒՄՈՒՅՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿԱՆ ԱՅԾԵՐ ԱՌՋԱՆՉ ՏԻՐՈՒՄԺՈՒՄ

Հայաստանում արտակարգ դրություն հայտարարելուց հետո բոլոր ուսումնական հաստատություններում դասապրոցները դադարեցված է: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության որոշմամբ՝ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններն անցել են առցանց ուսուցման: Գյումրու բուհերը ևս բացառություն չեն:

Ի տարբերություն մյուսների, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը դեռևս 1.5 տարի առաջ է սկսել առցանց ուսուցման փորձը ներդնել բուհում:

«Այն ժամանակ մենք Google Drive համակարգը ստեղծեցինք հատուկ մեր բուհի համար: Ասացինք, որ բոլոր դասախոսությունները պիտի թվայնացվեն, տեղադրվեն այդ համակարգում: Բացի դրանից, տեղադրվում են նաև գրականության ցանկը, բոլոր գրքերը, տեսանյութերը, որոնք համացանցում առկա են, պատճենված գրականությունը: Այդ համակարգ մուտքի թույլատրությամբ յուրաքանչյուր ուսանող կարող է մուտք գործել, ծանոթանալ առարկայական ծրագրին, հարցաշարին, այլ նյութերի»,- մեզ հետ զրույցում ասաց ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Կարեն Պետրոսյանը:

Ստեղծված իրավիճակում բուհն անցել է ամբողջական առցանց ուսուցման, նույնիսկ գործնական այցերն են տեղափոխվում առցանց տիրույթ: Այժմ ոչ թե ուսանողներն են այցելում կազմակերպություններ, այլ կազմակերպությունների փորձառու մասնագետներն են այցելում յուրաքանչյուր ուսանողի:

«Տաղանդների կառավարումը ֆինանսական համակարգում» թեմայով վեբինար անցկացրեց «Նաիրի ինշուրանսի» տաղանդների կառավարման բաժնի համակարգող Մանե Բաբայանը, շարունակական HR վեբինարներ են անցկացնում ANC ՍՊԸ համահիմնադիր, տնօրեն Արթուր Քցյանը և նույն կազմակերպության ոչ ֆորմալ ուսուցման ծրագրերի ղեկավար և դասընթացավար Նելլի Խաչատրյանը:

Ոչ միայն ուսանողներին, այլ նաև բոլոր հետաքրքրվողներին բուհն առաջարկում է մի քանի թույլտվություններ կտրվել կորոնավիրուսի առօրեական բանավեճերից ու քննարկումները տեղափոխել մասնագիտական դաշտ:

Գրեթե ամբողջ աշխարհում հայտարարված արտակարգ դրությունն ու սահմանափակումները ի՞նչ տնտեսական հետևանքներ են թողել, ի՞նչ սպասել առաջիկայում ու ինչպե՞ս դուրս գալ ստեղծված իրավիճակից:

Այս և մի շարք այլ հարցերի պատասխանում են ՀՊՏՀ ԳՄ դասախոսներն ու գործարարները: Առաջին հանդիպումն անցկացրեցին տ.գ.թ., դոցենտ, Հարվարդի համալսարանի գիտաշխատող, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության վերլուծաբան Քնարիկ Այվազյանը և Herbs & Honey Teashop-ի հիմնադիր, Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցի շրջանավարտ Արտուշ Եղիազարյանը:

Վեբինարներն անցնում են ակտիվ, հարց ու պատասխանի անմիջական մթնոլորտում:

ՍՈՇԻԱԼԱԿԱՆ _ ՊՐՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրու ծայրամասային մի թաղամաս, որտեղ սոցիալապես անապահով պայմաններում ապրում են Առաքելյանները՝ Լիլիթը՝ իր երեք անչափահաս երեխաների հետ: Դռների փոխարեն ծածկոցներ, պատերի ճեղքերը մի կերպ փակած պատտառներ: Արդեն 8 տարի՝ ընտանիքն ապրում է այս հասցեում և այս պայմաններում:

Վերջին օրերին առկա խնդիրներին ավելացավ ևս մեկը: Արտակարգ դրությունն այս ընտանիքում առավել արտակարգ զգացվեց, երբ կրթական համակարգն անցավ հեռավար ուսուցման: Մեծ մի հարցական կախվեց օդում. ինչպե՞ս սովորել, երբ չկա համակարգիչ ու համացանց:

Այսօր արդեն Առաքելյանների խնդիրը կարգավորված է: ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղն իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում ընտանիքին տրամադրել է համակարգիչ և ինտերնետ հասանելիություն է ապահովել:

Տեղում պարզվեց, որ համակարգիչ ու համացանց չունենալը երեխաների համար դեռ համակարգչային գիտելիք չունենալ չէր նշանակում: Շատ արագ կարողացան միանալ հեռավար կրթության նպատակով ԿԳՄՍՆ-ի գործարկած ծրագրին, գտան իրենց դասարանները, ուսուցիչներին ու արագ անցան գործի:

«Covid 19-ի հետևանքով առաջացած իրացվելիության և ֆինանսավորման մարտահրավերները»



Քնարիկ Այվազյան
ՀՊՏՀ ԳՄ դասախոս
Հարվարդի Համալսարանի գիտաշխատող



Արտուշ Եղիազարյան
«Herbs & Honey Teashop» հիմնադիր

Մայիս 11 19:00

Տաղանդների կառավարումը ֆինանսական համակարգում



Մանե Բաբայան
Նաիրի Ինշուրանս ԱՊԸ
տնօրենի կառավարման համակարգող

14:00
Մայիս 20

Առաքելյանների ընտանիքի սոցիալական վիճակի մասին բուհի տնօրինությանն ավելի վաղ տեղեկացրել է դասախոսներից մեկը՝ Չերմինե Հակոբյանն ու առաջարկել հոգաբարձության տակ վերցնել ընտանիքը:

«Ընտանիքի մասին տեղեկանալուց հետո, որոշեցինք տնայց կատարել ու դրա արդյունքում, որպես մեր սոցիալական պատասխանատվություն, ստանձնել ընտանիքի հոգաբարձությունը: Նաև առաջին քայլերից, որոնք արվել են, եղել է բնակարանի գազաֆիկացումը: Ամանորն այս ընտանիքը գազաֆիկացված բնակարանում է դիմավորել», - ասաց Կարեն Պետրոսյանը:

Շիրակի մարզում գործունեություն ծավալող բոլոր կազմակերպություններին մասնաճյուղը կոչ է անում ուշադրության կենտրոնում պահել սոցիալապես անապահով ընտանիքներին ու իրենց քայլերով նպաստել հոգաբարձության ինստիտուտի զարգացմանը:

Արտակարգ դրության պայմաններում համագործակցության ու աջակցության երկրորդ միջոցառումը մեր արձագանքն էր **«Պարենային շտապ օգնություն»** ծրագրին:

Կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու համար կիրառվում են մի շարք սահմանափակումներ, որոնց արդյունքում շատ քաղաքացիներ զրկվում են կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն ֆինանսական միջոցներից:

Շատ մարդիկ դժվարանում են վաստակել այնքան, որ հոգան ընտանիքի առաջնային կարիքները, ինչի հետևանքով նրանց ընտանիքների համար նվազագույն պարենային կենսապահովման խնդիր է առաջ գալիս:

Ծրագրի պատասխանատուներն իրենց առջև նպատակ են դրել սոցիալական աջակցության միջոցով Գյումրու սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել կենսական անհրաժեշտություն համարվող նվազագույն պարենային զանբյուղ: ՀՊՏՀ ԳՄ-ն 200 հազար ՀՀ դրամ է փոխանցում այդ նպատակի համար:

...ՎԱՐՁՎՃԱՐԻ ԶԵՂՉՄԱՆ ԵՎՈՒ ՄԵԿ ՏՐԱԳԻՐ ՀՊՏՀ ԳՄ-ԻՉ...

Այս շրջանում ամփոփվեց 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքներով, նախորդ տարվա համեմատ, առաջադիմության ամենաբարձր շարժընթաց գրանցած ուսանողների մրցույթը:

Հաղթող ճանաչված ուսանողները բուհի կողմից ստացան վարձավճարի 30% զեղչ:

Բակալավրիատում ամենամեծ առաջընթաց է գրանցել ֆինանսներ 2-րդ կուրսի ուսանող Արթուր Հովհաննիսյանը, մագիստրատուրայում՝ բանկային գործունեության կազմակերպում մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Էլիզաբեթ Հովհաննիսյանը:

Նմանօրինակ զեղչային ծրագրերը միտում ունեն աջակցելու ուսանողներին ոչ միայն ֆինանսական տեսանկյունից, այլ նաև լրացուցիչ խթանելու ուսումնական գործընթացում մեծ ջանքեր ներդնելու մղումն ու ցանկությունը:

Լենա Հովհաննիսյան

ՀՊՏՀ ԳՄ հանրային կապերի պատասխանատու

Առօստա _ դաստիարակ

Ուսանողական կյանքը, իրոք, շատ հետաքրքիր ու բովանդակալից էր և միևնույն ժամանակ՝ շատ ծանրաբեռնված: Իսկ ահա մարտի 16-ը բոլորիս կյանքը փոխեց:

Փոխվեց բոլորի համար՝ քնկոտների, առավոտյան դասից ուշացողների և դաս պատասխանողների:

Արտակարգ դրության և արտակարգ պայմաններում հավասարակշռություն պահելը բարդ է, ավելի քան բարդ է ճիշտ կողմնորոշվելը: Ուսանողները միասնական կերպով հասկացան, երբ կա դժվարություն՝ չընկճվել, երբ անելանելի է թվում՝ չընկնել:

Եվ ահա՝ անցում առցանց հարթակի. անցումը մեկ քայլ էր, ընդամենը՝ մեկ, բայց սկզբից՝ բավականաչափ դժվարին: Հետո արդեն՝ հարմարման ընթացք....





ՊԱՐԵՆԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ՝ 20 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ



Բարի գալուստ Zoom: Ինչպես ասում են շատերը՝ «**Ձում չի, «գուլում» է»**....., որն իր հետ բերում է նոր ուսանողական պատճառաբանություններ.

- *Լույսերը գնացել են, դասին չեն կարող մասնակցել,*
- *Ձեր ձայնը լավ չի լսվում, դուրս գանք, նորից միանանք,*
- *Դասի ժամանակ տանեցիները հայտնվել են վիդեոյում,*
- *Դասախոսը հարց է տվել՝ ձևացրել են, թե չեն լսել:*

Բայց վստահ եմ, որ ես, դու, բոլորս կարոտել ենք մեր առօրյան, մեր համալսարանը, և այս ամենը մեզ մի բան սովորեցրեց՝ **ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՆԵՆՔ:**

Կյանքը միայն ուսում չէ, սակայն եթե չես կարողանում անցնել կյանքի այդ փուլը, ապա ուրիշ ի՞նչ կարող ես անել: Ու բոլորս էլ գիտենք, որ հաջողությունը գալիս է միայն ինքնագարգացման և վճռականության դեպքում: Ես երբևէ չեմ ասել, որ ամենահպարտ ուսանողն եմ, որովհետև սովորում եմ լավագույն բուհում: Գիտեք չէ՞, երբեմն մտածում եմ, որ լավագույնը միշտ չէ, որ հետաքրքիրն ու սիրելին է, որովհետև այնտեղ կա ամեն ինչ, իսկ դու չես կարող քո մասնիկը թողնել:

Մինդեռ այստեղ՝ Վազգեն Սարգսյան 32-ում, ամեն ինչ այլ է:

Յուրաքանչյուր երիտասարդ պետք է պատասխանատու լինի ու հարգի իր որոշումները, իսկ իմ որոշման անունն էր ժող, որը ես պարտավոր եմ հարգել: Ես ընտրեցի ժողը, որովհետև այնտեղ նույնիսկ քայլելիս և երազելիս են ուսանողները տարբերվում: Համալսարանական չորս տարիների ավարտն ազդարարվում է ավարտական աշխատանքների պաշտպանությամբ, որոնց նախապատրաստական ողջ ընթացքն անցնում է լարված ու անհանգիստ:

2019 թվականի մայիսի 27-ին իմ ավարտական աշխատանքի պաշպանությունն էր: Այնպիսի սիրով եմ հիշում: Ժպիտ, հուզմունք, լարվածություն մինչ այն պահը, երբ կանգնում ես ամբիոնի մոտ ու արտաբերում. «Ես Մխիթարյան Արփինեն եմ, ավարտական աշխատանքիս թեման է ...»:

Կարծես՝ երեկ լիներ, հիշում եմ, թե ինչպես պաշտպանեցի, նույնիսկ ես էի զարմացել, որ չեմ շփոթվում. այնքան վստահություն ու մի հաճելի զգացողություն կար: Էն որ լսարանը լսում է, թե ինչ ես ներկայացնում, ու որ համձնաժողովը ասում է. «Շնորհակալություն, նստե՛ք»: Այդ պահին չես գիտակցում՝ դա քեզ հե՞տ է կատարվում, թե՞ երազ ես տեսնում: Կարծես՝ վերջանում է ժամանակը, ու հասկանում ես, որ 4 տարին ուղղակի սլացել է, ու էլ չի լինի անհոգ ու հաճելի կարգավիճակը:

Սիրելի՛ ուսանողներ, թո՛ղ ձեր ապագա բոլոր քայլերը հիմնված լինեն բարձր արժեքների, ազնիվ նպատակների և վեհ գաղափարների վրա: Հաա՛, ինչ ասում էի, սրա համար էի ասում. ԿՈՉՈՒՄԴ պատվով կրե՛ս, սիրելի՛ ուսանող..

Վայելի՛ր անվերջ թվացող կարճ ակնթարթը...

Արփինե Մխիթարյան
ՀՊՏՀ ԳՄ գործարար վարչարարություն
մասնագիտություն, մագիստրատուրա
1-ին կուրս



...Օգնել ուսանողին՝ դրսից տեսնելու իր ներսի փոքրիկ տիեզերքը և գնահատելու վերուստ իրեն տրվածի չափը...

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոսները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի շրջանակում ուսանողի համար գրագիտության նոր շերտերը, հայ գրականության ու հայագիտության խորքերը բացահայտելուց զատ, հոգևոր-մշակութային դասեր են նաև տալիս, զարգացնում ուսանողի ստեղծագործական միտքն ու ձիրքը, ձևավորում գեղագիտական ըմբռնումներ, մղում խոհական ու փիլիսոփայական մտորումների:

Ամբիոնի ղոցենտներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ Զուլբարան Երվանդյանը և Արծվիկ Սուվարյանը, դասախոսներ Լիլիթ Հակոբյանն ու Աննա Երկանյանը լսարանում ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որում յուրաքանչյուրն անկաշկանդ արտահայտվում է, որում երևակայության թռիչքը խրախուսվում է՝ դառնալով ինքնաճանաչման ու զարգացման փորձառություն:

Եվ որքան ոգևորիչ է, որ դասերն այս ոգով են ընթանում նաև վերջին ամիսների դժվարին պայմաններում: Առցանց տիրույթում նույնպես մեր դասախոսները հավատարիմ են իրենց աշխատանքային ու մասնագիտական սկզբունքներին և սիրով ու առանձնակի ոգևորությամբ օգնում են մեզ՝ ճանաչել մեր շնորհալիներին:

Զուլբարան Երվանդյանի այս անդրադարձով ցանկանում ենք ներկայացնել դասախոսի հավատամքը և այն, թե որչափ անմնացորդ սեր է նվիրաբերվում, անդուլ աշխատանք կատարվում և որքան գեղեցիկ ու հմայող են պտուղները:

Առի՞քնող, գեղեցիկ խոսք կառուցելու հմտություններին տիրապետելը մարդու հատկորոշիչ արժանիքներից է՝ անկախ կյանքի նրա ընտրած ուղուց ու մասնագիտությունից:

Այսօրյա ուսուցման խնդիրներից մեկն էլ սովորողի պատկերավոր մտածողությունը զարգացնելն է: Դրանով մենք կարող ենք օգնել նրան՝ ձեռք բերելու աշխարհը, մարդուն, իր ընտրած մասնագիտությունը պատկերների մի ամբողջական համակարգում ընդգրկելու հմտություն և կարողություն: Անվիճելի է՝ որքան մարդը շատ գեղարվեստական պատկերներ կուտակի ու ճիշտ ընկալի դրանց խորքը, այնքան կիզկվի նրա գեղագիտական ճաշակը, կզարգանա տրամաբանությունն ու վերացական մտածողությունը:

Այսօրվա ուսանողը վաղը կյանքի ավելի լայն հարթակներում է գործելու և կարիք է ունենալու իր խոսքում միահյուսելու տարբեր ոճերի տարրեր՝ չխախտելով ոճական միասնության պարտադիր պահանջը: Նման խոսքորակ ապահովելու համար նա պետք է կարողանա հստակ պատկերացնել բառի, խոսքի կիրառական ոլորտները: Բուհական ծրագրով սահմանված թեմաների զգալի մասը հնարավորություն է տալիս դասախոսին՝ այդ հարցում օգնելու ուսանողին: Եվ ոչ միայն: Օգտվելով ծրագրային թեմաների (տեքստագիտություն, ոճագիտություն, ճարտասանություն, բանակցելու, երկխոսելու, բանավիճելու արվեստ...) ընձեռած հնարավորություններից՝ հայերենի մասնագետներս փորձում ենք նաև սերնդի մեջ ազգային արժեքների նկատմամբ քաղաքացիական դիրքորոշում ձևավորել: Խոստովանենք. միայն մայրենիով, ճիշտ սովորեցրած մայրենիով է հնարավոր «Ջանուն հայրենյաց»-ը հնչեցնել այն շեշտադրումով, որն արթնացնում, ներշնչող է բարձրացնում է նախնյաց ոգին:

Ժամանակակից սերունդը գտնվում է մտավոր մեծ տեղաշարժերի ոլորտում և բնականաբար ապրում է դրանց հետ կապված հոգեցնցումների թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքները: Առաջացող բարոյահոգեբանական հակասությունների ու դժվարությունների հաղթահարմանը կարող են օգնել այն հնարքները, որոնք հնարավորություն են տալիս ազատվել ներաշխարհային կուտակումներից, խոհ-մտորումներից: Նման հնարք կարելի է դիտել, օրինակ, բարոյահոգեբանական, խոհափիլիսոփայական թեմաներով շարադրություն-



ների հանձնարարումը: (Ստեղծագործելու շնորհի ու ձիրք ունեցողները սովորաբար նախընտրում են տարբեր ժանրի փոքրածավալ գործեր: Ի դեպ, նման ուսանողների հետ արտադասային հանդիպումներ ենք կազմակերպում. փորձում ենք միասին բացահայտել ընտրած ժանրի հատկորոշիչ գծերը, խոսքի նրբիմաստներին տիրապետելու գաղտնագրերը): Կարծում եմ՝ շարադրությունը այն տեսքատեսակն է, որ դասախոսին հնարավորություն է տալիս իր դիտարկումներով, դիտողություններով ու գնահատողական խոսքով օգնել ուսանողին դրսից տեսնելու իր ներսի փոքրիկ տիեզերքը և գնահատելու վերուստ իրեն տրվածի չափը...

Այս օրերին իմ ուսանողներից շատերը ցույց տվեցին, որ իրենք գիտակցում են մի իսկություն. այն է՝ յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանք, անկախ տեսակից, ինքնին զգացում է, ոգի, գաղափար, մտածելու կերպ ու ոճ, ապրելու ձև...

Նման ուսանողների հետ աշխատելու հպարտությունս ուզում եմ արտահայտել՝ նրանց գրած շարադրություններից պատառիկներ մեջբերելով:

Ահավասիկ:

Երբ երկնային անձիբում նոր աստղ է բոցավառվում, երկրի վրա մի նոր սիրտ է սկսում բաբախել, ու թվում է՝ աշխարհը գրկաբաց սպասում էր նրա հայտնվելուն: Թվում է... Ծնվում է մարդը՝ իր երազներով մի նոր երանգ բերելով աշխարհ: Սակայն ապրում է՝ շատ հաճախ կյանքի ճանապարհներին այդ երազները հատ-հատ կորցնելով: Ու սկիզբ են առնում պատմությունները... Յուրաքանչյուր ոք ծնվում է իր պատմությամբ: Պատմությունները տարբեր են, սկիզբն ու ավարտն են նույնը...

....Սահմաններն անտեսանելի են: Երբեք չես կարող ասել, թե երբ սահմաններ ստեղծեցիր ինքդ քո և այս աշխարհի միջև: Կան սահմաններ, որոնք, քայլելով քո կողքից ու քեզ հետ հավասար, դառնում են քո սովերն ու պաշտպանում հարվածներից, ցավից: Կան նաև սահմաններ, որ մի օր սկսում են քեզ առանձնացնել, տարբերակել մյուսներից, ու դու հասկանում ես, որ հենց ինքդ չես հասկանում՝ որտեղից ես սկիզբ առնում, որտեղ՝ վերջանում...

(Սահակյան Էլեն, Ֆինանսական ֆակուլտետ, 1-ին կուրս, թեման՝ «Եռամիասնություն»)

Այսքան տարբեր-տարբեր մարդկանց այս «կորոնա» կոչվածը դրեց բարոյականության կշեռքի հավասար մեարների վրա: Այո՛, անիծյալ է, բայց այս համաշխարհային «մեղադրյալը» բոլորին մտածելու երկար ժամանակ տվեց: Շատ մարդիկ, կարծում եմ, հասկացան, որ կյանքում այնքա՛ն բան կա, որ ոչ վաստակած փառքով ձեռք կբերես, ոչ ունեցած հարստությամբ. ամեն ինչ սին ու դատարկ է, երբ ախտը չոքում է դառնդ...

....Մոլորակը ինքնամաքրվում է, գուցե մենք էլ հետևենք նրան...

(Հովհաննիսյան Աննա, Հաշվապահական Հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 1-ին կուրս, թեման՝ «Բազմերես կյանք»)



- **Լ**՛ուս, գիտե՞ս՝ ինչու աստղերը մեծ քաղաքներում չեն երևում:

- Ինչո՞ւ:

- Որովհետև այդ քաղաքներում ոչ ոք վերև չի նայում... Իսկ ո՞ւմ համար շողան աստղերը: Եթե նրանցով հիացող չկա, նրանց նայող ու երազանք պահող չկա, նրանց հետ թաքուն զրուցող չկա, էլ ինչո՞ւ երևան աստղերը...

(Գևորգյան Սաթենիկ, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, 1-ին կուրս, թեման՝ «Կորավող աստղեր»)


Ժամանակի առեղծվածը... Ասում են՝ ժամանակ չկա, «ժամանակ» հասկացությունը մարդիկ հնարել են քառսի մեջ չապրելու համար: Երևի թե: Համենայն դեպս, ես հաճախ եմ խորհում ինձ տրված, իմ ապրած ժամանակի մասին: Հաճախ ցանկանում եմ, որ ժամանակը թևեր ունենար. ես նստեի այդ թևերին, և նա ինձ տաներ այն աշխարհը, որտեղ երջանկությունն ու հաջողությունը խրախճանքի սեղանի շուրջ ինձ են սպասում: Ես լույսերի մեջ եմ. այնտեղ անհույս սպասում, սուտ ու հիասթափություն չկա, այնտեղ վախեր չկան, բաժանում չկա...

Իսկ հիմա... Հիմա ես պարզապես ժպտում եմ... Վատ չէ նման ժամանակ երազելը...

(Ներսիսյան Լուսինե, Հաշվապահական Հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 1-ին կուրս, թեման՝ «Ա՛ռ ինձ թևերիդ, ժամանակ»)

ՋՈՒՆԻՍԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

ԳՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.,
Հայաստանի Հանրապետության և
Արցախի Հանրապետության
գրողների միության անդամ



COVID-19 համավարակ.

հաղթահարման ճանապարհին

Սեզ շրջապատող բնության մեջ գոյություն ունեն մի քանի միլիոն տեսակի վիրուսներ, և նրանց գոյատևման հիմնական նախապայմանը նոր տերեր ձեռք բերելու ընդունակությունն է: Այսօր աշխարհում պայթար է ընթանում, պատերազմում են երկու կենսաբանական տեսակներ՝ մարդը և վիրուսը: Ժամանակ առ ժամանակ վիրուսին հաջողվում է հաղթահարել տեսակային պատնեշը և ներթափանցել նոր տեսակի մեջ՝ տվյալ դեպքում մարդու մարմին և սկսել իր հաղթական երթը ամբողջ աշխարհով, ինչը և տեղի ունեցավ մեր օրերում:

Կորոնավիրուսը բնության մեջ վիրուսի նոր տեսակ է: Առաջին անգամ այն հայտնաբերվել է 1937 թ. թռչունների մոտ, իսկ 1965 թ.՝ մարդու: Արդեն իսկ հայտնաբերված է կորոնավիրուսի շուրջ 40 տեսակ, և մինչև վերջերս համարվում էր, որ միայն 6 տեսակն է մարդու համար ախտածին: COVID-19 (COroNA Virus Disease) շտամը*, որը պանդեմիա է առաջացրել, աշխարհում բացահայտված յոթերորդ տիպն է:

Կորոնավիրուսի առաջին բռնկումը եղել է Չինաստանում 2002-2003 թթ.՝ առաջացնելով ատիպիկ թոքաբորբ՝ SARS-CoV (Severe Acute Respiratory Syndrome)՝ ծանր սուր ռեսպիրատոր սինդրոմ, 2013 թ. ի հայտ եկած MERS-CoV (Middle East Respiratory Syndrome) մերձարևելյան ռեսպիրատոր վարակը նույնպես կորոնավիրուսի տեսակ է, առաջացնում է ռեսպիրատոր սինդրոմ: Այս վիրուսի առաջնային կրողներն ուղտերն են, իսկ մարդուց մարդուն տարածվում է սերտ շփման դեպքում, կլինիկական ընթացքը նման է SARS-ին, բայց ավելի ազդեցիկ դրսևորումով և բարձր մահացության ցուցանիշով:

COVID-19 նոր ինֆեկցիոն հիվանդություն է, որի հարուցիչն է SARS-CoV-2-ը կամ 2019-nCoV-ը,

քանի որ առաջին անգամ հայտնաբերվել է 2019 թ.՝ Չինաստանի Չուբեյ նահանգի Ուհան քաղաքում: Երբ դեկտեմբերի 8-ին արձանագրվեց նոր կորոնավիրուսի առաջին դեպքը, արդեն հունվարի 10-ին չինացի գիտնականները բացահայտեցին վիրուսի գենոմը, որը միաշղթա ՌՆԹ է (ռիբոնուկլեաթթու)՝ շրջապատված սպիտակուցալիպիդային թաղանթով, որից անջատվում են քորոցանման փշաելուստներ, որոնք նմանվում են թագի: Այստեղից էլ ծագել է «կորոնավիրուս» անվանումը (corona-թագ):

Գենոմի հայտնաբերումով հիմք դրվեց պատվաստանյութ ստեղծելու գործընթացին: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեր հայրենակից Նուբար Աֆեյանի ղեկավարած «Մոդեռնա» թերապևտիկ ընկերությունը սկսեց պատվաստանյութի սինթեզման աշխատանքները, իսկ կանադական «Միդիկազո» բիոտեխնոլոգիական լաբորատորիայում աշխատանքներ են կատարվում գենային ինժեներիայի ուղղությամբ: Հարկ է նշել, որ հենց «Մեդիկազո» ընկերությունը 2009 թ. սինթեզեց H1N1-ը, որն այսօր հաջողությամբ կիրառվում է:

Եվ ահա հարց է առաջանում. եթե պատվաստանյութ դեռևս չի ստեղծվել, ապա որո՞նք են հակահամաճարակային միջոցառումները:

Հակահամաճարակային միջոցառումների շարքում առաջին տեղում պետք է լինի մեկուսացումն ու էպիդեմիկ շղթայի կազմալուծումը: Այսօր ապացուցված է, որ նոր տեսակի կորոնավիրուսը քայքայվում է 56°C ջերմաստիճանում, 15 րոպեում: Հետևաբար սխալ է այն կարծիքը, որ ամռանը կորոնավիրուսը ինքն իրեն կվերանա: Եթե մինչև անգամ դա այդպես էլ լիներ, այնուհանդերձ, ցավոք, ստեղծված իրավիճակը այնպիսին է, որ մենք չենք կարող սպասել և վտանգել բազմաթիվ մարդկանց կյանքն ու առողջությունը, հատկապես՝ խոցելի խմբերի: Հետևաբար համաճարակային շղթաները անհրաժեշտ է ընդհատել հնարավորինս արագ, և եթե դեռևս հնարավոր չէ բոլորին ախտորոշել, ապա բոլոր ջերմող և հարբուխ ունեցող հիվանդներին պետք է դիտարկել որպես հավանական հիվանդ: Այդ մարդկանց անհրաժեշտ է մեկուսացնել:

COVID-19-ի վերարտադրողականության (ռեպրոդուկցիայի) ինդեքսը հավասար է չորսի, դա նշանակում է, որ նոր տիպի կորոնավիրուսը պահպանում է իր կենսունակությունը, եթե յուրաքանչյուր վարակ-

* Շտամ՝ միկրոբազմիզմների որոշակի տեսակի մաքուր կուլտուրա, որի մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններն ուսումնասիրված են:



ված իր հերթին վարակում է չորս և ավելի անձի: Հակառակ դեպքում, վիրուսն աստիճանաբար կորցնում է իր վիրուլենտությունը (վարակելու ունակությունը) և ոչնչանում: Օրինակ, էբոլա վիրուսի համար այդ ցուցանիշը հավասար է երկուսի, կարմրախտի համար՝ վեցի, կարմրուկի համար՝ 15-ի: Այստեղից հետևություն, եթե հնարավոր լինի մեկուսացնել յուրաքանչյուր վարակվածին, ապա վիրուսը կավարտի իր կենսաբանական պարբերաշրջանը: Այս գործընթացում ահռելի դեր պետք է խաղա անհատի բարձր ինքնագիտակցությունը և ինքնամեկուսացման հետևողական կիրառումը: Սակայն միայն մեկուսացումը բավարար չէ, անհրաժեշտ է որդեգրել վարքի նոր պայմաններ և ապրել նոր կանոններով:

COVID-19 փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով, ինչպես նաև սերտ շփման միջոցով՝ գրկախառնություն, ձեռքսեղմում, համբույր: Հետևաբար, չպաշտպանված շփման դեպքում, այսինքն՝ առանց դիմակի և ձեռնոցի, մարդկանց միջև նվազագույն հեռավորությունը պետք է լինի 1,5-2 մետր: Վարակման հավանականությունը կտրուկ մեծանում է նաև չօդափոխվող և փոքր տարածքներում երկար՝ 15 րոպե և ավելի գտնվելու դեպքում: Վարակը կարող է տարածվել տարբեր առարկաների միջոցով՝ հեռախոս, թղթադրամ, պայուսակ, դրամապանակ, մետաղական իրեր: Հետազոտությունները ցույց են տվել, որ հարուցիչը տարբեր մակերեսների վրա ունակ է գոյատևել և շարունակել վարակել: Այսպես օրինակ՝

- փայտ և պլաստմասսայե իրեր՝ մինչև 48 ժամ,
- մետաղական իրեր՝ 24 ժամ (որոշ տվյալներով՝ ավելի երկար),
- հագուստ՝ 12 ժամ,
- ջրում, կախված ջերմաստիճանից, մի քանի ժամից մինչև մի քանի օր:

Անհրաժեշտ է նշել, որ վարակվածների շուրջ 80%-ը զանգատ գրեթե չի ունենում, հիվանդությունն ընթանում է թեթև ու միջին ծանրության և բացասական հետևանք չի թողնում: Սակայն 20%-ի մոտ, հատկապես՝ խոցելի խմբերում՝ մեծահասակներ (60 տարեկան և բարձր) և քրոնիկ հիվանդություններով տառապողներ (թոքային պաթոլոգիա, սիրտ-անոթային հիվանդություններ, հիպերտոնիա, շաքարային դիաբետ, ճարպակալում և այլն) դրսևորվում են վիրուսի բացասական ախտանիշները և հետևանքները: Բացի դրանից, վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավելի հաճախ հիվանդանում են տղամարդիկ, քան կանայք, և մահացածների 2/3-ը տղամարդիկ են, իսկ 1/3-ը՝ կանայք: Ծանր դեպքերում հիվանդների մոտ զարգանում է թոքաբորբ, շնչահեղձություն, արագասրտություն:

Շատերին է հետաքրքրում, թե արդյոք ինչպես տարբերակել հարբուխի և COVID-19-ի կլինիկական ախտանիշները: Հստակ և ակնհայտ տարբերակիչ նշաններ չկան, հիմնականում դրանք նման են բոլոր շնչառական հիվանդությունների նշաններին: Ամփոփելով վիճակագրական տվյալները՝ կարելի ասել, որ հիվանդների 89%-ի մոտ նկատվել է ջերմության բարձրացում շուրջ 38-38,5°C, 81%-ի մոտ՝ չոր հազ, 31% վարակվածների մոտ տարածության վրա լսվում են խզզոցներ, շնչահեղձություն, հևոց, շուրջ 11%-ի մոտ՝ մկանային ցավեր և միայն 4% հիվանդ-



ների մոտ է նկատվում քթահոսություն, իսկ մի խումբ հիվանդներ նշում են հոտառության անհետացում: Այնուամենայնիվ, նույնիսկ բոլոր ախտանիշներն ունենալու դեպքում, վերջնական ախտորոշումը դրվում է թեստի արդյունքով:

Շատ հաճախ հանդիպում են անախտանիշ (ասիմպտոմ) դեպքեր, երբ մարդը չունի հիվանդության ոչ մի ախտանիշ, բայց վարակակիր է: Հետևաբար, նոր կորոնավիրուսի դեմ պայքարում կարևոր են ոչ միայն պետության և առողջապահության նախարարության կողմից իրականացվող միջոցառումները, այլ նաև մարդկանց քաղաքացիական պատասխանատվությունը և կոլեկտիվ գիտակցությունը:

Հարկավոր է լինել զգոն, չմատնվել խուճապի, չհուսահատվել, քանի որ արդեն իսկ կան բուժման հստակ ընթացակարգեր, սխեմաներ, ժամանակի ընթացքում կձևավորվի կոլեկտիվ դիմադրողականություն (իմունիտետ) և, իհարկե, կստեղծվի պատվաստանյութ:

Վստահաբար, հաղթահարելու ենք համավարակը:

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Երբ ավարտել էի հոդվածը, կարդացի սպասված լուրը: Financial Times-ը գրում է, որ Նուբար Աֆեյանի հիմնադրած «Սողեռնա» ընկերությունում կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի փորձարկումների առաջին փուլն ավարտվել է հաջողությամբ: Հայտարարվել է, որ mRNA-1273 անվամբ պատվաստանյութի նմուշը անվտանգ է, և մասնակիցների օրգանիզմը փորձարկումը լավ է ընդունել: Առաջին փուլին մասնակցել է 45 հոգի: Փորձարկման մասնակիցները 18-55 տարեկան են, ստացել են պատվաստանյութի երկու դեղաչափ, երկրորդ դեղաչափը ստանալուց երկու շաբաթ հետո մասնակիցների մոտ առաջացել են նույնքան հակամարմիններ, որքան նկատվում է COVID-19-ով հիվանդացած և ապաքինված մարդկանց մոտ:

«Սողեռնա» ընկերությունը հայտարարել է, որ շուտով մեկնարկելու է փորձարկումների երկրորդ փուլը, իսկ հուլիս ամսին՝ 3-րդը՝ հույս հայտնելով, որ արդյունքները հնարավոր կլինի հրապարակել մինչև տարեվերջ:

ՆԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԳՏՀ ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության անբիոնի դասախոս



Փետրվարի 21-ին ՀՊՏՀ-ում մեկնարկեց «Հոսպիտալ մենեջմենթ» 2-րդ դասընթացը, որի կազմակերպիչներն են ՀՊՏՀ-ն ու Ազգային բժշկական պալատը:

Մասնակիցներին ողջունեցին ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը, արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանը:

Պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը հավաստիացրեց, որ այս դասընթացը մասնագիտական գիտելիքների և որակավորման բարձրացման արդյունավետ հարթակ է լինելու՝ վկայակոչելով նախորդ դասընթացի արդյունքները՝ մասնակիցների պաշտոնական առաջընթացն ու գոհունակությունը:

Ողջույնի խոսք ասաց Ազգային բժշկական պալատի նախագահ, դասընթացավար Նարեկ Վանեսյանը, գործակցության համար շնորհակալություն հայտնեց ՀՊՏՀ-ին, ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանին, ապա մասնակիցներին վստահեցրեց՝ առաջիկա ամիսներին ստանալու են իրենց ոլորտին առնչվող բացառապես նոր գիտելիք:

Առաջին դասը «Առողջապահության կառավարում» թեմայով էր:

Մարտի 10-ին համալսարանում վկայականներ հանձնվեցին «Հոսպիտալ մենեջմենթ» դասընթացի 29 մասնակիցներին: Ներկա էին Դիանա Գալոյանը, Արմեն Գրիգորյանը, Նարեկ Վանեսյանը, Լուսինե Դանիելյանը, Աղավնի Հակոբյանը, հյուրեր, դասընթացավարներ, դասընթացի մասնակիցներ, որոնք երևանյան և մարզային առողջապահական կենտրոնների աշխատակիցներ են:

Դիանա Գալոյանը հույս հայտնեց, որ առաջին փորձը դրական է և հետագա գործունեության լավ մեկնարկ կդառնա, ապա տեղեկացրեց, որ համալսարանը նույն օրը ԿԳՄՍՆ-ից ստացել է «Բուժ-հաստատությունների կառավարում» և «Առողջապահության կառավարում և վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա:

Նարեկ Վանեսյանը շնորհակալություն հայտնեց ՀՊՏՀ-ին՝ իրենց նախաձեռնությանն աջակցելու համար, ապա շնորհավորեց մասնակիցներին:

Կարճաժամկետ դասընթացները ՀՊՏՀ-ում կազմակերպում է արտաքին կապերի դեպարտամենտի շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը:

Փետրվարի 12-ի բաց դասին Targeting և ArmAdventure ընկերությունների համահիմնադիր և կոմերցիոն տնօրեն, ՀՊՏՀ շրջանավարտ Էմիլ Կրոյանը դասախոսեց «Վաճառքի տեսակները և առանձնահատկությունները ՀՀ-ում» թեմայով: Հյուրին ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը:

Դասը հայաստանյան շուկայում էնդոցինալ և ռացիոնալ վաճառքների, խոշոր և մանր գործարքների կազմակերպման առանձնահատկությունների, բիզնեսում վաճառքների կարևորության, մարքեթինգի և վաճառքի ծավալի փոխկապվածության մասին էր: Կազմակերպիչն էր աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժինը:

Փետրվարի 18-ին մեր համալսարանում էին Էվոկաբանկի հաճախորդների սպասարկման որակի կառավարման դեպարտամենտի ղեկավար Վարդուհի Հարությունյանը և ՄՈԿ բաժնի ավագ մասնագետ Տաթև Վարդանյանը. ավագ կուրսերի ուսանողներին նրանք ներկայացրին Էվոկաբանկի ուսուցողական «Էվոկալաբ-6» ծրագիրը, բանկի աշխատանքային պայմանները, պատասխանեցին հարցերին: Հանդիպմանը ներկա էին բանկային գործի և ապահովագրության ամբիոնի վարիչի ժ/պ Աշոտ Մարդոյանը, նույն ամբիոնի ասիստենտ Տիգրան Բեկթեմուրյանը:



Փետրվարի 18-ին մեր համալսարանում էին ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի առաջատար մասնագետներ Անաստասիա Ստեփանովան և Պավել Մալիչևը: Ներկա էին ֆինանսների ամբիոնի վարիչ Աշոտ Սալնազարյանը, միջազգային կապերի բաժնի պետ Սոնա Մատինյանը, դասախոսներ, աշխատակիցներ, Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Հայաստանի նախագծերի համակարգող Նոնա Միրզախանյանը, ֆինանսական ֆակուլտետի ուսանողներ:

Պավել Մալիչևը դասախոսեց «Ինչպե՞ս արդյունավետ կառավարել ֆինանսական միջոցները ձեռնարկություններում բարձր անորոշության պայմաններում» թեմայով, Անաստասիա Ստեփանովան՝ «Վարքագծային կորպորատիվ ֆինանսներ կամ ինչո՞ւ է մարդկանց նշանակությունը այդքան մեծ բիզնեսում»: Դասախոսությունները խարսխված էին հետազոտությունների և կիրառական առաջարկությունների վրա:

Հանդիպումը կազմակերպել էր միջազգային կապերի բաժինը:

Հերթական կարճաժամկետ դասընթացը, որը նվիրված էր R ծրագրավորման լեզվին, ավարտվել է փետրվարի 22-ին: Դասընթացը կազմակերպել էր շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը, վարել է «Դեյթամոտուս» ընկերության համահիմնադիր, ՀՊՏՀ շրջանավարտ Վահե Մովսիսյանը, մասնակցել են դասախոսներ և ուսանողներ, ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների աշխատակիցներ (17 մասնակից): Դասընթացի ավարտից հետո մասնակիցների շրջանում բաժինն անցկացրել է հարցում և ստացել բարձր գնահատական: Մասնակիցները նաև գոհունակություն են հայտնել դասընթացավարներից՝ նյութը պատշաճ և հետաքրքրաշարժ մատուցելու համար:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոսները՝ ամբիոնի վարիչ Գագիկ Աղաջանյանի գլխավորությամբ, փետրվարի 17-ին «Կառույցների ինֆորմացիոն մոդելավորում, կայուն և վերամշակվող շինություն» թեմայով մասնագիտական վերապատրաստում են անցել Նիդեռլանդների ICN Group-ի «ԱրխիԴաչ» ընկերության (հիմնադիր Նատաշա Միրզոյանց) հայաստանյան մասնաճյուղում՝ ծանոթանալով միջազգային ճարտարապետության, ճարտարագիտության և շինարարության ոլորտների նորարարություններին, հայկական նախաձեռնություններին, կայուն զարգացմանը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, ածխաթթու գազի արտանետումների և թափոնների նվազեցման հնարավորություններին:

Դասընթացը Նիդեռլանդներից հեռահար վարել է ICN Group-ի BIM-ի խորհրդատու Բաս Ուոլվը: Դասընթացի ավարտին «ԱրխիԴաչ»-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարինե Աբրահամյանը ՀՊՏՀ-ին նվիրել է Space for New Economy, Productive Amsterdam գիրքը:



Լիոնի քաղաքական գիտությունների համալսարանի ուսանող Ջուլի Օդոնը ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձնակ է: Փետրվարի 18-ին նրան հյուրընկալեց ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը: Հանդիպմանը ներկա էին նրա փորձառության ղեկավար, «Ամբերդի» փոխտնօրեն-ավագ փորձագետ Վարդան Աթոյանը, արտաքին կապերի ղեկարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, միջազգային կապերի բաժնի պետ Սոնա Մատինյանը:

Ջուլի Օդոնը շնորհակալություն հայտնեց հրավերի և հյուրընկալության համար: Բուհի ղեկավարը հույս հայտնեց, որ նրա փորձառությունը կլինի արդյունավետ, և համալսարանի անձնակազմը պատրաստ է աջակցել ցանկացած հարցում:



«Այ էյ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիայի կազմակերպած միջբուհական ամենամյա Finance challenge մրցույթում ՀՊՏՀ-ն 2-րդ անգամ դարձել է գավաթակիր: Մրցույթը տեղի է ունեցել փետրվարի 20-ին, մասնակցել է 5 բուհ, ոսկե գավաթակիր են դարձել 3-ը՝ ՀՊՏՀ-ն, Հայաստանում ամերիկյան և ֆրանսիական համալսարանները:

Մրցույթում առաջադրվել են ֆինանսական ոլորտին առնչվող իրավիճակային խնդիրներ, թիմերի տված լավագույն լուծումները գնահատվել են մրցատյանի կողմից:

ՀՊՏՀ թիմը ներկայացրել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի բակալավրիատի 3-4-րդ կուրսերի 11 ուսանող: Մրցույթին թիմի մասնակցությունը համակարգել է ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ Լևոն Սահակյանը:



Փետրվարի 2-ին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը հանդիպեց «Այ էյ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիայի կազմակերպած միջբուհական ամենամյա Finance challenge մրցույթում ոսկե գավաթակիր դարձած հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի բակալավրիատի 3-4-րդ կուրսերի ուսանողներին, ինչպես նաև ՀՊՏՀ ֆուտբոլի հավաքականի մարզիկներին, որոնք «Ֆուտբոլ A լիգա» մրցաշարի կրկնակի չեմպիոն են դարձել: Միջոցառմանը ներկա էին արտաքին կապերի ղեկարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ղեկան Սերի Բադալյանը, ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ Ալվարո Սարգսյանը, ֆիզդաստիարակության, ԱԻ և ԶՊ ամբիոնի վարիչ Հովհաննես Գաբրիելյանը:

Դիանա Գալոյանը նշեց, որ ուսանողների հաջողություններն ու հաղթանակները ոգևորիչ են և պատվաբեր, հույս հայտնեց, որ նրանք իրենց հաղթարշավը կշարունակեն հանրապետական այլ նախագծերում և կխանդավառեն բուհի մյուս ուսանողներին ևս:

Շնորհավորանքի ջերմ խոսքեր ասացին նաև Սերի Բադալյանը, Ալվարո Սարգսյանը և Հովհաննես Գաբրիելյանը, նաև աջակցության համար շնորհակալություն հայտնեցին բուհի ղեկավարին:

Տեղի ունեցավ պարգևատրման արարողություն, մարզիկները ռեկտորի պաշտոնակատարին փոխանցեցին հաղթական գավաթը:

Փետրվարի 20-ին հայտարարվեց ուսանողներին ուղղված հերթական նախագծի՝ Skill Up-ի մասին: Բուհի ղեկավարության նախաձեռնության նպատակն էր անվճար դասընթացների միջոցով ուսանողներին փոխանցել այնպիսի գործնական հմտություններ և կարողություններ, որոնք պահանջված են աշխատաշուկայում: Նախատեսվում էր հայաստանյան լավագույն մասնագետների ներգրավմամբ ուսանողների համար կազմակերպել 5 դասընթաց (Business Communication skills (Communication, Problem-solving, Time-management), English Speaking Skills, Digital Marketing and SMM, Business Tools (SPSS, Advanced Excel), Public Speaking and Presentation skills): Ընտրությունը ուսանողները պետք է կատարեին համաբուհական առցանց քվեարկության միջոցով, ՀՊՏՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Նախագծի իրականացմամբ զբաղվող ՀՊՏՀ շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանի փոխանցմամբ՝ համաբուհական քվեարկությունն ավարտվել է, դասընթացներն ընտրվել են, և դասերի մեկնարկին զուգահեռ դրանք կիրականացվեն:

Մայիսի 14-ի ռեկտորատի առցանց նիստում քննարկվել է 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակներ տրամադրելու հարցը: Գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «ՀՊՏՀ ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» համաձայն՝ հաստատվել է 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուների վերաբերյալ մանրատային հանձնաժողովի որոշումը: Ըստ այդ որոշման.

Ձաքարե Բաշինջառյանի անվան կրթաթոշակ է տրամադրվել **Անահիտ Սահակյանին**, կառավարման ֆակուլտետ, կառավարում (ըստ ուղորտի) մասնագիտություն, 4-րդ կուրս,

Հովհաննես Թումանյանի անվան կրթաթոշակ՝ **Անի Եղոյանին**, ֆինանսական ֆակուլտետ, ֆինանսներ (ըստ ուղորտի) մասնագիտություն, 4-րդ կուրս,

Միքայել Քոթանյանի անվան կրթաթոշակ՝ **Անդրանիկ Սարգսյանին**, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, տնտեսագիտություն մասնագիտություն, 4-րդ կուրս,

Վլադիմիր Ներկարարյանի անվան կրթաթոշակ՝ **Սելինե Արա-համյանին**, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, շուկայաբանություն (մարքեթինգ) (ըստ ուղորտի) մասնագիտություն, 4-րդ կուրս,

Անուշավան Արզումանյանի անվան կրթաթոշակ՝ **Տաճատ Պապոյանին**, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ, վիճակագրություն մասնագիտություն, 4-րդ կուրս,

Կարախ Կարագյանի անվան կրթաթոշակ՝ **Հայկ Զալանթարյանին**, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ուղորտի) մասնագիտություն, 3-րդ կուրս,

Ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող կրթաթոշակ՝ **Նարինե Պետրոսյանին**, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, տնտեսագիտություն մասնագիտություն, 3-րդ կուրս:



Փետրվարի 19-ին՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան և Գիրք նվիրելու օրը ՀՊՏՀ գրադարանի Մուշեղ Արմենցի անվան ընթերցասրահում հյուրընկալվել էր «Քո սեփական բիզնեսը Հայաստանում» գրքի հեղինակ, բիզնեսի խորհրդատու, քուլչ Սամվել Գևորգյանը: Հյուր էր նաև գրող, հրապարակախոս Արթուր Հայրապետյանը: Մասնակցում էին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը, դասախոսներ, աշխատակիցներ, ուսանողներ:

Դիանա Գալոյանը շնորհավորեց գրքասերների տոնը, կարևորեց օրվա խորհուրդն ու ներկայացրեց հյուրերին: Ողջույնի խոսք ասաց գրադարանի տնօրեն Արմինե Հովհաննիսյանը: Միջոցառման առաջին հատվածում Սամվել Գևորգյանը ներկայացրեց գրքի ստեղծման պատմությունը: Արթուր Հայրապետյանն ուսանողներին առաջարկեց Թումանյան ասունքել, ՀՊՏՀ-ականներն ասունքեցին ու գրքեր նվեր ստացան: Մասնակիցները միմյանց գրքեր նվիրեցին, ուսումնառության մեջ առաջադիմություն ցուցաբերած ուսանողները գրքեր ստացան Դիանա Գալոյանից և հյուրբանախոսներից:

Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փոխտնօրեն-ավագ փորձագետ Վարդան Աթոյանը, դոցենտներ Սիրակ Հովհաննիսյանը և Հակոբ Մանուչարյանը փետրվարի 21-22-ին մասնակցել են Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) կողմից կազմակերպված «Ներգրավված քաղաքացի. համալսարանական դասընթաց» դասախոսների վերապատրաստման առաջին փուլին, որն իրականացվում է «Ընտրական գործընթացների և քաղաքական հաշվետվողականության ամրապնդում Հայաստանում» (SEPPA) ծրագրի շրջանակում: Միջոցառման աջակիցն է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

Վերապատրաստումը միտված էր ուսուցման ինտերակտիվ նոր մեթոդների վերաբերյալ դասախոսների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև ժողովրդավարության պայմաններում ներգրավված և իրազեկ քաղաքացիներ պատրաստելու համար անհրաժեշտ հմտությունների կատարելա-

գործմանը: Վերջնարդյունքում նախատեսվում է Հայաստանի 5 բուհերում ներդնել քաղաքացիական կրթության վերաբերյալ «Ներգրավված քաղաքացի» կրթական դասընթացը:



ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը և «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ նախագահ Վահագն Համբարձումյանը փետրվարի 25-ին ստորագրեցին համագործակցության հուշագիր: Համագործակցությունը հաստատվել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան Մերի Բադալյանի նախաձեռնությամբ, հանդիպմանը մասնակցում էին ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ Ալվարո Սարգսյանը, արտաքին կապերի ղեկավարամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, ՀՊՏՀ Change Lab-ի համահիմնադիրներ Արտակ Ասլանյանը և Կարեն Սարգսյանը:

Հուշագիրը նախատեսում է երկու կազմակերպությունների համագործակցություն կրթական ծրագրերի շրջանակներում, ուսանողների փորձառության, բաց դասերի, սեմինարների կազմակերպում, ուսումնամեթոդական նյութերի հրատարակում և այլն: Ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը ներկայացրեց ՀՊՏՀ-ում գործատուների հետ իրականացվող աշխատանքը, Վահագն Համբարձումյանը՝ իրենց կազմակերպության գործունեությունը, այն կարևոր ուղղությունները, որտեղ ակնկալում է սերտ գործակցություն:

Հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մարտի 17-ին բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին հրավիրել էր քննարկման: Հանդիպումը վարել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանը:

ՀՊՏՀ ռեկտորատը, հաշվի առնելով նոր կորոնավիրուսային համավարակի հետևանքով երկրում հայտարարված արտակարգ դրությունը և դրա բացասական տնտեսական հետևանքները, ՀՊՏՀ 185 ուսանողի տրամադրել է ուսման վարձի գեղջ 30 տոկոսի չափով:



«Արմենիան Լիզինգ Քամփնի»-ի համահիմնադիր և գործադիր գլխավոր տնօրեն, «Փարթներս Ինվեստ» ընկերության համահիմնադիր, ՀՀ-ում ԵԱՏՄ Լիզինգի ենթախմբի ներկայացուցիչ և անդամ, PhD գիտական աստիճան և PMP որակավորման աստիճան ունեցող Արսեն Բազիկյանը փետրվարի 26-ին «Լիզինգը՝ բիզնեսի շարժիչ» թեմայով վարպետության դաս վարեց ՀՊՏՀ-ում, որին մասնակցում էին Համաշխարհային բանկի, հայաստանյան բանկերի ներկայացուցիչներ, ուսանողներ:

Մինչ հանդիպումը, ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը և Արսեն Բազիկյանը պայմանագիր ստորագրեցին ուսանողների ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունը «Արմենիան Լիզինգ Քամփնի»-ում կազմակերպելու մասին: Մասնակցում էին արտաքին կապերի ղեկավարամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժնի պետ Գևորգ Սարգսյանը, նույն բաժնի աշխատակիցներ: Այնուհետև կայացավ հյուրի հետ հանդիպումը, ներկաներին ողջունեց Դիանա Գալոյանը՝ ընդգծելով, որ Արսեն Բազիկյանը ՀՊՏՀ շրջանավարտ է, և նրա հաջողության պատմությունը կարող է ոգևորիչ լինել ուսանողների համար:

Բանախոսը ներկայացրեց լիզինգ երևույթը, գործարքի էությունը, առանձնահատկությունները, գործարքի փուլերը, լիզինգի դերը ապահովագրական ու վարկային ընկերությունների համար:

Մարտի 11-ին ՀՊՏՀ հյուրերն էին Ինելկոբանկի տաղանդների ներգրավման և ինտեգրման ավագ մասնագետ Էլինա Ստեփանյանը և վերապատրաստումների և մասնագիտական զարգացման բաժնի ավագ մասնագետ Արփինե Բարսեղյանը: Հանդիպմանը ներկա էին վերոնշյալ ամբիոնի վարիչի ժ/պ Աշոտ Մարդոյանը, ամբիոնի դասախոսներ, ֆինանսներ մասնագիտության 3-4-րդ կուրսերի ուսանողներ, բանկային գործունեության կազմակերպում մասնագիտացման մագիստրանտներ:

Բանկի ներկայացուցիչները խոսեցին Ինելկոբանկի գործունեության մասին, ապա ներկայացրին ուսանողական «Ինելկոբ» ծրագիրը, որը վերապատրաստում է երիտասարդներին և լավագույններին աշխատանք առաջարկում:

Մարտի 9-ին մեր համալսարանում էին Ամերիաբանկի աշխատակիցները: Հանդիպումը կազմակերպել էր արտաքին կապերի ղեկավարամենտի աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժինը, ներկա էին ղեկավարամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, կազմակերպիչ բաժնի պետ Գևորգ Սարգսյանը, աշխատակիցները:

Ամերիաբանկի տաղանդների ներգրավման մասնագետներ Լիլիթ Կարապետյանը և Մանե Դիլոյանը ներկայացրին «Ամերիա Սերունդ 12» ծրագիրը, որի շրջանակում 21-27 տարեկան երիտասարդները բանկում եռամսյա վերապատրաստում են անցնում, լավագույնները՝ ստանում տարբեր ստորաբաժանումներում աշխատանքի առաջարկ: Բանկի աշխատակիցները խոսեցին բանկային ոլորտում աշխատանքի առանձնահատկությունների, Ամերիաբանկի գործունեության ու «Ամերիա Սերունդ 12» ծրագրի մասին:



ՀՀ ՏՄՊՊՀ նախագահ Գեղամ Գևորգյանը փետրվարի 26-ին հանդիպել է ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանին և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն Դավիթ Հախվերդյանին: Քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում համագործակցության հարցեր, մասնավորապես՝ հանձնաժողովի աշխատանքներում տեղական գիտական ներուժի օգտագործումը, ինչպես նաև բուհից աշխատաշուկա անցումն ավելի սահուն դարձնելուն միտված համատեղ քայլերը:



«Ինֆորմատիկա» առարկայի դասախոսի առաջադրանքի համաձայն՝ կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Վալենտինա Ստեփանյանը իր ստեղծած կայքում համախմբել է բոլոր 60 կուրսը կերտներին և իրենց դասավանդող դասախոսներին՝ նույնականացնելով նրանց և կայքը ծառայեցրել կուրսում առջանց կրթության կազմակերպման գործին:



Մայիսի 15-ին մեր համալսարանի «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի աշխատակիցները և լաբորատորիայի կազմում արտաքին դրամաշնորհային հետազոտական ծրագրեր իրականացնող հետազոտողները մասնակցել են ՌԴ Սանկտ Պետերբուրգի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, մեխանիկայի և օպտիկայի համալսարանի (ITMO) կազմակերպած «Տնտեսության կառավարման ռազմավարությունները և գործիքակազմերը. ճյուղային և տարածաշրջանային ասպեկտ» թեմայով 9-րդ միջազգային առջանց գիտաժողովին: Լաբորատորիայի ղեկավար, դոցենտ Ատոմ Մարգարյանը ներառված է եղել այդ գիտաժողովի կազմակցմանում ու լիազույնար նիստում հանդես է եկել ԵԱՏՄ երկրների նորարարական կապերին վերաբերող զեկուցմամբ:

Գիտաժողովին մասնակցել են նաև լաբորատորիայի հետազոտողներ Հարություն Թերզյանը, Եմիլ Գրիգորյանը, ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի՝ իր ղեկավարությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի մեջ ներառված ՀՊՏՀ աշխատակիցները և ասպիրանտները (դոցենտ Արսեն Պետրոսյան (ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի դեկանի տեղակալ), Էդգար Թաղարյան (մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասիստենտ), Անի Հունանյան (մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ): Սանկտ Պետերբուրգի հիշյալ համալսարանի հետազոտական խմբի հետ (ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Իրինա Սերգեևա) Ատոմ Մարգարյանի ղեկավարած լաբորատորիայի հետազոտական թիմը մշակել և Գիտության կոմիտե է ներկայացրել հայ-ռուսական դրամաշնորհային մրցույթի հայտ:

Գալիք ուսումնական տարվանից մեր համալսարանում ներդրվող նոր մագիստրոսական ծրագրերի ցանկում է նաև «Նորարարությունների տնտեսագիտություն» կրթական ծրագիրը, որի ղեկավարը Ատոմ Մարգարյանն է: Սանկտ Պետերբուրգի գործընկերների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել իրականացնելու մագիստրոսական նոր ծրագրերի շրջանակներում դասավանդող մասնագետների և ուսանողների փոխանակում:



Լեզուների ամբիոնի դասախոս Լիլիթ Յակոբյանը Մայրենի լեզվի միջազգային օրվա առիթով, փետրվարի 27-ին, կառավարում մասնագիտության 1-ին կուրսում կազմակերպված միջոցառմամբ նպատակ ուներ կարևորելու կառավարչի գրագետ խոսքը: Ուսանող Միլենա Պողոսյանը հանդես եկավ «Գրագետ խոսքը կառավարչի կյանքում» շնորհանդեսով: Միջոցառման երկրորդ հատվածում ուսանողները հանդես եկան տեսահոլովակների շնորհանդեսներով, որոնք գովաբանում էին գիրքը և մայրենին:

Փետրվարի 28-ին տեղի ունեցավ հերթական նախաձեռնությունը. այս անգամ Լիլիթ Յակոբյանը կառավարում մասնագիտության 3-րդ կուրսում այն կազմակերպել էր «Հայերենով զինված և հանուն հայերենի» կարգախոսով և սկսվեց «Ճիշտ խոսենք և գրենք» ինտերակտիվ խաղով: Ուսանողներ Յանա Պետրոսյանը և Աշխեն Յակոբյանը լուսանկարային շարքերով ներկայացրին 15-20 լեզվական սխալ կառույցներ, ապա նաև՝ դրանց գործածության ճիշտ եղանակները: Առաջադրվեցին վարժություններ, որոնք ստուգում էին, թե լսարանը որքանով է յուրացրել մատուցված գիտելիքը: Միջոցառման երկրորդ հատվածում ներկայացվեցին գիրքը կամ մայրենին գովազդող տեսահոլովակներ:

Միջոցառումներին ներկա էին լեզուների ամբիոնի վարիչ Լուսինե Յարությունյանը և դասախոս Աննա Երկանյանը:

Մայիս ամսին կառավարման, ֆինանսական, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետների 1-ին կուրսերում Լիլիթ Յակոբյանն ու Աննա Երկանյանը հանձնարարել էին գրել գեղարվեստական ակնարկ-շարադրանք (400-500 բառ)՝ դասախոսների կողմից ընտրված տարբեր 8 մտքերի շուրջ, ինչպես օրինակ՝ «Շարունակի՛ր ինքդ քո փնտրտուքները՝ ահա թե ինչ է պետք քեզ, ձգտի՛ր ամեն օր թեկուզ մեկ քայլով մոտենալ քո իրական ես-ին», «Հաճախ ավելի լավ է լինել շղթայված, քան ազատ», «Պետք է վճարել՝ հասկանալու համար, թե ինչպես է պետք գիտելիք գնել»: ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ուսանող, բանակից այս տարի զորացրված Գրիգոր Ազոյանը «Կյանքի առաջին կանոնը չհանձնելն է, երկրորդը՝ միշտ առաջին կանոնի մասին հիշելը» բնաբանի շուրջ գրել էր չափածո ստեղծագործություն: Լավագույն աշխատանքներ են ներկայացրել կառավարման ֆակուլտետից Միլենա Բաբաջանյանը, Միլենա Պողոսյանը, Լինա Խաչատրյանը, ֆինանսականից՝ Քրիստինե Մարգարյանը, Աննա Սարգսյանը, ՏԿ և ՄՏՀ-ից՝ Նանե Արզումանյանը և այլք:

2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առաջադիմության հիման վրա ուսանողական նպաստների ձևով մասնակի փոխհատուցման (զեղչի) իրավունք է տրվել համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգերի բարձր առաջադիմություն ունեցող 807 ուսանողի՝ այդ թվում բուհի միջոցների հաշվին 100% փոխհատուցում ստացող 24 ուսանողի: Այս ուստարվա 2-րդ կիսամյակում զեղչվել է 807 ուսանողի ուսման վարձ, այդ թվում՝ 335 ուսանող ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունք է ստացել եկամտային հարկի պահումով:

Ձեղչվել է 14,0 և ավելի ՄՈԳ ունեցող 354 բակալավրի և 14,0 (70,0) և ավելի ՄՈԳ ունեցող 94 մագիստրանտի ուսման վարձ, ինչպես նաև 8,0-13,99 ՄՈԳ ունեցող 315 բակալավրի և 8,0-13,99 (40-69,99) ՄՈԳ ունեցող 20 մագիստրանտի ուսման վարձ՝ եկամտային հարկի պահումով:

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում ևս 50 տոկոսի չափով զեղչվել է 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից 87 ուսանողի ուսման վարձ՝ անկախ 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ցուցաբերած առաջադիմությունից:

Համալսարանի առցանց գրադարանը համալրվել է «Հանրային ֆինանսներ» (դասախոսության նյութեր տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար) գրքով: Հեղինակներն են ֆինանսների ամբիոնի դոցենտ Արմինե Սյանյանը, ասիստենտներ Լիլիթ Յովականյանը և Նարգիզ Սուրյանը: Մասնագիտական խմբագիրն է ֆինանսների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Սալմազարյանը:



Գիրքը հրատարակության են երաշխավորել ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի խորհուրդը և ֆինանսների ամբիոնը: Կարող է օգտակար լինել տնտեսագետների և հետաքրքրված այլ անձանց համար:

Առկա է բուհի էլեկտրոնային գրադարանում:



Փետրվարի 24-ից մարտի 6-ը կառավարման ամբիոնի դոցենտ Սարգիս Ասատրյանցը «երազմուս+» ծրագրի շրջանակում երկշաբաթյա աշխատանքային գործուղմամբ Օսյեկի համալսարանում (խորվաթիա) մասնակցել դասախոսների փոխանակման ծրագրի, որում ներգրավվել է Օսյեկի համալսարանի և ՀՊՏՀ-ի միջև գործընկերության պայմանագրի հիման վրա, դրամաշնորհային ծրագրով: Նախապես համաձայնեցված դասընթացների և թեմաների շուրջ Ս. Ասատրյանցը հանդես է եկել դասախոսություններով (ստարտափների կառավարում, ստեղծարար ձեռներեցություն):



Քննական ակնթարթներ անցյալից



Փորձության ու արարումի գարուն

Տեսնես՝ ամենակարող Տերը մեզ համար կյանքի քանի՞ գարուն է նախատեսել, որ այս մեկն այսպես շռայլորեն վերցրեց:

2020 թվական, գարուն: Որքա՞ն սպասելիքներ, նվիրական երազանքներ...

Տեսե՞ք՝ ինչ տպավորիչ է հնչում:

Եվ հանկարծ՝ թագավարակ: Ժամանակը կանգ առավ: Կյանքն էլ ասես կանգ առավ...

Կանգ առավ: Իսկ գուցե նոր հուն մտավ, իսկ գուցե սա փառահեղ հնարավորություն էր մեզ՝ առօրյա մրցավազքով տարված մահկանացուներիս համար մի պահ դադար առնելու և ...

Եվ չգիտեմ ինչ անելու...

Թագավարակի առաջին օրերին ինձ զգում էի Կաֆկայի հերոսի հոգեվիճակում. առավոտյան արթնանում եմ աշխատանքի գնալու մոլեգին ցանկությանը և հանկարծ հիշում, որ տնից դուրս գալու իրավունք չունեմ: Ուրեմն ի՞նչ անել: Մի՞թե այդքան անճարակ եմ, մի՞թե խեղճացած պիտի նստեմ և սպասեմ, թե երբ է անկոչ հյուր թագավարակը բարեհաճելու հեռանալ իմ սիրելի բակից, աշխատավայրից, քաղաքից, աշխարհից... Իսկ գուցե չսպասեմ նրա հեռանալուն, գուցե ցույց տամ նրան իր տեղը...

Անշուշտ, այլընտրանք չկա՝ ելքը մեկն է՝ պայքար... Ուրեմն, վերջ թագավարակին ու նրա բերած հռետեսական տրամադրություններին...

Ընտրում եմ պայքարի իմ ձևը՝ նոր կյանքի, նոր սկզբի ակնկալիքով լեցուն:

Ողջ օրը նույն գործով զբաղվելը ևս կարող է հանգեցնել թագավարակով վարակվելուն...», - տազնապած մտածում եմ ես, ու ծայրահեղության հասած իմ զգուշավորությունը ստիպում է ողջ աշխարհին պատուհասած այդ աղետի դեմ պայքարի հետաքրքիր ձև ընտրել՝ աշխատանքային հագեցած օրվա գրաֆիկում տեղ հատկացնելով ինքնակրթմանն ու ինքնազարգացմանը՝ ընթերցանություն, կինոդիտում, հեռավար սեմինարների և դասընթացների մասնակցություն...

Երեք ամիս, և մի քանի տասնյակից ավելի գրքերի ընթերցում, վաղ կարդացած ու չափազանց տպավորած գրքերի վերընթերցում, ֆիլմերի և առցանց ներկայացումների ընտանեկան դիտումների կազմակերպում, քննարկում, ընտանեկան ջերմ ու խաղաղ երեկոներ, կյանք կոչված հեքիաթի վերաարժևորում և վերափնաստավորում, ունեցածը կարևորե-

լու և վերագնահատելու բացառիկ առիթ... Քայլեր, որոնք մինչ թագավարակը գուցե շատ էինք ցանկանում անել, սակայն առօրյա մրցավազքով տարված՝ ամեն անգամ թողնում էինք հաջորդ հարմար պահին: Իմիջիայլոց, թագավարակ կոչված այս աղետի միակ «բարերար» ազդեցությունը երևի այն է, որ հնարավորություն ունենք կարևորելու և գնահատելու այն, ինչից հիմա զրկված ենք, անտեսելու անհեթեթ ու անփնաստ բաները, որոնք մինչ այս պահը հաճախ թունավորել են մեզ ու մեր շրջապատը: Սա ընտիր հնարավորություն է մեզ՝ ինքնամեկուսացման անողոք ճիրաններում հայտնված մահկանացուներիս համար ոչ թե անգործության մատնվելու կամ անփնաստ գործունեություն ծավալելու, այլ ժամանակը գրագետ և արդյունավետ կազմակերպելու, խաղաղ, առողջ ու ներդաշնակ ապրելու մեր հեքիաթը հյուսելու...

Մի՞թե ես այնքան եսասեր եմ, որ միայն իմ ինքնազարգացման հարցերով պիտի զբաղվեմ: Անշուշտ, այդպես չէ», - մտածում եմ ես ու անմիջապես գործի անցնում:

Մեկնարկում է հակաթագավարակ պայքարի ևս մեկ դրսևորում...

Մեր հարևան Անիկ տատը (Աստված հոգիդ լուսավորի, Անի՛կ տատ ջան) կասեր՝ տերդ մեռնի, գիտություն, ես էլ ասեմ՝ տերդ մեռնի, թագավարակ, ես ո՞րը հասցրի մեզ...

Ո՞վ կմտածեր, թե մի օր բլոգեր կդառնան...

Եթե ոչ վաղ անցյալում մեկն ինձ ասեր, թե ես մի պայծառ օր բլոգ եմ վարելու, հաստատ չէի հավատա: Ահա թե թագավարակը ինչերի է «ընդունակ»...

Բլոգ վարելու ցանկություն գուցե չունենայի, եթե ՀՊՏՀ հեռավար ուսուցման հարթակն ուսումնասիրելիս աչքովս չընկներ արդեն պատրաստի այդ գործիքը: Տեսնելուն պես մտահղացում առաջացավ այս օրերին ուսանողներիս բազում հանձնարարություններ եմ տալիս և մեկը մյուսից հետաքրքիր անթիվ-անհամար աշխատանքներ ստանում: Ինչ խոսք, ինձ էլ է համակել այն մեծ խանդավառությունը, որով ուսանողներիս մեծագույն մասը արձագանքում է իմ տված հանձնարարություններին:

Եվ այսպես, մեկնարկում է իմ բլոգերական գոր-

ծունեությունը, սակայն այն զգալի կտարբերվի մնան ձևաչափի այլ հարթակներից:

Առաջին գրառումը կատարված է «Սիրելի ընթերցող, այս բլոգում ձեզ ներկայացնելու եմ տարբեր թեմաների վերաբերյալ ուսանողներիս հետաքրքրական, տարբերվող մտքերը, մեկնաբանությունները պատառիկներ նրանց ուղարկած աշխատանքներից կամ հենց ամբողջական վերլուծություններ՝ ձեզ նույնպես հաղորդակից դարձնելով ՀՊՏՀ ուսանողների մտքի հզորությանը, ասելիքի խորությանը, ինքնատիպ մտածողությանը:

Այնպես որ, մեզ՝ բարի մեկնարկ, ձեզ էլ՝ հաճելի ու բարի ունկնդրում...

Առողջ եղեք... »:

Մի՞թե սա թագավարակի դեմ պայքարի ձև չէ:

ՀՊՏՀ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի շրջանակում հեռավար կրթության հարթակում իրականացվող աշխատանքները չսահմանափակվեցին այսքանով: Ուսումնական գործընթացը հեռավար հարթակում կազմակերպելու առաջին իսկ օրերից հռչակեցինք ինքնամեկուսացման և ինքնազարգացման ժամանակահատված:

Խորապես համոզված էի, որ ստեղծված արտակարգ իրավիճակի պայմաններում ոգու կորույրը և արհիությունը չկորցնելու, լավ մարզավիճակում մնալու համար անհրաժեշտ է շատ ժամանակ տրամադրել ստեղծագործական աշխատանքին, արարումին: Հենց դրան էին ուղղված ուսանողներին տրված բազմազան ու բազմաբնույթ հանձնարարությունները, որոնց մեծամասնության առանցքում ստեղծագործական բաղադրիչն էր:

Դրանց շրջանակում ՀՊՏՀ-ականները պատրաստեցին մայրենի լեզուն և գիրքը գովազդող հոլովակներ, հանդես եկան հասարակական հնչեղություն ունեցող իրապարակախոսական ելույթներով: Ապագա տնտեսագետներն իրենց փորձեցին նաև թատերագետ-վերլուծաբանի դերում՝ դիտեցին հայ արծակագիր Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» ստեղծագործության հիման վրա բեմադրված առցանց ներկայացումը, սակայն ոչ թե որպես սովորական հանդիսատես, այլ որպես կինոքննադատ և ներկայացման ավարտից հետո գրեցին քննադատական հոդված՝ ներկայացնելով վերջինիս բովանդակային, գաղափարական առանձնահատկությունները, թեմայի արդիականությունը, դերասանական խաղի վերաբերյալ իրենց օբյեկտիվ դիտարկումները:

Արտակարգ իրավիճակի պայմաններում ինչեք ասես, որ չենք անի ...

Ժամանակն է, որ ապագա տնտեսագետը, ապավինելով իր ստեղծագործական ներշնչանքի ուժին, իրեն պատկերացնի նաև գրողի դերում: Հանձնարարվում է գրել գեղարվեստական ակնարկ՝ իբրև բնաբան ընտրելով տրված մեկնաբանություններից մեկը: Հատկանշական էր այն, որ ուսանողների մեծագույն մասն ընտրել էր հետևյալ մեկնաբանությունը՝ «Կյանքի առաջին կանոնը չհանձնվելն է, իսկ երկրորդը՝ միշտ առաջին կանոնի մասին հիշելը»:



Այսինքն՝ նրանք ճիշտ ընկալեցին իմ նախաձեռնած պայքարի գաղափարը՝ դառնալով այդ պայքարի գործուն մասնակիցներ:

Ուրախ եմ, որ նմանատիպ հանձնարարությունների շնորհիվ կարողացա բացահայտել ինքնատիպ մտածող ու ստեղծագործական բացառիկ ձիրք ունեցող շատ ուսանողների՝ նրանց՝ մեկը մյուսից փայլուն աշխատանքների շնորհիվ հարստացնելով իմ հույզերի ու զգացողությունների աշխարհը: Գուցե հայ գրականության վաղվա պայծառ ու լուսավոր օրը հենց նրանցից շատերի հետ է կապված...

Հակաթագավարակ պայքարը շարունակվում է...

Ուզում եմ հավատալ, որ ամենագուր Սիրի-չը բարձր է գնահատում փորձության ժամին մեր դրսևորած խիզախությունը, արարումի ու ստեղծականության ջանքերը, և կորցրած գարունը կփոխհատուցվի նոր, արդեն վերափնաստավորված մի քանի գարուններով...

Տեսնես՝ ամենակարող Տերը մեզ համար կյանքի քանի՞ գարուն է նախատեսել, որ այս մեկը շռայլորեն վերցրեց:

ԼԻԼԻԹ ՀԱՎՈՒՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊՍՅԱՆՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ապրիլի 6-ի առցանց նիստում գիտական խորհուրդը, քննարկելով ՀՀ-ում մարտի 12-ին հայտարարված արտակարգ դրության (ԱԴ) տեղաշարժման սահմանափակումներով և ՀՊՏՀ ուսանողների ուսումնառության իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտությամբ պայմանավորված ուսումնական գործընթացի կազմակերպման մասին հարցը, որոշել է ԱԴ գործողության և կրթական հաստատությունների փակ լինելու ամբողջ ընթացքում «ՀՊՏՀ առկա և հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության» կարգերում կատարել ժամանակավոր փոփոխություններ:

Մասնավորապես գիտական խորհուրդը որոշել է.

1. Առկա ուսուցման բակալավրիատի անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների «անհատական աշխատանքի» բաղադրիչը և դրա 2 միավոր գնահատման կշիռը միացնել «հաճախումների և ակտիվության» բաղադրիչին և վերջինի կշիռը սահմանել 8 միավոր:

2. Փորձառության լրացված և փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությամբ վավերացված օրագրերի և փորձառության վայրի կնիքով վավերացված բնութագրի ներկայացման պահանջը չկիրառել 2019-2020 ուսումնական տարվա առկա և հեռակա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի փորձառություն անցնող ուսանողների նկատմամբ:

3. Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների «փորձառության վայրի հաճախումների» բաղադրիչը (4 միավոր) միացնել «փորձառության պաշտպանության» բաղադրիչին և փորձառության գնահատման 20 միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել «փորձառության հաշվետվությունը»՝ 4 միավոր և «փորձառության առցանց պաշտպանությունը»՝ 16 միավոր:

4. Առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի և հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողների «փորձառության վայրի հաճախումների» և «պրակտիկայի վայրի ղեկավարի» գնահատման բաղադրիչները (համապատասխանաբար 15-ական միավոր) միացնել «փորձառության պաշտպանության» բաղադրիչին և փորձառության գնահատման 100 միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել «փորձառության հաշվետվությունը»՝ 20 միավոր և «փորձառության առցանց պաշտպանությունը»՝ 80 միավոր:

5. Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի և հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողների փորձառությունների պաշտպանությունը կազմակերպել առցանց եղանակով՝ Zoom համակարգով:

6. Փորձառությունների պաշտպանության ընթացքի բողոքարկման նպատակով ձևավորել առ-

ցանց բողոքարկման հարթակ և դրա տվյալները հասանելի դարձնել ուսանողներին առնվազն ՀՊՏՀ կայքէջով, ֆեյսբուքյան օգտահաշվով, ինչպես նաև առցանց պաշտպանության հենց սկզբից առցանց տեսակոնֆերանսում նույնպես գետեղել հայտարարություն՝ բողոքարկման առցանց հարթակի էլեկտրոնային հասցեի վերաբերյալ:

Ապրիլի 30-ին գիտական խորհուրդը առցանց հարցմամբ նիստում որոշում է ընդունել 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի քննաշրջանի ընթացքում քննությամբ ավարտվող դասընթացների թվի կրճատման մասին:

Նոր կորոնավիրուսային համաճարակի տարածման հետևանքով 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը առցանց անցկացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը որոշել է.

1. Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում սահմանել քննությամբ ավարտվող երկու դասընթաց՝ տվյալ կրթական ծրագրի համար մասնագիտական համարվող քննությամբ ավարտվող դասընթացներից (ըստ սույն որոշման հավելվածի):

2. Առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայում սահմանել քննությամբ ավարտվող երեք դասընթաց՝ տվյալ կրթական ծրագրի համար մասնագիտական համարվող քննությամբ ավարտվող դասընթացներից (ըստ սույն որոշման հավելվածի):

3. Մյուս քննական առարկաները սահմանել որպես ստուգարքով ավարտվող և չեզոքացնել դրանց ազդեցությունը միջին որակական գնահատականի (ՄՈԳ) վրա:

4. Առկա բակալավրիատում նախկինում քննությամբ ավարտվող դասընթացների ակտիվության գնահատականի վերահաշվարկը կատարել՝ ակտիվության գնահատականը բազմապատկելով 1,5 գործակցով:

5. Հեռակա բակալավրիատում նախկինում քննությամբ ավարտվող և անհատական աշխատանք պարունակող դասընթացների ստուգարքով ավարտվող դառնալու պարագայում հանել անհատական աշխատանքի բաղադրիչը և ստուգարքի գնահատականը սահմանել 20 միավոր:

6. Առկա և հեռակա մագիստրատուրայում նախկինում քննությամբ ավարտվող դասընթացների ակտիվության գնահատականը սահմանել 60 միավոր և վերահաշվարկը կատարել՝ ակտիվության գնահատականը բազմապատկելով համապատասխան գործակցով:

*Քննական առարկաներն ըստ ֆակուլտետների
և կուրսերի կարող են տեսնել ՀՊՏՀ
պաշտոնական կայքում:*

*Շարժի ասիտյով ու
գիւսիւստիով կրակիք.
Կարոնաւ իրուսի դաստիք*

Ժամանակը մարդուց կարծես թէ խռովեց, ընդվզեց ու կանգ առավ՝ հրաժարվելով մարդածին խելակորույս ընթացքի մեջ շարունակել իր երթը: Ժամանակը բնություն է, իսկ մարդը հեռացել էր բնությունից: Բնություն-մարդ-ժամանակ շղթայի մեխանիկայում ինչ-որ բան այն չէր: Պատճառը մարդն էր, բնությունից ծնված ու բնությունից պոկվել փորձող մարդը... Ժամանակն ու բնությունը ներդաշնակ էին և վճռեցին հնարավորություն ընձեռել մարդուն՝ կարևոր վերաարժեքումներ կատարելու: Նրանք փորձության ենթարկեցին ընդվզողին: Ժամանակը որոշեց մարդուն ժամանակ տալ խորհելու՝ ինքն իր հետ մենակ մնալով:

Ժողովրդական իմաստության ակունքից է գալիս *«Ճաճանակից ուկի է»* հազարախոս արտահայտությունը: Եվ մարդը մնաց մենակ: Ժամանակը բավական էր, նույնիսկ՝ չափազանց ու ձանձրալի: Ստածել, մտածել ու կրկին կանգ առնել այնտեղ, որտեղ բնությունն է: Եվ հասկանալ, որ ժամանակն առանց բնության ի գորու չէ գործել: Հապա ինչպե՞ս էր փորձ արվում հեռանալու... մարդը հեռացել էր և մարդու՛ց՝ անկարևոր համարելով շփումն ու նրա ներկայությունը: Եվ ահա, կորցնելուց հետո եկավ սթափ ու ըստ արժանվույն գնահատելու մշտահաս ակնթարթը: Երանելի է, որ կորուստը ժամանակավոր էր ...

Մարդու կենսասիրությունը ակնհայտ դարձրեց փորձության ավարտի ու կյանքի վերագործարկման մեծ սպասումը: Վերադարձի մոտալուտ ժամը հուսավառեց, ապրելու իմաստը նորովի ընկալվեց:

Այո, ըստ ամենայնի, մարդը սիրում է կյանքը, բայց մարդածին երևույթները երբեմն թույլ չեն տալիս լիովին գիտակցել այդ սերն ու զգուշորեն փայփայել այն:

Ժամանակն ու բնությունը որոշեցին ներել՝ մարդուն վերադարձնելով կյանք: Մարդը վերադարձավ՝ սիրելով ու գնահատելով այն նորովի, ու նաև սովորեց ներել, ինչպես իրեն ներեցին:

Ապրելու համար կյանքը սիրելը պարտադիր է, իսկ սերը բնություն-մարդ-ժամանակ մեխանիկական շղթայում է, շղթան անխափան է, եթե նրա երեք տարրերն էլ ներդաշնակ են: Բնության ու ժամանակի շարժիչ ուժը մարդն է: Նրան վստահված է փոթորկոտ ծովում մավապետի դերը, որքան՝ աչալուրջ, այնքան անվտանգ ու անխափան....

Համամոլորակային փորձությունը հաղթահարված է: Հաղթահարված է այնքանով, որքանով մարդը կարողացավ վերագտնել իրեն և վերադառնալ կյանք՝ արտակարգ դասերը ապագայի համար սերտած:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ



ԵՄ «Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Զայաստանում և Մոլդովայում» (ՌԻՖԱՅՆ) նախագծի շրջանակում 2020 թ. հունվար-փետրվար ամիսներին եվրոպական համալսարաններում վերապատրաստումների են մասնակցել մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Կարեն Գրիգորյանը (Ավստրիա, Վիեննա), վիճակագրության ամբիոնի վարիչ, դոցենտ Արմեն Քթոյանը (Սլովակիա, Կոշիցե), ֆինանսների ամբիոնի դոցենտ, Արմինե Սչանյանը (Ֆրանսիա, Նիցցա), նույն ամբիոնի ասիստենտ, Վանինե Երանոսյանը (Նիդեռլանդներ, Ամստերդամ): Այդ ընթացքում դասախոսները վերամշակել են իրենց առարկաների ուսումնական պլանները և գրականության ցանկը՝ համագործակցելով եվրոպական համալսարանների լավագույն մասնագետների հետ, քննարկվել են մասնագիտական, նաև հետագա համագործակցության հարցեր:

Մայիսի 7-ին կորպորատիվ ֆինանսներ մասնագիտացման մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է առցանց դասախոսություն, որը վարել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի շուկայական գործառնությունների և սպասարկման ղեկարտամենտի ղեկավար Լևոն Մովսիսյանը: Մասնակցել են ֆինանսների ամբիոնի ասիստենտ Վանինե Երանոսյանը և միջազգային կապերի բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Ջրաղացպանյանը:

Բանախոսը ներկայացրել է կորպորացիաներում ֆինանսական նորարարությունների դերը, էությունը, գործառույթները, տեսակները, անդրադարձել դրանց գործնական կիրառություններին ԶՀ ֆինանսական կորպորացիաներում:

Մայիսի 22-ին տեղի է ունեցել կարիերայի խորհրդատվության միջոցառում՝ «Ինչպե՞ս կառուցել հաջողակ կարիերա ԶՀ ֆինանսական ոլորտում» խորագրով: ԳՊՏՀ-ից մասնակցել են միջազգային կապերի բաժնի պետ Սոնա Մատինյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Ջրաղացպանյանը: Բանախոսել են ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԻ ՄՈԿ մասնագետ Անի Պողոսյանը, Հայաստանի ֆոնդային բորսայի ՄՈԿ և կազմակերպության զարգացման ղեկավար Լիլիթ Չևրոբյանը, Ինտելեքտուալ տաղանդների ներգրավման և ինտեգրման ավագ մասնագետ Էլինա Ստեփանյանը, վերապատրաստումների և մասնագիտական զարգացման ավագ մասնագետ Արփինե Բարսեղյանը, Արդշինբանկի կորպորատիվ մշակույթի զարգացման պատասխանատու Արփինե Փանոսյանը, անձնակազմի հավաքագրման պատասխանատու Անի Կիրակոսյանը:



eDrone

Փետրվարի 26-ին ԶՊՏՀ նախաձեռնությամբ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում տեղի է ունեցել հանդիպում Քաղավիացիայի կոմիտեի, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության, «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի, «Լոկատոր» ՓԲԸ-ի, Ավիաուսումնական կենտրոնի, ԶԱՊՀ-ի և ԶՊՏՀ-ի միջև: Շահառու կազմակերպությունները ներկայացրել են իրենց նախագծերը, նպատակները, իրականացման ընթացքը և արդյունքները: Մասնակիցները քննարկել են համագործակցության ուղիները՝ կապված անօդաչու թռչող սարքերի ուսուցման հետ և համաձայնության են եկել ստեղծելու աշխատանքային խումբ, որը կգբաղվի այդ ուսուցման ծրագրերի համատեղ իրականացման հնարավորությունների քննարկմամբ և մշակմամբ:

Փետրվարի 27-ին ԶԱՊՀ-ում բացված OED լաբորատորիայում տեղի է ունեցել շրջայց և «Անօդաչու թռչող սարքերի ուսուցում» դասընթացի ներկայացում՝ հետաքրքրված անձանց համար: ԶԱՊՀ և ԶՊՏՀ ներկայացուցիչները լաբորատորիայի այցելուներին ծանոթացրել են դասընթացի թեմաներին, ժամանակացույցին և այլ մանրամասների, շրջայց կատարել լաբորատորիայում, պատմել անօդաչու թռչող սարքերի քաղաքացիական կիրառությունների, տեխնիկական հնարավորությունների մասին, պատասխանել հարցերի: Մարտի 10-ին ԶԱՊՀ-ում մեկնարկել են դասընթացի 2-րդ խմբի դասերը: ԶԱՊՀ ներկայացուցիչ Հրաչյա Կարապետյանը ուսանողների հետ զրուցել է դասընթացի թեմաների և այլ մանրամասների վերաբերյալ, այնուհետև մեկնարկել է առաջին դասը:

ԶՊՏՀ-ից միջոցառումներին մասնակցել են մարքեթինգի ամբիոնի վարիչ, դոցենտ Վաղին Գրիգորյանը, ԶՊՏՀ ռեկտորի խորհրդական, մարքեթինգի ամբիոնի դոցենտ Լիլիթ Դադայանը, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ասիստենտ Արզամ Արտաշյանը, միջազգային կապերի բաժնի պետ Սոնա Մատինյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Ջրաղացպանյանը, ուսանողներ:

Ծրագրերը ԶՊՏՀ-ում համակարգում է միջազգային կապերի բաժինը, մանրամասները՝ asue.am-ի «Միջազգային ծրագրեր» խորագրում:

«ԱՄԲԵՐՂ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ



Հրապարակվել է «Ամբերդ» տեղեկագրի երկրորդ համարի էլեկտրոնային տարբերակը: Հատուկ թողարկման թեմաների առանցքում COVID-19 թագավարակն է և դրա ազդեցությունը մարդու և տնտեսության այսօրվա ու վաղվա վարքագծի վրա: Տեղեկագրում գետեղված է 17 հոդված, սկսվում է ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանի՝ «COVID-19-ի հետևանքով համաշխարհային տնտեսության կանխատեսվող որոշ շուկերի շուրջ» հոդվածով, այնուհետև կորոնավիրուսի հետևանքներն ու ազդեցությունն աշխարհում, տնտեսության տարբեր ոլորտների և մարդկության զարգացման վրա վերլուծում են Սիբայել Մելքունյանը, Հայկ Բեջանյանը, Նարեկ Կարապետյանը, Ռուզաննա Թադևոսյանը, Էդգար Աղաբեկյանը, Վահե Բուլանիկյանը, Աննա Փախյանը, Դավիթ Հախվերդյանը, Սամվել Ավետիսյանը, Գայանե Թովմասյանը, Տաթևիկ Առուստամյանը, Ալբերտ Հայրապետյանը, Վարդան Աթոյանը, Համազասպ Գալստյանը, Շուշան Մովսիսյանը և Յուրի Յովականյանը:

Կենտրոնը դիմել է ՀՀ նախարարություններին և դրանց ենթակա կազմակերպություններին՝ պետության համար կարևոր նշանակության թեմաներով հետազոտություններ կատարելու պատվերներ ստանալու նպատակով: Ստացվել են երկու տասնյակից ավելի թեմաների առաջարկություններ, որոնցից ընտրություն կատարելու և դրանց շուրջ խորհրդակցելու համար կենտրոնը մարտի 12-ին ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանրային քննարկում էր հրավիրել: Հետազոտողներին և դասախոսներին ողջունեցին գիտության գծով պրոռեկտոր Թաթևիկ Աթոյանը, «Ամբերդ» կենտրոնի տնօրեն Դավիթ Հախվերդյանը: Առավել լայն քննարկման արժանացան տնտեսությունն անմիջականորեն վերահսկող և սպասարկող նախարարությունների ու գերատեսչությունների՝ ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, գյուղատնտեսության նախարարությունների, ՏՄՊԴՀ և այլ կառույցների առաջադրած թեմաները: Ուշադրության կենտրոնում էր նաև ԿԳՄԱՆ-ի թեման՝ «Կրթական հաս-



տատությունների ֆինանսավորման արդյունավետության բարձրացում»: Բոլոր թեմաները կընտրվեն «Ամբերդի» փորձագիտական խորհրդի քննարկման արդյունքում՝ նկատի առնելով դասախոսների առաջարկությունները:



«Ամբերդի» փոխտնօրեն-ավագ փորձագետ Վարդան Աթոյանը ապրիլի 7-ին և մայիսի 13-ին մասնակցել է Փենսիլվանիայի համալսարանի TTCSP-ի կազմակերպած առցանց զլոբալ համաժողովներին՝ նվիրված COVID-19 համավարակի դեմ պայքարում ուղեղային կենտրոնների դերակատարությանը և ծառայած մարտահրավերներին: Մասնակցել են աշխարհի առաջատար ուղեղային կենտրոնների ղեկավարներ և թեմատիկ պանելային քննարկումներին ներկայացրել են ստեղծված իրավիճակում իրենց ռազմավարություններն ու փորձը:

Ապրիլի 17-ին մեր գործընկերը մասնակցել է Բրյուսելում Ռուսաստանի գիտության ու մշակույթի կենտրոնի և Գորչակովի անվան Հանրային դիվանագիտության աջակցության հիմնադրամի կազմակերպած «Աշխարհակարգ vs Գլոբալ անկարգություն» առցանց միջազգային քննարկմանը՝ Brussels Dialogue միջազգային նախագծի շրջանակում (քննարկման առանցքում թագավարակին վերաբերող թեմաներն էին), ապրիլի 23-ին՝ Արտաքին և պաշտպանական անվտանգության խորհրդի (ՌԴ) կազմակերպած՝ «Ինչո՞ւ համավարակը այդքան արագ վերածնեց աշխարհը» խորագրով վեբինարին, մայիսի 5-ին՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի կազմակերպած՝ Evidence-based response to COVID-19 in Africa խորագրով վեբինարին, մայիսի 6-ին՝ ԱՄՆ Գերմանական Մարշալի հիմնադրամի կազմակերպած «Համավարակի պայմաններում Արևելյան Եվրոպայի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների ամրապնդումը» խորագրով վեբինարին, մայիսի 7-ին՝ «Վալոյա» ակումբի կազմակերպած՝ «Թագավարակի տնտեսական հետևանքները. «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը նոր համաշխարհային պայմաններում» առցանց աշխատաժողովին, իսկ մայիսի 8-ին Վարդան Աթոյանը մասնակցել է Գորչակովի անվան Հանրային դիվանագիտության աջակցության հիմնադրամի կազմակերպած «Մեծ հաղթանակի 75-ամյակը. ինչպե՞ս պահպանել և փոխանցել պատմական ճշմարտությունը» խորագրով առցանց քննարկմանը, որի հիմնական թեմաներն առնչվում էին պատմության կեղծման փորձերին և պատմական հիշողության պահպանման խնդիրներին:

ԿԱՏԱԿԱՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ



Սիրելի՛ ընթերցող, գիտնականներն ասում են, որ ընկճախտի դեմ պայքարելու լավագույն միջոցը հումորն է ու ծիծաղը: Փորձենք թագավարակային խնդուկների մեր ընտրանիով ժպիտ պարզել ձեզ:

Թագավարակը նման է կրոնի. մարդկանց մի մասը հավատում է, մի մասը՝ ոչ, իսկ մյուսները պարզապես շահույթ են ստանում՝ առաջիններին վաճառելով դիմակ, ձեռնոց, ախտահանիչ, իսկ երկրորդներին կարգապահական տույժի ենթարկելով:

Բերեցի Իտալիայից, պարզվեց՝ պատրաստված է Չինաստանում:

Բոլորն ասում էին, որ փողոց դուրս գալիս միայն դիմակ ու ձեռնոց հագնելը բավարար է, որ չվարակվես: Ստում էին: Դուրս եկա, որ խանութ գնամ, տեսնեմ՝ մարդիկ նաև հագնված են:

Եթե դպրոցները երկար փակված մնան, ապա ծնողները գիտնականներից շուտ կգտնեն պատվաստանյութը:

Կարանտինի ևս մեկ շաբաթ, և ես չեմ կարող անցնել դռան միջով:

Մայրը՝ աղջկան: – Անպատկա՞ռ, ինչպե՞ս ես առանց դիմակի դուրս եկել:

Շնորհիվ ինքնամեկուսացման՝ ես վերջապես ժամանակ գտա նորոգելու սանհանգույցը, կարգի բերելու խորդանոցը և դասականներին կարդալու: Դրանցից և ոչ մեկը ես դեռ չեմ կատարել, բայց ժամանակը գտնվել է:

Այնքան սարսափելի չէ թագավարակը, որքան դրանից ինքնամեկուսացումը:

Հետաքրքրական է՝ ի՞նչը կհաղթի համավարակի արդյունքում անուսնալուծությունների թի՛վը, թե՞ ծնելիության աճը:

2020 թվականի նոր ուսումնական տարվա սկզբին երեխաներին հանձնարարվող «Ինչպես անցկացրի ամառը» շարադրությունն իսկապես հորինված կլինի:

Ըստ էության, համավարակի պայմաններում իշխանությունների ձեռնարկած բոլոր միջոցառումները կարելի է ձևակերպել մեկ արտահայտությամբ. «Փակիր բերանդ»:

- Սիրելի՛ս, արդեն 15 րոպե է՝ ակնդետ դուրս ես նայում պատուհանից, ի՞նչ է պատահել:
- Մի՛ խանգարիր, զբոսնում եմ:

Ճակատագիրը մեզ նետեց տարբեր բազմոցների վրա:

Իսկ մենք շարունակում ենք «ճանապարհորդել», կրկին այցելեցինք խոհանոց՝ մեր բնակարանի «մայրաքաղաքը»:

Դաժան ժամանակներ են. մարդիկ ստիպված են լվանալ ձեռքերը, տանը ճաշ պատրաստել, շփվել երեխաների հետ: Եթե այսպես երկար շարունակվի, ապա ստիպված կլինենք նաև գիրք կարդալ:


«Մեա հուսեր» շարժիչ

Եթե ցանկանում եք արդեն իսկ Ամանորի համար տնտեսումներ անել, ապա լավագույն պահն է երեխաներին ասելու, որ Ձմեռ պապիկը մահացել է թագավարակից:

Թագավարակից առաջին մահն արձանագրվեց, երբ ավտոտնակում քաղաքացու վրա փլվեց 200 կիլոգրամանոց «պարենային պատը»՝ կազմված հնդկաձավարից, մակարոնից և մսի պահածոյից:

Պատրաստեց Արմինե Վարդանյանը

Շուրջ 30 տարի առաջ «Տնտեսագետի» գարնանային համարն այս ուրախ զծանկարներով էր ժպտում կանանց՝ մաղթելով միշտ գեղեցիկ ու հմայիչ լինել:



ԴԻԱՆԱ ԱՐԳԱՐ.

ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ԻՇԽԱՆՈՒՅԻՆ


Հայոց պատմության անհվը մտովի հետ պատե-
լով դեպի 19-րդ դար և փորձելով վերլուծել Դիանա
Արգարի կերպարը՝ հպարտության աննկարագրելի
զգացողություններ կարելի է վերապրել: Այս հայրե-
նանվեր կնոջ գործունեությունը բացառիկ նշանա-
կություն ունի հայ ժողովրդի համար: Ուսումնասիրե-
լով նրա կյանքի ուղին՝ ինձ համար բացահայտեցի
մեր պատմության նոր ու հիշատակման արժանի
էջեր:

Դիանա Արգարի կյանքի և գործունեության ժա-
մանակաշրջանը դիպչում է յուրաքանչյուրիս, քանի
որ այն անմիջական կապ ունի Հայոց ցեղասպանու-
թյան, հայ գաղթականներին բաժին հասած տառա-
պանքների և մարդկային ճակատագրերի ցավոտ
պատմությունների հետ: Շուրջ 50 տարի նա ապրել
և ստեղծագործել է ճապոնիայում և իր կյանքի 30
տարիներն անմնացորդ նվիրել իր հայրենիքին և ժո-
ղովրդին, որն էլ նրան կնքել է **«Հեռավոր Արեւե-
լի հայ իշխանուհի»** անվամբ:

Դիանան ծնվել է 1859 թ. Բիրնայում՝ այժմյան Մյան-
մայում, Աղաբեկյանների բազմազավակ ընտանի-
քում: Նրա նախնիները ծնունդով Նոր Ջուղայից են:
Դիանան դպրոցական էր, երբ Աղաբեկյանների ըն-
տանիքը տեղափոխվում է Հնդկաստան Կալկաթա:
Այստեղ աղջնակը ստանում է անգլալեզու կրթու-
թյուն, այստեղ էլ հետագայում հանդիպում իր կյան-
քի ուղեկցին՝ վաճառական Միքայել Արգարին, որի
հետ 1889 թ. ամուսնանում է Ռանգունի հայ առաքե-
լական Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, և
ապա նորապսակ զույգը մեկնում է ճապոնիայի Կո-
բե քաղաք՝ մեղրամսի:

Այդ ժամանակ ճապոնիան արդեն իր «երկաթյա
վարագույրները» բացել էր բանիմաց և գործարար
արտերկրացիների առջև: Այս հանգամանքը Միքա-
յելի համար մեծ հնարավորություններ էր ստեղծում՝
ընդլայնելու արդեն իսկ Հարավարևելյան Ասիան
գրաված իր առևտրական գործունեությունը: 1890 թ.
իրենց առաջնեկ Ռոզիի հետ Դիանան և Միքայելը
տեղափոխվում են ճապոնիայի Յոկոհամա քաղաք:


Հարկ են համարում նշել, որ հատկապես այդ ժա-
մանակաշրջանում ճապոնացիները, ինչպես և հա-
յերը, կնոջ դերը հասարակությունում շեշտադրել
են սոսկ ընտանիքի շրջանակում գործունեություն
ծավալելու իմաստով: Սակայն Դիանա Արգարի կեր-
պարը «կոտրում էր կարծրատիպերը». նա ուներ բա-
ցառիկ վերլուծական միտք և չէր կաշկանդվում իր
կարծիքն արտահայտել հասարակական շփումնե-
րում: Տպագրում էր գրական ստեղծագործություն-
ներ, հոդվածներ, որոնցում շատ էին քաղաքական
իրավիճակի վերլուծությունները: Նրա ջանքերի
շնորհիվ էր նաև, որ Հայկական հարցը միջազգայ-
նացվեց և մեծ հնչեղություն ստացավ, Հայոց ցեղա-
սպանության հարցը լսելի դարձավ ճապոնիայում և
նրա սահմաններից դուրս:



Առաջին համաշխարհային պատերազմի նախ-
րեին Դիանան ներկայանում է հայ ժողովրդի մա-
սին պատմող դասախոսություններով: Հայտնի է, որ
1910 թ. Յոկոհամայի գրական-երաժշտական ընկե-
րության առաջին ժողովին Դիանան ելույթ է ունեցել
հայ-թուրքական հարաբերությունների և Ադանայի
հայերի կոտորածի մասին: Այդ տարիներին նա ակ-
տիվորեն անդամակցում էր այնպիսի հայտնի թեր-
թերի, ինչպիսիք էին «Նյու Յորք Թայմսը», «Ֆիզա-
րոն», մի քանի ճապոնալեզու թերթերի ևս:

Հետադարձ հայացք ձգելով Դիանայի գրական
ժառանգությանը՝ պարզ է դառնում, որ այս բանիմաց
ու խիզախ հայուհին իր կյանքի զգալի մասը նվի-
րել է Հայկական հարցի լուսաբանմանը, աշխարհի
առաջին քրիստոնյա ազգի նկատմամբ քրիստոնյա
եվրոպայի ցուցաբերած արհամարհանքին, իմպե-
րիալիզմի դատապարտմանը և «փոքր» ժողովուրդ-
ներին ուղղված աշխարհի անարդարությանը, Օս-
մանյան կայսրությունում ապրող հայերի դառը կա-
ցությանը:

Դիանան այնքան լավ էր տիրապետում միջազ-
գային քաղաքական իրավիճակին, որ կարողանում
էր կանխատեսումներ կատարել: Նա բավականին
իրազեկված էր և, ցավոք, արդեն կանխատեսել էր, որ
նոր ջարդեր են սպասվում և այն էլ՝ ավելի զարհու-
րելի, քան 1909 թվականին Ադանայում: Ըստ մեզ
հասած տեղեկությունների՝ նա նամակագրական
կապ էր պահպանում Թուրքիայում գտնվող ամերի-
կացի միսիոներների հետ, որոնցից պարբերաբար
լուրեր էր ստանում տիրող իրավիճակի մասին, ինչ-
պես նաև խոշոր խաղաղապահ կազմակերպություն-
ների անդամների, Անգլիայի, Գերմանիայի, Շվեյցա-
րիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի ազդեցիկ անձանց
հետ՝ ամեն գնով փորձելով նրանց ուշադրությունը



սևեռել ցեղասպանության վտանգի առջև կանգնած հայերի վրա: Այդ տարիներին նա մեծաքանակ շրջաբերականներ էր տպագրում և ուղարկում խաղաղապահ կազմակերպություններին: Արձագանքներ, անշուշտ, կային. օրինակ՝ ամերիկացի կին քաղաքական գործիչ, կանանց իրավունքների պաշտպան Բելվա Լոքվուդը Դիանայի շրջաբերականը ստանալուց անմիջապես հետո այն ուղարկում է «Վաշինգտոն Թայմսին», որն էլ լույս է տեսնում «Ճապոնիայից Խաղաղության հանձնաժողովին ուղղված նամակը նախագուշացնում է թուրքերի կողմից իրականացվելիք ջարդերի մասին. նոր ջարդեր են կանխատեսվում» խորագրով: Դիանայի ուղարկած շրջաբերականներից մեկի հայտնվելը ամերիկյան մամուլում հուսադրող էր, սակայն ոչ մի լուրջ քայլ այդպես էլ չձեռնարկվեց՝ կանխելու համար զալիք ջարդերը:

Ճապոնիայում բնակվող մեր հայրենակից Մ. Մեսրոպյանն իր բազմամյա ուսումնասիրությունների

նում նման հոդվածները տպագրել, քանի որ չէին ցանկանում պատասխանատվություն կրել այն ամենի համար, ինչը գրում էր Դիանան: Մեծ մասը նրա հոդվածները տպագրում էր ոչ թե հոդվածի, այլ տվյալ խմբագրին ուղղված նամակի տեսքով:

Դիանան հայ փախստականներին սկսել է անմիջական աջակցություն ցուցաբերել 1915 թ. կեսերից: Ճապոնիայում տարբեր դրամահավաքներ էին իրականացվում հայ փախստականներին աջակցելու համար, սակայն անմիջական աջակցություն ցուցաբերողը այդ հեռավոր և օտար երկրում, որտեղ և՛ լեզուն էր օտար, և՛ մշակույթը, միայն ու միայն Դիանան էր՝ այդ բեռն ամբողջովին ու միայնակ իր ուսերին առած: Ճիշտ է, նա առևտրական գրասենյակ ուներ, բայց դրա եկամուտը այնքան չէր, որ կարողանար հոգալ քաղցած, առողջական խնդիրներ ունեցող հայրենակիցների բոլոր կարիքները:

Դիանայի բանակցությունների շնորհիվ է, որ Ճապոնիայի Կառավարությունը երկիր մուտք գործե-



արդյունքում խորությամբ հետազոտել է Դիանա Աբգարի կյանքի ուղին և գործունեությունը: Նա իր հետազոտություններում նշում է, որ «Բոստոն Իվնինգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Էդուարդ Կլեմենտը Դիանային համեմատել է Կասանդրայի հետ: Ըստ հին հունական դիցաբանության՝ Կասանդրան Պրիամ թագավորի դուստրն էր և ուներ ճշգրիտ գուշակելու շնորհ: Սակայն նա անհիծվել էր Ապոլլոն Աստծո կողմից, որ նրա գուշակություններն անհավատ մնան: Այդպես էլ Դիանայի՝ ցեղասպանության մասին պնդումներն էին մնում անպատասխան: Դեռևս 1913-ին նա կանխագուշում էր, որ Ռուսաստանում հեղափոխություն է լինելու և ասում էր, որ Հայաստանն անկախություն ձեռք կբերի միայն այն ժամանակ, երբ Ռուսական Կայսրությունը փլուզվի: Եվ այդպես էլ եղավ: Նա անգամ համաշխարհային 2-րդ պատերազմն էր կանխատեսել: Դեռևս 1930-ականներին զգուշացնում էր իր որդուն՝ ընտանիքի հետ միասին շտապ հեռանալ Ճապոնիայից, սակայն նրա խոսքերն անտեսվում էին:

Թերթերն և ամսագրերը երբեմն չէին համաձայ-

լու հատուկ թույլտվություն է նախատեսում այն փախստականների համար, որոնք չունեին անձը հաստատող որևէ փաստաթուղթ և մուտքի արտոնագիր:

Դառնալով Վլադիվոստոկում և Ամերիկայում տեղակայված հայկական կոմիտեների լիիրավ անդամ՝ նա ֆինանսական աջակցություն էր ստանում և ամբողջությամբ նվիրաբերում իր հայրենակիցներին: Գրում էր հոդվածներ, հրատարակում դրանք և ֆինանսական օգնություն խնդրում աշխարհով մեկ սփռված հայերից: Եվ արձագանքը չէր ուշանում: Փախստականներին օգնելով Ճապոնիայի մուտքի արտոնագրեր ստանալու հարցում՝ նա այդ ուղին համարում էր տարանցիկ՝ հետագայում այլ երկիր մուտք գործելու համար, միաժամանակ փախստականներին ապահովում էր ժամանակավոր կացարաններով, սննդով, հագուստով, աջակցում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Եվրոպա անվտանգ տեղափոխման հարցերում:

Շարունակելով մեքեբերել Մ. Մեսրոպյանի նշումները՝ անհրաժեշտ են համարում ներկայացնել, որ 1920-ից Ճապոնիայի Կառավարությունը նոր օրենք

էր սահմանել, ըստ որի՝ յուրաքանչյուր արտասահմանցի, ով միայն անցնում էր ճապոնիայով, մուտք գործելիս պիտի ունենար 250 իեն, իսկ նրանք, ովքեր ցանկանում էին օթևանել ճապոնիայում, պիտի ունենային 1500 իեն (250 իենը այժմյան 1500 ԱՄՆ դոլարին համարժեք գումարն է): Բնական է՝ ոչ մի փախստական այսչափ գումար ունենալ չէր կարող, իսկ դրա բացակայության դեպքում մուտքը երկիր արգելվում էր: Այստեղ ևս Դիանա Աբգարը գտել է ելքը: Նա իր ստորագրությամբ վկայական է ներկայացրել ճապոնիայի Կառավարությանը՝ նշելով, որ ինքն անձամբ է հովանավորում երկիր մուտք գործելու համար գումար չունեցող փախստականներին: Քանի որ Դիանան երկար տարիներ ապրում և աշխատում էր օրինապահորեն, հետևաբար՝ ճապոնիայի Կառավարությունը վստահում և ընդունում էր նրան՝ որպես հայ փախստականների հովանավորի: Դիանայի ներկայացրած վկայագրի հիման վրա փախստականներին շնորհվում էր երկիր մուտք գործելու հատուկ թույլտվություն:

Վստահաբար կարելի է փաստել, որ եթե Դիանա Աբգարի ներկայությունը չլիներ ճապոնիայում, ապա հարյուրավոր փախստականներ չէին կարողանա մուտք գործել այդ երկիր, և առավել ևս հնարավոր չէր լինի նրանց անվտանգ տեղափոխումը դեպի Ամերիկա և Եվրոպա: Այս հանգամանքը զալիս է ևս մեկ անգամ փաստելու նրա անզնահատելի դերը:

Խելացի, գործունյա և բարեշնորհ հայուհու մասին լուրերը վաղուց էին հասել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության Կառավարության ղեկավար կազմին: 1920 թվականին որոշում է ընդունվում նրան նշանակել ճապոնիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս:

Այստեղ է, որ մինչ օրս բախվում են տարբեր ասեկոսներ և տեսակետներ, թե արդյո՞ք Աբգարն աշխարհում առաջին կին դեսպանն է եղել, արդյո՞ք ճապոնիայի Կառավարությունը ընդունել է իր էկզեկվատուրան (նշանակման համաձայնությունը), արդյո՞ք ճապոնիայի Կառավարությունը դե ֆակտո ճանաչել է նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը: Այս հարցերի պատասխանները, թերևս, դեռ շատ են քննարկվելու:

Կարելի է ասել, որ Դիանա Աբգարն աշխարհում առաջին կինն է եղել, ով նշանակվել է հյուպատոս, բայց նրա էկզեկվատուրան այդպես էլ չի հաստատվել: Ըստ որոշ դիտարկումների՝ ճապոնիայի Կառավարությունը չի հաստատել կամ չի հասցրել հաստատել այն, քանի որ Հայաստանի առաջին Հանրապետությունը կարճ կյանք է ունեցել:

Խորապես համոզված եմ, որ այս նշանակումը նրա համար էական նշանակություն ունենալ չէր կարող: Իր հայրենամկեր կոչումն ու բնորոշումն ինքն արդեն ստացել էր իր ժողովրդից՝ վայելելով նրա փոխադարձ սերն ու հարգանքը: Անկախ ամեն կոչումից, նա կատարել է իր առաքելությունը՝ հայ զաղթականների համար դառնալով ՄԱՅՐ, վերցնելով իր հոգածության ներքո, ճանապարհելով նրանց դեպի ապահով վայր, ուր չկար բարբարոսություն, կրակ և մահ:

Ձարմանալիորեն, մեր հասարակությունում հայուհիները մշտապես արժևորվել են: Օրինակ, Հա-



յաստանի առաջին Հանրապետությունն առաջիններից էր, որտեղ կանայք ունեին ընտրելու իրավունք և ընդգրկված էին Ազգայի ժողովում: Նրանցից էին, օրինակ, Արամ Մանուկյանի կինը՝ Կատարինե Ջալյան-Մանուկյանը, Վարվառե Սահակյանը, Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանը: Այսպիսով, կարելի է փաստել, որ մեր «մորուքավոր» պատմության մեջ կան բացառիկ կանայք, ովքեր ճակատագրական պահերին մեծ դեր են ստանձնել և իրենց ուրույն հետքը թողել:

Անցյալ տարի աշնանը առիթ ունեցա հերթական անգամ այցելելու ճապոնիա՝ իմ սիրելի երկիր, որից լիցքավորված եմ վերադառնում յուրաքանչյուր այցելությունից հետո: Փոքրաթիվ է ճապոնահայ համայնքը, և բազմիցս էի լսել, որ տիկին Մելանյան, ով ՀՀ անկախացումից հետո առաջիններից է բնակություն հաստատել ճապոնիայում, հատուկ հոգատարությամբ է ընդունում իր հայրենակիցներին: Նախապես մտածել էի՝ ինչպես օգտվել իմ բաժին բոնուսից և նամակում նշել էի, որ շատ կցանկանայի այցելել Յոկոհամա՝ Դիանա Աբգարի շիրմին: Տիկին Մելանյայի ամուսինը՝ ազգությամբ ճապոնացի հայագետ Հիդեհարու Նակաջիման, մեծածավալ հետազոտություններ է կատարել, հայագիտական նյութեր, գրքեր հրապարակել, Յոկոհամայում գտել Դիանայի շիրմը, ներգրավել տեղի հայերին, նրա հրապարակումները պեղել տարբեր արխիվներից և ճապոնիայում թողարկել «Արարատ» պարբերականը՝ մինչ օրս միակ հարթակը, որը ճապոներենով ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, հայ-ճապոնական հարաբերությունների զարգացումները:

Անձրևտու օր էր, անհարմար էի զգում, որ նեղություն եմ պատճառելու: Շիբույա կայարանից Հաջի-

己丑秋
董素平



կոյին ողջունեցինք և շարժվեցինք Յոկոհամայի օտարերկրացիների գերեզմանատուն: Արահետը մեզ բերեց Դիանա Աբգարի և իր ընտանիքի անդամների շիրիմներին: Մինչ տիկին Մելանյայի հետ լուռ քայլում էինք, հիշեցի մշեցի իմ սիրելի տատիկին, ում շիրմին մինչ ճապոնիա մեկնելս էի այցելել և չգիտեմ ինչու մտովի իր հետ էի նաև այդ պահին: Երբ փոքր էի, միասին էինք այցելում մեր նախնիների շիրիմներին, նա ինձ միշտ ասում էր, որ պետք է ճանապարհը մտապահեմ, այլապես ամոթ կլինի, եթե մենակ գնամ ու չգտնեմ: Այդպես էլ վարվեցի Յոկոհամայում: Տիկին Մելանյան նախապես հոգացել էր ծաղկեփնջերի մասին: Անձրևն ավելի ուժգնացավ, և, կարծես, ինչ-որ խորհրդավորություն կար դրանում: Նման պահերին, հատկապես՝ վախ ներշնչող վայրերում, բնության արհավիրքներին յուրովի ես վերաբերվում: Ինչևէ, ես լավատես եմ, և կարծում եմ՝ մաքրություն բերեցի իմ ներկայությամբ, ...իսկ ազդավներին միշտ էլ բնորոշ է նման տարածքներում գտնվելը: Միայն երեկոյան պետք է հասկանալի այս խորհրդավորության պատահական չլինելը:

Յուրահատուկ լռություն կար, որում լսելի էին անգամ կաթիլների բուրբ կտկտոցները ֆիկուսների մեծ և հաստ տերևների վրա: Առաջինը, ինչն ինձ գրավեց, երբ ներս մտանք տարածք, խաչերն էին: Հասկանալի է, որ ճապոնիայում օտարերկրացիները հիմնականում եղել են քրիստոնյաներ: Այլ հայերի շիրիմներ էլ ընկան աչքովս. հավանաբար, առջևում նոր ուսումնասիրությունների թեմաներ կան: Մտովի հիշեցի համացանցի այն հայտնի նկարը՝ Դիանայի հուղարկավորությունից...

Ինքս ինձ խորհում էի, թե ինչ հզոր կին է եղել,

ծափահարություններով են ճանապարհել, իսկ հիմա, շուրջ մեկ դար անց իրեն այցելում է մի հայուհի՝ իր այրքան երազած ազատ ու անկախ Հայաստանից... Շուրջ մեկ դար անց, ես այստեղ եմ: Ինքս ինձ ոգևորում էի, թե որքան ճիշտ վարվեցի, որ եկա:

Դիանան այն լույսի շողերից է, որը հայ կնոջ կերպարը տանում է դեպի այլ բարձունքներ: Ուրախ եմ, որ 2019 թվականն արժևորվեց նրա մեծարմամբ. ծննդյան 160-ամյակի առթիվ Երևանի սրտում այգի անվանակոչվեց, վավերագրական ֆիլմ ցուցադրվեց՝ նկարահանված ծոռնուհու՝ Մինի Մալայանի ջանքերով, բազմաթիվ հողվածներ հրապարակվեցին, երգի տեսահոլովակ նկարահանվեց:

...Երեկոյան, երբ վերադարձա Տոկիո, լուրերից տեղեկացա, որ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում հոկտեմբերի 29-ին կայացած քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ ընդունվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը...

Հոգիս նորից փոթորկվեց, հիշեցի տատիս պատ-



մությունները Մուշի ջարդերի մասին, Դիանայի ֆիլմից տպավորված անիմացիան, թե ինչպես է նամակներ գրում, պատեր տեղաշարժում... Հաջորդ օրն առավոտյան, նորից Շիբույայում էի, ողջունեցի Հաչիկոյին և ոտքով շարժվեցի դեպի ճապոնիայում Թուրքիայի դեսպանություն, որի առջև առաջին անգամ բարձրացրեցի Հայաստանի դրոշը՝ հայալեզու գրությամբ:

ԱՆՆԱ ՎԱՐՎԱՆՅԱՆ
ՀՊՏԸ ֆինանսների ամբիոնի
ասիստենտ, տ.գ.թ., ճապոնագետ

Սիրելի ընթերցող, լրացուցիչ նյութերի կարող եք ծանոթանալ՝ անցնելով առաջարկվող հղումներով:
<https://www.youtube.com/watch?v=6RBG2bq6eBo&fbclid=IwAR2gYk2U4G84LH4bY6Gnv0ws2Opw47EQbOyvmRbTdlfZ00GETc2L6w2Lv8&app=desktop>
http://www.yerkir.am/news/view/188226.html?fbclid=IwAR1jciAulGHBlEj8AiUmYaQ3L4bObE9iVyPfywJJSrQq9I2kxqtXQR2_3c
http://womennet.am/%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A3%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BE%D5%B8/?fbclid=IwAR124qoeeUJ6qslnUscQ0orjlnW6MZxTOjYUvaCTYxaCcaqlhs-A6m_oAg
https://www.1tv.am/hy/video/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%AB%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%B5%D5%A3%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80/143180?fbclid=IwAR3sMAFsjNVYKoFyfWkLD9lQb_RBYCXqmolM9bO1FyGTTla4jh67JUS0iAc